Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

՝ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

բաց մրցույթ կազմակերպելու վերաբերյալ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ ԿԲ մրցութային հանձնաժողովի

2025թ.-ի դեկտեմբերի 18-ի թիվ 52 արձանագրությամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է բաց մրցույթ, որի պայմանները ներկայացված են կից Հրավերում:

Հրապարակման ամսաթիվ՝	**09.01.2026թ.**
Պատվիրատու՝	**ՀՀ կենտրոնական բանկ** Վազգեն Սարգսյան փ. 6, ք. Երևան, 0010, Հայաստան
Ընթացակարգի ծածկագիրը՝	**CBA-2026-001**
Ընթացակարգի նպատակը՝	**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՓԼ/ԱՖ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ և ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ**
Հրապարակման վայրը/Տեղեկագիր՝	**https://www.cba.am/am/SitePages/tenders.aspx**
Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝	մինչև **2026թ.-ի փետրվարի 19-ը, ժամը՝ 16:00-ն** (GMT+4)
Հայտերի ներկայացման եղանակը՝	Էլեկտրոնային, ուղարկել **CBA-2026-001@cba.am** էլ. հասցեին
Հրավերի պարզաբանման հարցման վերջնաժամկետ՝	մինչև **2026թ.-ի փետրվարի 13-ը, ժամը՝ 16:00-ը (GMT+4)**
Հայտերի բացման նիստ՝	**2026թ.-ի փետրվարի 19, ժամը՝ 16:00 (GMT+4)**
Հայտերի ամփոփման նիստ՝	**2026թ.-ի մարտի 5, ժամը՝ 16:00 (GMT+4)**
Մրցույթի կազմակերպիչ՝	ՀՀ Կենտրոնական բանկ, Գնումների համակարգման ծառայություն
Հաղորդակցման եղանակ՝	Միայն գրավոր, էլ. փոստ՝ **procurement@cba.am**

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար՝ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիթորինգի իրականացման գործընթացների ավտոմատացման համակարգի մատակարարման և ներդրման, ինչպես նաև համակարգի տեխնիկական աջակցման և սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր:

ОБЪЯВЛЕНИЕ

об организации открытого тендера

Настоящий текст объявления утвержден конкурсной комиссией Центрального банка Армении. Протоколом № 52 от 18 декабря 2025г.

Центральный банк Республики Армения объявляет открытый тендер, условия которого представлены в прилагаемом Приглашении.

Дата публикации:	**09.01.2026г.**
Заказчик:	**Центральный Банк РА** Вазген Саргсян ул., 6, Армения, 0010, Ереван
Код конкурса:	**CBA-2026-001**
Цель конкурса:	**ПРИОБРЕТЕНИЕ СИСТЕМЫ АВТОМАТИЗАЦИИ ПРОЦЕССОВ ОЦЕНКИ И МОНИТОРИНГА РИСКОВ СООТВЕТСТВИЯ ТРЕБОВАНИЯМ ПОД/ФТ И САНКЦИОННОГО КОМПЛАЕНСА, А ТАКЖЕ УСЛУГ ПО ТЕХНИЧЕСКОЙ ПОДДЕРЖКЕ И ОБСЛУЖИВАНИЮ СИСТЕМЫ ДЛЯ НУЖД ЦЕНТРАЛЬНОГО БАНКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**
Место публикации:	**https://www.cba.am/ru/sitepages/tenders.aspx**
Срок подачи заявок:	**до 19 февраля 2026 г., 16:00 (GMT+4)**
Способ подачи заявки:	По электронной почте на **CBA-2026-001@cba.am** эл. адрес
Срок предоставления разъяснений по тендерной документации:	**до 13 февраля 2026 г., 16:00 (GMT+4)**
Дата открытия заявок:	**19 февраля 2026 г., 16:00 (GMT+4)**
Объявление о заключении контракта:	**5 марта 2026 г., 16:00 (GMT+4)**
Организатор конкурса:	Центральный Банк РА, Служба координации закупок
Способ коммуникации:	В письменной форме, только по электронной почте. Электронная почта: **procurement@cba.am**

В результате данной процедуры выбранному участнику будет предложено заключить договор на Договор на поставку и внедрение системы автоматизации процессов оценки и мониторинга рисков соответствия требованиям ПОД/ФТ и санкций, а также на оказание услуг по технической поддержке и обслуживанию системы для нужд Центрального банка РА.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ
Առաջարկների ներկայացման հարցում

ՓԼ/ԱՖ և ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ և ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Վազգեն Սարգսյան փող., 6, Հայաստան,
0010, Երևան
Հեռ.՝ +374 10 592 592, www.cba.am

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

ПРИГЛАШЕНИЕ К УЧАСТИЮ В ОТКРЫТОМ ТЕНДЕРЕ

Запрос предложений

НА ЗАКУПКУ СИСТЕМЫ АВТОМАТИЗАЦИИ ПРОЦЕССОВ ОЦЕНКИ И МОНИТОРИНГА РИСКОВ СООТВЕТСТВИЯ В СФЕРЕ ПОД/ФТ И САНКЦИЙ, А ТАКЖЕ НА ОКАЗАНИЕ УСЛУГ ПО ТЕХНИЧЕСКОЙ ПОДДЕРЖКЕ И СОПРОВОЖДЕНИЮ СИСТЕМЫ ДЛЯ НУЖД ЦЕНТРАЛЬНОГО БАНКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Վազգեն Սարգսյան փող., 6, Հայաստան,
0010, Երևան
Հեռ.՝ +374 10 592 592, www.cba.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 1
2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ 1
3. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ 5
4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ 8
5. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ 10
6. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՄՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ 11
7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 16
8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 18
9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ 20
10. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ 21
11. ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 22
Հավելված 1 23
Հավելված 2 236
Հավելված 2.1 239
Հավելված 3 243
Հավելված 3.1 246
Հավելված 3.2 247
Հավելված 4 248
Հավելված 5 249
Հավելված 6 250

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն CBA-2026-001 ծածկագրով անցկացվող Բաց մրցույթի (այսուհետ՝ նաև ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է ՀՀ օրենսդրության, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Սույն ընթացակարգի շրջանակներում հետագա 5 տարիների ընթացքում համակարգի տեխնիկական սպասարկման և աջակցության ծառայությունների մատուցումը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:

Պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր հաջորդող ֆինանսական տարվա ընթացքում ծառայությունների մատուցումը և դրանց դիմաց վճարումների իրականացումը պայմանավորված է համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման հետ:

Եթե համապատասխան Ֆինանսական միջոցների հատկացումը հաստատվում է, պայմանագիրը շարունակում է գործել, իսկ եթե չի հաստատվում, Պատվիրատուն պարտավորվում է այդ մասին նախապես՝ պայմանագրով սահմանված ժամկետում, գրավոր ծանուցել Մատակարարին: Այդ դեպքում Մատակարարը պարտավոր չէ մատուցել ծառայություններ, իսկ Պատվիրատուն՝ վճարել դրանց դիմաց:

Ֆինանսական միջոցների չհատկացման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Պայմանագրի կատարումը:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պատվիրատուն **իրավունք ունի պայմանագիր կնքելիս հաշվի չառնել առաջարկում նշված ցանկացած պայման** (կամ այլ տվյալ/տեղեկատվություն), որը **ուղղակիորեն նախատեսված չէ սույն Հրավերում**:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը քննվում և լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ «siran.yeganyan@cba.am»:

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև Բանկ կամ Պատվիրատու) կարիքների համար՝ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիթորինգի իրականացման գործընթացների ավտոմատացման համակարգի և համակարգի տեխնիկական աջակցման և սպասարկման ծառայությունների (այսուհետ՝ նաև Ապրանք) ձեռքբերումը:

Սույն առաջարկների ներկայացման հարցման շրջանակում Բանկը նպատակ ունի ներգրավել փորձառու և կարողունակ ընկերություններ՝ ՓԼ/ԱՖ և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի արդյունավետ նույնականացման, գնահատման և կառավարման համար նախատեսված համալիր ծրագրային լուծում տրամադրելու նպատակով, ներառյալ համակարգի ներդրումը, գործարկումը, ուսուցումը, ինչպես նաև ներդրումից հետո շարունակական տեխնիկական աջակցման և սպասարկման ծառայությունների մատուցումը:

Սույն ընթացակարգով գնումն իրականացվում է ընդհանուր 1 (մեկ) չափաբաժնով:

Հավելված 1-ով ներկայացված Տեխնիկական առաջադրանքը հանդիսանում է սույն առաջարկների ներկայացման հարցման անբաժանելի մասը և սահմանում է լուծմանը ներկայացվող նվազագույն տեխնիկական, ֆունկցիոնալ, ոչ ֆունկցիոնալ և անվտանգության պահանջները: Տեխնիկական առաջադրանքով սահմանված բոլոր պահանջները պետք է ամբողջությամբ արտացոլված լինեն մասնակցի առաջարկում: Նշված պահանջները ներառվում են պայմանագրում և կարգավորում են պայմանագրի կատարումը:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2.1. Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ

կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

3) որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ,

4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն կետով նախատեսված պայմանը չի գործում միջազգային պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին կատարվելիք գնման գործընթացների նկատմամբ,

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

- խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,
- որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

2.2. Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված

գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.3. Մասնակցի՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 5-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

2.4. Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության (ՀԳ) կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

2.5. Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է պայմանագրի ապահովում՝ սույն հրավերով սահմանված կարգով և չափով:

Պատվիրատուն կարող է հրաժարվել պայմանագրի կատարման ապահովման պահանջից, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:

2.6. Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է համատեղ գործունեության պայմանագիր,

2) համատեղ գործունեության մասնակիցները պետք է նշանակեն լիազորված ներկայացուցիչ, ով մրցույթի ընթացքում, իսկ համատեղ գործունեության կողմից պայմանագիր կնքվելու դեպքում՝ նաև պայմանագրի կատարման ընթացքում պետք է ունենա բոլոր գործարքներն ու գործողությունները համատեղ

գործունեության բոլոր անդամների անունից և նրանց փոխարեն իրականացնելու իրավասություն,

3) հայտը ստորագրվում է համատեղ գործունեության լիազորված ներկայացուցչի կողմից՝ համատեղ գործունեության անունից, և ունենա իրավաբանական պարտադիր ուժ համատեղ գործունեության բոլոր անդամների համար, ինչը հաստատվում է նրանց իրավասու ներկայացուցիչների կողմից ստորագրված լիազորագրով,

4) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

5) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները.

6) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր): Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը:

2.7. Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար բավարար փորձառություն, տեխնիկական կարողություններ և ռեսուրսներ: Մասնակցության և որակավորման չափանիշները սահմանված են սույն Հրավերի Հավելված 1-ով ներկայացված Տեխնիկական առաջադրանքում: Հետագա գնահատման փուլում կներառվեն միայն այն առաջարկները, որոնք բավարարում են ստորև նշված նվազագույն որակավորման պահանջներին.

2.7.1. **«Մասնագիտական փորձառություն»** չափանիշը գնահատվում է հետևյալ կերպ.

- առնվազն 3 (երեք) տարվա փորձ՝ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման գործընթացների ավտոմատացման, ինչպես նաև առաջադեմ վերահսկողական տեխնոլոգիաների (SupTech) լուծումների ներդրման ոլորտում՝ որպես գրանցված ընկերություն/կազմակերպություն: Նմանատիպ համակարգերի հաջողված ներդրման փորձ այլ կարգավորող մարմիններում՝

համապատասխանեցված պահանջվող չափանիշներին (օրինակ՝ FATF 40 Recommendations):

2.7.2. «**Աշխատանքային ռեսուրսներ**» չափանիշը գնահատվում է հետևյալ կերպ.

- առնվազն 5 (հինգ) տարվա համապատասխան մասնագիտական փորձ ունեցող նախագծային թիմի առկայություն, նմանատիպ նախագծերի հաջող իրականացման մեջ մասնակցությամբ, ինչպես նաև ՓԼ/ԱՖ համապատասխանության, կարգավորող հաշվետվությունների, ծրագրային ապահովման ինտեգրման և կիբերանվտանգության ոլորտներում փորձառությամբ, ինչը կապահովի Պայմանագրով սահմանված նպատակների ժամանակին և բարձր որակով իրականացումը:

3. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը Հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

3.2. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ, բացառությամբ սույն հրավերի 3.9 և 5.7 կետերով նախատեսված հայտի փոփոխում ներկայացնելու դեպքերի:

3.3. Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Հանձնաժողովին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունում նշված հայտերի ընդունման վերջնաժամկետը:

3.4. Ընթացակարգի հայտը մասնակիցը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով՝ CBA-2026-001@cba.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

Անհրաժեշտ է կցել բնօրինակի փաստաթղթերից արտատպված (սկանավորված) տարբերակները կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ PDF տարբերակները:

3.5. Սույն ընթացակարգի դեպքում հայտերը ներկայացվում են հայերեն կամ անգլերեն:

3.6. Էլեկտրոնային եղանակով հայտ ներկայացնելիս պարտադիր պետք է պահպանել հետևյալ կանոնները.

- նամակի «Վերնագիր» /Subject line/ դաշտում պետք է նշել միայն ընթացակարգի ծածկագիրը «CBA-2026-001»,

- հայտը կցել **PDF ֆորմատ** ունեցող ֆայլով՝ որպես մեկ ամբողջական փաստաթուղթ, պահպանելով սույն հրավերի 3.10 կետով պահանջվող փաստաթղթերի հերթականությունը:
- Կից ֆայլը չպետք է ուղարկվի որպես հղում /Google drive link, .rar և այլն/,
- յուրաքանչյուր էլեկտրոնային նամակի համար պետք է պահպանել 25 մեգաբայթ (ՄԲ) ծավալը: Մասնակիցը պատասխանատու է նշված սահմանափակման ապահովման համար:
- այն դեպքում, երբ մեկ էլեկտրոնային նամակը գերազանցում է ֆայլի չափի նշված սահմանաչափը, Մասնակիցները հնարավորություն ունեն իրենց հայտը բաժանել մի քանի առանձին էլեկտրոնային նամակների: Յուրաքանչյուր էլեկտրոնային նամակ պետք է պարունակի հայտի բովանդակության մի մասը, և յուրաքանչյուր էլեկտրոնային նամակում պետք է շարադրվի հետևյալ հաջորդական հղումը **(օրինակ՝ «Մաս 1՝ 3-ից», «Մաս 2՝ 3-ից» և այլն)**:
- կցվող ֆայլերը նախորոք պետք է ստուգել հակավիրուսային համակարգով,
- նամակի «Բովանդակություն» /e-mail body/ դաշտում պետք է լինի միայն պարզ տեքստ և չպարունակի որևէ հղում /link/,

Սույն կանոնների ոչ լիարժեք պահպանման դեպքում հայտը կարող է վիրուսների ստուգման ծրագրի կողմից ընկալվել որպես վիրուս և չհասնել Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին, որի համար Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում:

Սույն կանոնների ոչ լիարժեք պահպանումը կարող է հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Առաջարկվում է հայտն ուղարկել սույն հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց մեկ-երկու ժամ շուտ, տեխնիկական խնդիրներից խուսափելու նպատակով:

Որպես հայտի ստացման հավաստիացում, մասնակցին ավտոմատ կուղարկվի պատասխան էլ. նամակ:

3.7. Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում էլեկտրոնային փոստով ուղարկված հայտերի՝ վերջնաժամկետից ուշ ստանալու համար:

3.8. Սույն հրավերի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանող հայտերը Հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է:

3.9. Մասնակիցները՝ մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը, կարող են փոփոխել կամ հետ կանչել հայտերը՝

- Հայտի փոփոխության դեպքում նոր փոփոխված հայտը պետք է ուղարկել 3.5 կետում նշված էլ. փոստի հասցեին սույն մասով սահմանված կարգով՝ նամակի «Վերնագիր» /Subject line/ դաշտում ավելացնելով «հայտի փոփոխություն» բառը:
- Մասնակցությունից հրաժարվելու դեպքում հայտը չեղարկելու մասին ծանուցումը պետք է ուղարկել **procurement@cba.am** էլեկտրոնային հասցեին:

3.10. **Մասնակիցը հայտով ներկայացնում է՝**

1) իր կողմից հաստատված՝ դիմում-հայտարարություն ըստ սույն հրավերին կից Հավելված 2-ի, որը ներառում է՝

   ա) հավաստում՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին.

   բ) հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

   գ) հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

   դ) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ ըստ սույն հրավերին կից Հավելված 2.1-ի: Հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է:

2) հայտի ապահովումը հավաստող փաստաթուղթ,

3) գնային առաջարկ՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 3-ի,**

4) գնային առաջարկի բացվածք՝ սույն Հրավերի **Հավելված 3.1-ի և 3.2-ի,** ներառյալ վճարման պայմաններն ու դրույթները

5) տեխնիկական առաջարկ, ներառյալ առաջարկվող լուծման մանրամասն նկարագրությունը՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 4-ի**,

6) ընկերության պորտֆելը՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 5-ի,**

7) կազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 6-ի**,

8) սույն Հրավերի Տեխնիկական առաջադրանքով սահմանված ցանկացած այլ օժանդակ փաստաթուղթ և տեղեկատվություն, ներառյալ այն փաստաթղթերը, որոնք հաստատում են մասնակցի կարողությունները, փորձառությունը կամ այլ որակավորումները, որոնք հիմնավորում են նրա առաջարկը,

9) պայմանագրի նախագիծ՝ ներառյալ հիմնական պայմանները, դրույթները, պատասխանատվությունները և այլ համապատասխան դրույթներ (առկայության դեպքում):

4. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

4.1. Առաջարկվող գինը՝ նախագծի արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

4.2. Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է յուրաքանչյուր չափաբաժնի համար արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

4.3. Մասնակիցը գնային առաջարկին կից ներկայացնում է տվյալ չափաբաժնում ներառված յուրաքանչյուր ապրանքի գնի մանրամասն բացվածքը:

4.4. Մասնակիցների գնային առաջարկների (Հավելված 3) գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն գլխում նշված հարկի գումարի հաշվարկման:

Մասնակցի գնային առաջարկի գնահատման ընթացքում հաշվի են առնվում էական և ոչ էական շեղումները: Առաջարկը չի մերժվում ոչ էական շեղումների առկայության դեպքում: Ոչ էական շեղումներ են համարվում, սակայն չեն սահմանափակվում, հետևյալ դեպքերը.

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված

գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյուներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյուներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող կամ սխալ թիվ: Այս դեպքում գնահատող Հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյուներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյուներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

4.5. Առաջարկը ենթակա է մերժման, եթե այն պարունակում է էական շեղում, որը ազդում է մասնակցի կողմից առաջարկված փաստացի գնի վրա, և ստեղծում է գնի միանշանակ որոշման երկիմաստություն, կամ կարող է ազդել առաջարկների մրցակցային գնահատման արդյունքների վրա:

4.6. Հավելված 3-ին համապատասխան գնային առաջարկ փաստաթուղթը շտկման ենթակա չէ :

4.7. Գնային առաջարկը ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակցի կողմից կարող է ներկայացվել ԱՄՆ դոլարով կամ եվրոյով: Այս դեպքում գնահատման և համեմատության նպատակով արտարժույթով գնային առաջարկը փոխարկվում է ՀՀ դրամի՝ ՀՀ Կենտրոնական բանկի «**www.cba.am**» պաշտոնական կայքում հայտերի բացման օրվա դրությամբ հրապարակված փոխարժեքով: Ընդ որում, պայմանագիրը կկնքվի առաջարկում ներկայացված նույն արժույթով:

4.8. ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում առաջանում է շահութահարկ, որի դրույքաչափը կազմում է պայմանագրի գնի քսան (20) տոկոսը և ենթակա է վճարման Պատվիրատուի կողմից: Շահութահարկի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ Պատվիրատուի և Մասնակցի երկրների միջև կրկնակի հարկումը բացառելու

համապատասխան համաձայնագրի առկայության դեպքում, որի վերաբերյալ ընտրված մասնակիցը պայմանագրի ստորագրման օրվանից տասն (10) օրվա ընթացքում ներկայացնում է իր երկրի հարկային մարմնի կողմից տրված ռեզիդենտության վկայական:

4.9. Եթե տվյալ մատակարարի համար առաջանում է շահութահարկի վճարման պարտավորություն, ապա գնային առաջարկների համեմատությունն իրականացվում է՝ այդ հարկը ներառած ընդհանուր արժեքով:

5. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Մասնակիցն իրավունք ունի ոչ ուշ, քան սույն Հրավերով սահմանված պարզաբանման հարցումների վերջնաժամկետը Հանձնաժողովից գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում՝ հարցում ուղարկելով procurement@cba.am էլեկտրոնային հասցեին:

5.2. Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

5.3. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է «www.cba.am» կայքի «Մրցույթներ բաժնում»՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

5.4. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն մասով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից, կամ հարցման պարզաբանումը պետական գաղտնիքի հրապարակման վտանգ է պարունակում:

5.5. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք տեխնիկական բնութագրերի՝ սույն հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

5.6. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում «www.cba.am» կայքի «Մրցույթներ բաժնում»: Ընդ որում, հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին հայտարարության հրապարակման օրվանից:

5.7. Հրավերում փոփոխություն կատարելու դեպքում մասնակիցներն իրավունք ունեն սույն հրավերով սահմանված կարգով հայտերում կատարել փոփոխություններ: Պատվիրատուն հրավերի պայմանների փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:

6. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՄՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

6.1. Հայտերի բացման Հանձնաժողովի նիստը հրավիրվում է ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6 հասցեով, Հայտարարությունում նշված հայտերի բացման օրը և ժամին:

6.2. Հայտերի բացման նիստում Հանձնաժողովը գնահատում է՝

- էլեկտրոնային եղանակով հայտեր կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին,
- յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

6.3. Հանձնաժողովի քարտուղարը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածքը:

6.4. Հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6 հասցեով, Հայտարարությունում նշված հայտերի ամփոփման օրը և ժամին:

6.5. Հանձնաժողովը կարող է փոփոխել հայտերի ամփոփման նիստի օրը և ժամը՝ այդ մասին ծանուցելով մասնակիցներին:

6.6. Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

6.7. Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում, Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները կամ ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

6.8. Հայտերի գնահատումն իրականացվում է **գնային և ոչ գնային չափանիշների** հիման վրա: **Ոչ գնային չափանիշների կշիռը 70% է** և ներառում է մասնակցի **որակավորման**

չափանիշների համապատասխանության և տեխնիկական առաջարկի գնահատումը: Գնային առաջարկի կշիռը կազմում է **30%**: Պայմանագրի կնքման չափանիշ է ոչ գնային և գնային չափանիշների կշիռների ամենաբարձր համակցված միավորը:

6.9. **Համեմատվում են բոլոր այն մասնակիցների գնային առաջարկները, որոնք տեխնիկական գնահատման արդյունքում 100 միավորից կհավաքեն նվազագույնը 70 միավոր:**

Ստորև աղյուսակում ներկայացված է տրված **տեխնիկական և որակավորման չափանիշների բաշխումը**: Գնահատման ժամանակ յուրաքանչյուր հայտին տրված Ընդհանուր տեխնիկական միավորը որոշվում է՝ գումարելով և կշռելով Առաջարկի տեխնիկական հատկանիշներին տրված միավորները՝ ստորև ներկայացված չափորոշիչներին համապատասխան:

Տեխնիկական և որակավորման չափանիշների գնահատում գնահատման հիմնական ուղղությունների համառոտ ներկայացում	**Կշիռ (%)**	**Առավելագույն միավոր**
Տեխնիկական առաջարկի գնահատում	70	
Ֆունկցիոնալ և մեթոդաբանական համապատասխանություն, Նորարարության աստիճան		**30**
• Համապատասխանություն տեխնիկական առաջադրանքի մեթոդաբանությանը և միջազգային ՓԼ/ԱՖ (օր.՝ FATF) շրջանակներին:		20
• Օգտագործողի միջերեսի (UI/UX) մատչելիություն, հեշտ նավիգացիա և վահանակների արդյունավետություն (Հայերեն լեզվով հասանելիությունը և/կամ WCAG 2.1-ին համապատասխանությունը կդիտվի առավելություն)		5
• Իրագործման ճանապարհային քարտեզ և մանրամասն իրագործման ծրագիր՝ հստակ ժամանակացույցով:		5
Ենթակառուցվածքներ և ծրագրային տեխնոլոգիական ապահովում		**20**
• Համակարգի անվտանգության համապատասխանություն ISO 27001 պահանջների շրջանակին և աղետի վերականգնման մեխանիզմներ, բարձր հասանելիություն (կրկնօրինակում և վերականգնում)		10

• Գործող ենթակառուցվածքների/էկոհամակարգերի հետ առավելագույն համատեղելիություն		5
• Երաշխիքային և տեխնիկական աջակցման ու սպասարկման պայմաններ		5
Մատակարարի փորձառություն և արդյունաբերության վարկանիշ		**20**
• Առնվազն 3 տարվա փորձ ՓԼ/ԱՖ հետ կապված վերահսկողական տեխնոլոգիաներում(SupTech) կամ ֆինանսական կարգավորման ՏՀՏ լուծումներում, ՓԼ/ԱՖ կարգավորող նախագծերի հաջող իրականացում տարբեր իրավասությունների կարգավորող մարմիններում (նախընտրելի է cross-border փորձառություն)		16
• Վստահելի գործընկերոջ հավաստագրեր / երաշխավորագրեր		4
Հիմնական անձնակազմի փորձառություն և լուծման ներդրման թիմի հմտություններ		**10**
• Անձնակազմի համապատասխանության/որակավորման հավաքական գնահատական		10
Ուսուցում և ուսումնական նյութեր		**10**
• Ուսուցման մոտեցումը և ուսումնական նյութեր		10
Համակարգի պրեզենտացիա		**10**
• Համակարգի ֆունկցիոնալության համապարփակ և մանրամասն պրեզենտացիա/ներկայացում		10
Տեխնիկական մասով ընդհանուր միավորներ		100

6.10. Սույն մեթոդաբանության համաձայն՝ ֆինանսական չափանիշի կշիռը կազմում է 30%: Գնային առաջարկին հատկացված առավելագույն միավորները տրվում են ամենացածր գնային առաջարկին: Բոլոր մյուս գնային առաջարկները միավորներ են ստանում հակադարձ համամասնությամբ: Բանաձևը ներկայացված է ստորև.

$$P = y\ (p/z),$$

որտեղ՝

p = գնահատվող գնային առաջարկի միավոր,
y = գնային առաջարկի համար միավորների առավելագույն կշիռ,
p = ներկայացված առաջարկներից ամենացածր (NPV) զուտ ներկա արժեքը,
z = գնահատվող առաջարկի (NPV) զուտ ներկա արժեքը:

Գնային առաջարկների համեմատության ընթացքում գնահատվում է ոչ միայն առաջարկված գինը, այլ նաև յուրաքանչյուր առաջարկի զուտ ներկա արժեքը (Net Present Value, NPV)՝ հաշվի առնելով պայմանագրի ընթացքում ենթադրվող բոլոր վճարները: Ներկայացված արժեքը հաշվարկվում է պատվիրատուի կողմից սահմանված զեղչման գործակցով:

Ընդ որում, Հանձնաժողովի կողմից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 4.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

6.11. Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին: Համակցված ընդհանուր միավորների հավասար լինելու դեպքում՝

ա. համապատասխան մասնակիցների հետ իրականացվում են միաժամանակյա բանակցություններ՝ գնի նվազեցման և ընտրված մասնակցի որոշման նպատակով,

բ. Հանձնաժողովի քարտուղարը համապատասխան մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցում է բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունների արդյունքում ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոշվում և հայտարարվում են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցները: Եթե բանակցությունների արդյունքում մասնակիցների համակցված միավորները շարունակում են մնալ հավասար, նախապատվությունը տրվում է ավելի ցածր գին առաջարկած մասնակցի առաջարկին:

6.12. Եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են նախահաշվային արժեքը, ապա Հանձնաժողովը կարող է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, կամ ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող

չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

6.13. Եթե հայտերի գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա Հանձնաժողովի քարտուղարը այդ մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունը:

6.14. Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

6.15. Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին, եթե Հանձնաժողովի գործունեության ընթացքում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը սույն ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա սույն ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը անհապաղ ինքնաբացարկ է հայտնում սույն ընթացակարգից:

6.16. Հայտերը բացվելուց և ամփոփվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ Օրենքով սահմանված կարգով: Արձանագրությունն ստորագրում են Հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

6.17. Մասնակիցը և/կամ նրա ներկայացուցիչը կարող է ներկա գտնվել հայտերի բացման և ամփոփման Հանձնաժողովի նիստերին՝ **նախապես առնվազն մեկ օր շուտ** տեղեկացնելով Գնումների համակարգման ծառայությանը procurement@cba.am էլ.հասցեով՝ նշելով անուն, ազգանուն, կազմակերպության անվանում: Մասնակիցն իր հետ պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ, իսկ նրա ներկայացուցիչը՝ նաև լիազորագիր: Մասնակիցները կարող են պահանջել Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են 1 (մեկ) օրացուցային օրվա ընթացքում:

6.18. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

6.19. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում Հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

6.20. Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

6.21. Մինչև պայմանագիր կնքելը Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7.1. Մասնակիցը հայտով՝ հրավերով նախատեսված դեպքում ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով նախագծի իրականացման (ներդրման) առաջարկվող գնի 2 (երկու) տոկոսին:

7.2. հայտի ապահովումը ներկայացվում է՝

- կանխիկ փողի, կամ
- բանկային երաշխիքի ձևով, որը պետք է վավեր լինի հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրվանից հաշված առնվազն 90 աշխատանքային օր,

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Պատվիրատուի անվամբ բացված **N 103001702119** հաշվին (Նպատակը նշելով՝ **Հայտի ապահովում – «ընթացակարգի ծածկագիր»):**

ԱՄՆ դոլարի դեպքում - Սեփականատիրոջ Բանկը՝ JPMorgan Chase Bank, NY

SWIFT կոդ: CHASUS33

Սեփականատեր՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ

Հաշվեհամար՝ No:001-1-010782

SWIFT (BIC) կոդ: CBRAAM22

Եվրոյի դեպքում - Սեփականատիրոջ Բանկը՝ Commerzbank, Frankfurt, Germany

SWIFT կոդ: COBADEFF

Սեփականատեր՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ

Հաշվեհամար՝ Acc. No: 400886424101

SWIFT (BIC) կոդ: CBRAAM22

7.3. Բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովումը պետք է տրամադրվի խորհրդատվական (Advising) բանկին թողարկող բանկի կողմից վավերացված (authenticated) SWIFT հաղորդագրությամբ, ՝ համաձայնեցված վերջնաժամկետից ոչ ուշ: Երաշխիքը պահանջի դեպքում ներկայացվում է նաև թղթային տարբերակով: Բացի այդ, կարող է ներկայացվել նաև բնօրինակ երաշխիքի սկանավորված պատճենը:

7.4. Հայտի ապահովումը վերադարձվում է պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում հայտի ապահովումը վերադարձվում է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկային երաշխիքի դեպքում Պատվիրատուն սույն կետով հայտի ապահովման վերադարձի համար սահմանված ժամկետներում վավերացված SWIFT հաղորդագրությամբ ազատում է երաշխիքը:

7.5. Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բանկային երաշխիքի դեպքում Պատվիրատուն **երաշխիքի վճարման պահանջը ներկայացնում է թողարկող բանկին վավերացված SWIFT հաղորդագրությամբ՝**

երաշխիքի վճարման հիմք առաջանալու օրվանից հետո **5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում**, սակայն ոչ ուշ, քան երաշխիքի գործողության ժամկետի ավարտը:

7.6. Այն դեպքում, երբ բանկերը չունեն միմյանց հետ RMA Exchange, վավերացված SWIFT հաղորդագրության ուղարկման համար օգտագործվում են երրորդ բանկ (correspondent bank): Երաշխիքի թողարկման, փոխանցման և հաստատման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ միջնորդ բանկերի ծառայությունների վճարները, կրում է մասնակիցը:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

8.1 Պայմանագրի ապահովումը ներկայացնելու պահանջի հիման վրա, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում, բանկային երաշխիքի ձևով՝ ծանուցումն ստանալու օրվանից 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ կանխիկ փողի ձևով՝ ծանուցումն ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.2 Պայմանագրի ապահովման չափը կազմում է համակարգի իրականացման (ներդրման) ժամանակահատվածի համար նախատեսված համակարգի իրականացման ծախսերի 10 (տասը) տոկոսը: Ապահովման վերջնական պայմանները քննարկվում և համաձայնեցվում են ընտրված մասնակցի հետ: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Բանկային երաշխիքը պետք է վավեր լինի առնվազն մինչև համակարգի վերջնական հանձնման-ընդունման ակտի օրվանից հետո 90-րդ աշխատանքային օրը:

- Բանկային երաշխիքի տեսքով պայմանագրի ապահովման ներկայացման դեպքում, այն պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ նախքան պայմանագրի ստորագրումը: Բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը պետք է տրամադրվի Պատվիրատուին թողարկող բանկի կողմից վավերացված (authenticated) SWIFT հաղորդագրությամբ՝ համաձայնեցված վերջնաժամկետից ոչ ուշ: Երաշխիքը պահանջի դեպքում ներկայացվում է նաև թղթային տարբերակով: Բացի այդ, կարող է ներկայացվել նաև բնօրինակ երաշխիքի սկանավորված պատճենը: Այն դեպքում, երբ բանկերը չունեն միմյանց հետ RMA Exchange, վավերացված SWIFT հաղորդագրության ուղարկման համար օգտագործվում են երրորդ բանկ (correspondent bank): Երաշխիքի թողարկման, փոխանցման և հաստատման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ միջնորդ բանկերի ծառայությունների վճարները, կրում է մասնակիցը:

- Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Պատվիրատուի անվամբ բացված **N 103001702119** հաշվին **(Նպատակ դաշտում պետք է նշել մրցույթի ծածկագիրը)**:

ԱՄՆ դոլարի դեպքում - Սեփականատիրոջ Բանկը՝ JPMorgan Chase Bank, NY
SWIFT կոդ: CHASUS33
Սեփականատեր՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ
Հաշվեհամար՝ No: 001-1-010782
SWIFT (BIC) կոդ: CBRAAM22

Եվրոյի դեպքում - Սեփականատիրոջ Բանկը՝ Commerzbank, Frankfurt, Germany
SWIFT կոդ: COBADEFF
Սեփականատեր՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ
Հաշվեհամար՝ Acc. No: 400886424101
SWIFT (BIC) կոդ: CBRAAM22

8.3 Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովումը:

8.4 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և/կամ պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

8.5 Բանկային երաշխիքի դեպքում, Պատվիրատուն պայմանագրի ապահովման վճարման պահանջը բանկին ներկայացնում է թողարկող բանկին վավերացված (authenticated) SWIFT հաղորդագրությամբ՝ ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան երաշխիքի գործողության ժամկետի ավարտը: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը Պատվիրատուն գրավոր ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

8.6 Պատվիրատուն պայմանագրի ապահովումը վերադարձնում է հետևյալ կարգով.

- բանկային երաշխիքի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ երաշխիքը թողարկած բանկին՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,

- Կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումը վերադարձվում է վերջնական ընդունման-հանձնման ակտը հաստատելու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում նաև կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով, որը պետք է վավեր լինի առնվազն մինչև համակարգի վերջնական հանձնման-ընդունման ակտի օրվանից հետո 90-րդ աշխատանքային օրը:

8.8 Պատվիրատուն կանխավճարի ապահովման վերադարձման մասին գրավոր տեղեկացնում է երաշխիքը թողարկած բանկին՝ ապահովման վերադարձման հիմքը առաջանալու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.9 Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով:

8.10 Բոլոր բանկային երաշխիքները պետք է լինեն անվերապահորեն տրամադրված և անհետկանչելի, և թողարկված լինեն Պատվիրատուի հետ համաձայնեցված բանկի կողմից:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1. Պայմանագիր կնքվում է Հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից:

9.2. Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 10 (տասը) օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

9.3. Սույն հրավերի 9.2 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ էլեկտրոնային եղանակով ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, որում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 9.2 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը:

9.4. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ սույն հրավերի 8.1 և 8.3 կետով նախատեսված ժամկետում չի հաստատում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և/կամ

որակավորման ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը Պատվիրատուին ներկայացվում է գրավոր: Պատվիրատուի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում և հաջորդող աշխատանքային օրը տրամադրվում է ընտրված մասնակցին ստորագրման: Ընտրված մասնակիցը հաջորդող 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված պայմանագիրը տրամադրում է Պատվիրատուին: Պատվիրատուն դրան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է պայմանագիրը և մասնակցին տրամադրում իր օրինակը:

9.5. Մինչև սույն հրավերի 9.4 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի էական փոփոխմանը, կանխավճարի չափի կամ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.6. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

10. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1. Հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- ոչ մի հայտ չի ներկայացվել,
- հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին,
- դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը,
- պայմանագիր չի կնքվում:

10.2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

11. ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

11.1. Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով:

11.2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները:

11.3. Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Հավելված 1

CBA-2026-001ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Չափա-բաժնի համար	Անվանումը	Տեխնիկական բնութագիր	Գնման գին ՀՀ դրամ
1.	**ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիթորինգի իրականացման գործընթացների ավտոմատացման համակարգի և համակարգի տեխնիկական և աջակցման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում**	Ներկայացված է կից	249,304,935 (Համակարգի իրականացման ժամանակահատվածի համար)

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ նաև Բանկ կամ ՀՀ ԿԲ) պետական գործառույթներով լիազորված իրավաբանական անձ է: Բանկի առաջնային նպատակներն են՝ ապահովել գների կայունությունը և ֆինանսական կայունությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի: ՀՀ ԿԲ-ն հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագիրը, կարգավորում և վերահսկում է ֆինանսական համակարգը, վերահսկողություն է իրականացնում վճարային համակարգի նկատմամբ, ապահովում է ազգային արժույթի թողարկումը և դրա շրջանառությունը, պայքարում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ, կառավարում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները և այլն:

Այս նախագիծը նպատակ ունի զգալիորեն բարձրացնել Բանկի կարողությունները փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում և միջազգային պատժամիջոցների համապատասխանության ապահովման հարցերում՝ կիրառելով վերահսկողական տեխնոլոգիաներ (SupTech):

2. ՆՊԱՏԱԿԸ

Սույն հրավերի նպատակն է գտնել մատակարար, որը կկարողանա մատակարարել և ներդնել համալիր ծրագրային լուծում (այսուհետ՝ «Համակարգ»), ներառյալ դրա տեղակայումը, կարգաբերումը, ուսուցումը և ներդրումից հետո շարունակական ուղեկցումն ու տեխնիկական սպասարկումը:

Համակարգը պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետորեն հայտնաբերել, գնահատել և կառավարել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ), ինչպես նաև՝ միջազգային պատժամիջոցների համապատասխանության ռիսկերը՝ կիրառելով առաջադեմ տեխնոլոգիական գործիքներ:

Համակարգի ներդրման արդյունքում նախատեսվում է բավարարել ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիթորինգի իրականացման գործընթացներում հետևյալ պահանջները.

- Անհրաժեշտ տվյալների (այդ թվում՝ հարցումների միջոցով) ստացման, արտահանման և որակի ստուգման ավտոմատացում,
- Այլ համակարգերին և տվյալների բազաներին ինտեգրման հնարավորություն,
- Տվյալների հիման վրա, ըստ ֆինանսական կազմակերպությունների (այսուհետ՝ ՖԿ), ըստ ոլորտների և ըստ ֆին. համակարգի ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ներհատուկ և մնացորդային ռիսկերի գնահատման ավտոմատացում,
- Վաղ ահազանգման կամ կարմիր դրոշակների մեխանիզմների կիրառման ավտոմատացում,
- ՖԿ-ների և տարբեր ֆինանսական ոլորտների միտումների դինամիկ մոնիթորինգի իրականացման հնարավորության ներդրում (ցանկալի է նաև, ՖԿ, ֆինանսական ոլորտի և/կամ համակարգի անոմալ երևույթների բացահայտման և ապագային միտված ռիսկերի կանխատեսման հնարավորություն),
- Համեմատական վերլուծության իրականացման հնարավորություն, ինչպես՝ ՖԿ-ի, այնպես էլ՝ տարբեր ոլորտների միջև,
- Ազգային մակարդակով ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման օժանդակում,

- Վերահսկողական խորաթափանցության նշանակալի բարձրացման համար անհրաժեշտ տարբեր հաշվետվությունների, դինամիկ վահանակների և UI/UX հարմարավետ հարթակի ներդրում:

3. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ

Համակարգի մատակարարման և ներդրման վայրը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկն է՝ Վազգեն Սարգսյան փ. 6, Երևան, 0010 Հայաստանի Հանրապետություն:

4. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Համակարգը պետք է ներդրվի Կենտրոնական բանկի ներքին ենթակառուցվածքներում (ամպային լուծումներն ընդունելի չեն):

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ/ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Այս բաժնում ներկայացված են Համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները: Աշխատանքների շրջանակը կարելի է բաժանել հետևյալ բաժինների.

5.1. <u>Ընդհանուր պահանջներ</u>

Համակարգը պետք է լինի նախապես մշակված (ստանդարտացված) լուծում՝ հասանելի շուկայում առկա ծրագրային արտադրանքի ձևաչափով (off-the-shelf)՝ առանց էական հարմարեցման անհրաժեշտության: Համակարգը նախագծված պետք

է լինի արագ տեղակայման համար, պարունակի բոլոր անհրաժեշտ ֆայլերը և հրահանգները՝ նպատակային միջավայրում տեղադրման համար, և լինի կարգաբերելի (customizable):

5.2. Տվյալների կառավարում

Տվյալների մուտքագրում

Համակարգը պետք է ապահովի համապարփակ տվյալների հավաքագրում և ինտեգրում՝ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատումն իրականացնելու համար, մասնավորապես՝

- **Հարցման Պորտալ (Հիմնական Աղբյուր):** Համակարգը պետք է ապահովի ավտոմատացված և անվտանգ հարցման պորտալ՝ որպես տվյալների հավաքագրման հիմնական միջոց, ներառյալ ներդրված տվյալների ստուգման գործառույթներ՝ սխալների հնարավորությունը նվազեցնելու համար: Պորտալը պետք է թույլ տա ֆինանսական հաստատություններին կցել նաև իրենց հարցման պատասխաններին անհրաժեշտ փաստաթղթեր (օրինակ՝ ՓԼ/ԱՖ քաղաքականություններ, խորհրդի հանդիպման արձանագրություններ), որպեսզի երաշխավորված լինի հարցման պատասխանների ամբողջականությունը:

- **Ստանդարտացված Ֆայլերի Ներմուծում:** Հարցման տվյալներից զատ, համակարգը պետք է աջակցի MS Excel կամ JSON ստանդարտ ձևաչափերով ֆայլերի ներմուծմանը

- **API Ինտեգրում:** Համակարգը պետք է ապահովի անվտանգ API-ների միջոցով ինտեգրում արտաքին տվյալների բազաների և համակարգերի հետ՝ վերահսկողական տվյալների ուղղակի ներմուծման համար:

- **ETL (Ներբեռնում, Փոխակերպում, վերբեռնում):** Համակարգը պետք է աջակցի ETL գործընթացներին՝ տվյալների քարտեզագրման, վերափոխման և նորմալացման համար API-ներից, ֆայլերից և թույլատրելի տվյալների բազաներից, ներառյալ՝ պլանավորում, ստուգում և սխալների մասին հաշվետվություն: Ներմուծված տվյալները պետք է պահպանվեն և անմիջապես կապված լինեն ռիսկերի գնահատման մոդելների հետ՝ գնահատումները ավտոմատ թարմացնելու համար: Մատակարարը պետք է հստակ նշի, թե ETL-ի որ ֆունկցիաներն են տրամադրվում որպես COTS կոնֆիգուրացիա, և որոնք՝ որպես պրոֆեսիոնալ ծառայություններ:

Հարցումների կառավարում: Համակարգը պետք է ունենա ապահով և օգտագործողների համար հարմար հարցաթերթիկների օգտագործման հարթակ, որը նախատեսված է հաշվետու ՖԿ-ից տեղեկատվության ստացման համար: ՖԿ-ը, ստանալով հրավերի հղում, կարող են մուտք գործել հարթակ՝ մուտքագրելու անհրաժեշտ տեղեկատվությունը, պահպանելով և ուղարկելով իրենց պատասխանները: Հարթակը պետք է առաջարկի բազմալեզու աջակցություն, իրական ժամանակում տվյալների վավերացում և ավտոմատացված էլ. նամակներ, ներառյալ՝ հրավերներ, վերջնաժամկետի թարմացումներ և հաստատումներ՝ հարցաթերթիկների հաջող ավարտի մասին: Բացի այդ, այն պետք է ապահովի ամենօրյա վիճակագրական տվյալներ հարցաթերթիկների ակտիվության վերաբերյալ: Այն կարող է կառավարել մի քանի վերահսկվող ոլորտներ և բազմաթիվ հարցաթերթիկներ տարբեր հաշվետու ՖԿ-ից: Անվտանգության նպատակներից ելնելով ծրագրային լուծումը պետք է տեղակայված լինի օգտագործողի համապատասխան ենթակառուցվածքներում աջակցելով երկփուլ նույնականացմանը՝

առանց ամպային ծառայությունների օգտագործման: Այն ներառում է մուտքերի մոնիթորինգ, կողպման (lock out) հսկում(control), ինչպես նաև ծանուցումներ ՖԿ-ի և վերահսկողների համար կողպման դեպքերում, և կարող է գաղտնագրել զգայուն տվյալները: Բացի այդ, պետք է ենթարկված լինի անվտանգության թեստավորման երրորդ կողմի անվտանգության մասնագետների կողմից:

Հարթակը պետք նվազեցնի հաշվետու ՖԿ-ի բեռը՝ Excel-ից զանգվածային պատճենման և պայմանական հարցերի միջոցով, որոնք ցուցադրում են միայն անհրաժեշտ հարցերը, ինչը նվազեցնում է հարցերի ընդհանուր քանակը, որոնց պետք է պատասխանի ՖԿ-ը: Տվյալները պետք է վավերացվեն իրական ժամանակում՝ նախազգուշացումները նշելով հարցաթերթիկում: Տվյալների վավերացման և ձևի ամբողջականության պահանջները պետք է նվազագույնի հասցնեն ՓԼ/ԱՖ հաշվետվությունների հետ կապված հիմնական խնդիրներից մեկը՝ տվյալների որակը: Այն պետք է նվազեցնի կամ նույնիսկ վերացնի որակի խնդիրները, ինչպիսիք են՝ անավարտ հաշվետվությունները, սխալ տվյալները, մարդկային սխալները, բացակա տվյալների վավերացումները, տվյալների օգտագործելի ձևափոխման խնդիրները և այդ պատճառով ծախսված աշխատանքը, որոնք հանդիսանում են ռիսկերի գնահատման գործընթացում ամենամեծ ռեսուրսային կորուստներից մեկը:

Հարթակը պետք է հեշտացնի հարցումների հավաքման գործընթացը: Հարցման արդյունքում ստացված պատասխանների ներմուծումը ռիսկի մոդելներ տվյալների լրացուցիչ մանիպուլյացիա, ագրեգացիա կամ փոխակերպում չի պահանջում (վերահսկողի կողմից ձեռքով միջամտության ձևով): Այսինքն՝ հարցման տվյալները ուղղակիորեն պետք է ավտոմատ ներմուծվեն ռիսկի մոդելի մեջ և ռիսկային միավորները հաշվարկվվեն վայրկյանների ընթացքում՝ ընդամենը մեկ կոճակի սեղմումով, ինչը կխնայի զգալի ժամանակ և ռեսուրսներ:

MS Excel և այլ ստանդարտացված ֆայլերի աջակցություն: Համակարգը պետք է ընդունի MS Excel կամ JSON ստանդարտացված ֆայլեր ՓԼ/ԱՖ ռիսկերի և դրանց կառավարման որակի ամբողջական գնահատման համար: Այս ֆայլերը պետք է ունենան նախապես սահմանված ձևանմուշ՝ բոլոր ներկայացումների ստանդարտացումն ապահովելու համար: Համակարգը պետք է աջակցի Excel-ի, այդ թվում՝ այլ ստանդարտացված ֆայլերից տվյալների ավտոմատ ներմուծումը, ինչը վերացնում/ նվազեցնում է տվյալների մուտքագրման անհրաժեշտությունը ձեռքով: Ֆայլի վերբեռնումից հետո համակարգը պետք է ավտոմատ կերպով քարտեզագրի և վավերացնի տվյալները՝ ըստ նախապես սահմանված կանոնների, ինչպես նաև պետք է աջակցի տվյալների վերլուծական գործիքների ինտեգրմանը՝ վերահսկողին թույլ տալով վերլուծել ներկայացված տվյալները ռիսկերի գնահատման և համապատասխանության համար:

Տարբեր տվյալների բազաներին և համակարգերին ինտեգրում/համակցում: Համակարգը պետք է աջակցի API-ի միջոցով կապ հաստատել արտաքին համակարգերի հետ և իրականացնի անվտանգ վավերացման մեխանիզմներ API կապեր հաստատելու համար: Համակարգը նաև պետք է կարողանա ավտոմատ կերպով հարցումներ իրականացնել տարբեր տվյալների բազաներից՝ ներբեռնել, փոխակերպել և բեռնել տվյալները (ETL), ինչը վերացնում է ձեռքով տվյալների մուտքագրման կամ փոխակերպման անհրաժեշտությունը, նվազեցնում է սխալների հավանականությունը և բարձրացնում է արդյունավետությունը: Հարցումների արդյունքները անմիջապես պետք է կապվեն ռիսկային մոդելներին՝ թույլ տալով ռիսկային գնահատականների արագ թարմացում:

5.3.Դերեր և իրավասություններ

Համակարգը կիրառում է բազմագործոնային վավերացում (MFA)՝ պահանջելով մուտքի համար տրամադրել երկու կամ ավելի միջոցներ (օրինակ՝ գաղտնաբառ + մեկանգամյա կոդ SMS-ով կամ էլ. փոստով): Բոլոր զգայուն տվյալները կոդավորված են ուժեղ (strong) ալգորիթմներով՝ փոխանցման և պահպանման ժամանակ, կանխելով չարտոնված հասանելիությունը նույնիսկ տվյալների որսման դեպքում: Կիրառվում է դերահիմնավորված մուտքի կառավարում, որպեսզի օգտվողներն ունենան միայն իրենց դերին համապատասխան տվյալների և ֆունկցիաների մուտք՝ նվազեցնելով չարաշահման ռիսկը: Բացի այդ, իրականացվում է օգտվողների գործողությունների լոգագրում և մոնիտորինգ՝ հետևելով մուտքագրման փորձերին, տվյալների փոփոխություններին և այլ կարևոր գործողություններին՝ կասկածելի վարքագծեր հայտնաբերելու համար:

5.4.Ռիսկերի մոդելավորում և վերլուծություն

Համակարգում օգտատերը կարող է ստեղծել հատուկ մոդելներ ներհատուկ ռիսկի և կառավարման որակի/հսկողությունների համար՝ համաձայն ոլորտային ՓԼ/ԱՖ ռիսկի գործոնների, ինչպես նաև կարող է կառավարել հարցաթերթերը և տվյալների ներմուծումը տվյալների կառավարման ֆունկցիոնալությամբ: Լուծումը պետք է ապահովի կարգաբերում՝ ներհատուկ ռիսկի և կառավարման որակի/հսկողությունների մոդելների համար, որոնք հնարավորություն են տալիս խմբագրել մոդելները և տեղեկացնում են հաշվարկների ընթացիկ կարգավիճակի մասին: Համակարգում վերահսկողը կարող է հաշվարկել ներհատուկ ռիսկը, կառավարման որակը/հսկողությունները և մնացորդային ռիսկը՝ ՖԿ-ի և ոլորտի մակարդակներում: Վերջնական արդյունքը մնացորդային ռիսկի ջերմաստիճանային քարտեզն է (heatmap), որը վերահսկողներին տրամադրում է համեմատական ոլորտային տեսլական՝ հնարավորություն տալով ռիսկահեն առաջնահերթությունների սահմանմանը

վերահսկողական գործողություններում՝ բարձր ռիսկային ՖԿ-ի և բարձր ռիսկային ոլորտների/գործոնների թիրախավորմանը: Վերահսկողները պետք է հնարավորություն ունենան նաև որակական գնահատումներ իրականացնել, մասնավորապես՝ կարողանան մուտքագրել հեռակա/տեղերում վերահսկողության ժամանակ ի հայտ եկած նոր տեղեկատվությունը, որը կարող է վերաբերել ինչպես համակարգի կողմից ավտոմատ գնահատված ներհատուկ ռիսկի ճշգրտմանը (inherent risk adjustment), այնպես էլ՝ հսկողություններին/կառավարման որակին (controls): Համակարգը պետք է աջակցի ժամանակի ընթացքում մոդելի փոփոխված տարբերակների պահպանման հնարավորությունը, այսինքն պետք է պահպանվեն մոդելի հին տարբերակները որպեսզի վերահսկողները կարողանան ցանկացած ժամանակ համեմատեն նոր մոդելների գնահատականների հետ:

Հարցաթերթերից ստացված տվյալների ամբողջությունը կօգնի վերահսկողության գործողություններին նույնիսկ հաշվետվական ցիկլի ավարտից հետո՝ տրամադրելով տարբեր մակարդակներում վերլուծություններ իրականացնելու և վիճակագրական տվյալներ ստանալու հնարավորություն, ներառյալ՝ ռիսկի գործոններիի մակարդակներում, ՖԿ-ի մակարդակում (նմանատիպ չափի ՖԿ-ի կամ ամբողջ ոլորտի ՖԿ-ի համեմատական վերլուծություն), առանձին իրավասության մակարդակում, երկրի խմբի մակարդակում (օրինակ՝ FATF-ի ցուցակներ), կամ ոլորտային մակարդակներում: Համակարգը հնարավորություն է տրամադրում նաև շեմի ընտրության օժանդակություն, որը հանդիսանում է ռիսկի գնահատման գործառույթում ամենակարևոր դերերից մեկը: Երբ համակարգում հասանելի են մի քանի հաշվետվական ցիկլեր, այն տրամադրում է միտումների վերլուծություն առանձին ՖԿ-ի և ֆինանսական համակարգի/ոլորտի համար: Համակարգը կարող է ինտեգրել մեքենայական ուսուցում և արհեստական ինտելեկտ (ԱԻ)՝ ինքնուրույն սովորելու անցյալի տվյալներից և բարելավելու ռիսկերի կանխատեսման ճշգրտությունը: Արդյունքում՝ համակարգը կարող է ներառել կանխատեսող

վերլուծություն՝ ոչ միայն ներկայիս ռիսկերը հասկանալու, այլև ապագա ռիսկերը կանխատեսելու համար՝ հիմնված անցյալի տվյալների և միտումների վրա:

Համակարգը կիրառում է նաև դինամիկ վահանակներ, որոնք ապահովում են տվյալ ոլորտի ընդհանուր ռիսկերի գործոնների և միտումների համապարփակ դիտումը: Ամփոփ վահանակները թույլ են տալիս օգտվողներին համեմատել ռիսկերը տարբեր ՖԿ-ների կամ ոլորտների միջև, բացահայտելով օրինաչափություններ կամ շեղումներ: Օգտվողները հաճախ կարող են հարմարեցնել վահանակները՝ կենտրոնանալու համար հատուկ չափանիշների, ժամանակահատվածների կամ հետաքրքրության ոլորտների վրա:

5.5.Հաշվետվությունների ստեղծում

Համակարգը պետք է աջակցի հարմարեցված հաշվետվությունների ստեղծմանը, հնարավորություն տալով վերահսկողներին կազմել հաշվետվություններ վերլուծության և կառավարման համար՝ տարբեր ռիսկի գործոնների, հաստատությունների և ոլորտների համար, ինչպես նաև տարբեր հաճախականությամբ (օրինակ՝ օրական, ամսական, եռամսյակային): Օգտվողները պետք է կարողանան ընտրել պարամետրեր և կիրառել ֆիլտրեր (օրինակ՝ ժամանակահատվածի, ոլորտի կամ իրավասության հիման վրա)՝ հաշվետվությունները հարմարեցնելու համար: Համակարգը պետք է գեներացնի և՛ վիզուալ հաշվետվություններ (օրինակ՝ գրաֆիկներ), և՛ աղյուսակային հաշվետվություններ, որոնք ցուցադրում են տվյալների արժեքները ժամանակի ընթացքում: Համակարգը պետք է աջակցի ինչպես պլանավորված, այնպես էլ անմիջապես ստեղծվող հաշվետվություններին և ապահովի նախապես պատրաստված ձևանմուշներ՝ հնարավորություն տալով ստեղծել և պահպանել անհատական

ձևանմուշներ պարբերական օգտագործման համար: Հաշվետվությունները պետք է հնարավոր լինի արտահանել օգտագործողի համար նախընտրելի ձևաչափերով (օրինակ՝ MS Excel, PDF): Համակարգը պետք է վավերացնի տվյալները, ապահովելով տվյալների հետևողականություն (consistency) և թարմացնի հաշվետվությունները նոր տվյալների ներմուծման հետ: Դերահիմնավորված մուտքի վերահսկողությունը պետք է սահմանափակի, թե ով կարող է ստեղծել, խմբագրել կամ դիտել հաշվետվությունները՝ պահպանելով անվտանգությունը և համապատասխանությունը: Այս ամենը կտրամադրի վերահսկողներին գործիքներ՝ արդյունավետորեն կազմելու ճշգրիտ և նպատակային հաշվետվություններ՝ տվյալահեն որոշումներ կայացնելու համար:

5.6. Աշխատանքային էկրան

Համակարգը պետք է ունենա օգտագործողակենտրոն դիզայն, որը կապահովի ինտուիտիվ և անխափան փորձառություն աշխատակիցների համար: Միջերեսը պետք է լինի տեսողականորեն պարզ, հեշտ նավարկելի և կարգավորելի, թույլ տալով օգտվողներին հարմարեցնել վահանակները, ահազանգերն ու հաշվետվությունները՝ իրենց նախասիրություններին համապատասխան: Դիզայնը պետք է ապահովի, որ բոլոր հիմնական ֆունկցիաները հասանելի լինեն նույն պատուհանում, նվազեցնելով խափանումները և մտավոր բեռը: Արդյունավետությունը առավելագույնի հասցնելու համար համակարգը պետք է ապահովի հարթ ինտեգրում արտաքին պլատֆորմների և տվյալների բազաների հետ:

Համակարգը ներառում է վերահսկողների կողմից փոփոխությունների կառավարման հուսալի գործընթաց, որը կապահովի հաստատման աշխատանքային հոսքեր ցանկացած փոփոխության համար: Այս պահանջը երաշխավորում է, որ բոլոր կարևոր

փոփոխությունները՝ լինի դա ռիսկի շեմերի, ահազանգերի, հաշվետվությունների կամ օգտվողների դերերի փոփոխություն, վերահսկվեն, հաստատվեն և գրանցվեն:

6. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

N	Պահանջ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
1	*Հարցումների և տվյալների կառավարում*					
1.1	Կարող է հեշտությամբ ստեղծել և հարմարեցնել հատուկ հարցումներ	R-01	Համակարգը թույլ է տալիս օգտվողներին ստեղծել ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման համար նոր հարցումներ՝ հարմարեցնելով հարցերը, պատասխանի ձևաչափերը և կառուցվածքը՝ հիմնված հատուկ նպատակների կամ տվյալների կարիքների վրա:	Պարտադիր պահանջ		

		R-02	Համակարգը տրամադրում է հասկանալի և պարզ ինտերֆեյս, որը թույլ է տալիս նաև ոչ տեխնիկական օգտվողներին նախագծել, հարմարեցնել և կիրառել հարցումները՝ առանց մեծ տեխնիկական գիտելիքների:	Պարտադիր պահանջ		
		R-03	Հարցումներում հնարավոր է ներառել պայմանական տրամաբանություն, ընտրության ճյուղավորում և բազմալեզու աջակցություն, ինչը դարձնում է դրանք ճկուն տարբեր իրավիճակների համար:	Պարտադիր պահանջ		
		R-04	Ավելացնել, խմբագրել կամ հեռացնել հարցեր: Օգտվողները կարող են արագորեն ավելացնել նոր հարցեր, փոփոխել արդեն առկա հարցերը կամ հեռացնել դրանք, եթե դրանք այլևս չեն համապատասխանում	Պարտադիր պահանջ		

			պահանջներին: Սա թույլ է տալիս դինամիկ թարմացնել հարցումները՝ առանց զրոյից սկսելու անհրաժեշտության:			
		R-05	Միացնել կամ անջատել հարցերը: Օգտվողները կարող են միացնել կամ անջատել առանձին հարցերը՝ առանց դրանք հեռացնելու: Սա հնարավորություն է տալիս հարմարեցնել հարցումները՝ տարբեր սցենարների համար: Օրինակ, որոշ հարցեր կարող են անջատվել որոշակի ՖԿ-ի համար՝ տվյալների հավաքագրման ճկունությունը պահպանելու համար:	Պարտադիր պահանջ		

		R-06	Փոխել հարցերի կարգի հիերարխիան: Համակարգը թույլ է տալիս փոփոխել հարցերի հիերարխիայի կարգը, ինչը հնարավորություն է տալիս ավելի լավ կազմակերպել հարցումները: Օրինակ, հնարավոր է հարցերը խմբավորել ըստ թեմայի կամ բարդության՝ ապահովելով տրամաբանական հաջորդականություն:	Պարտադիր պահանջ		
		R-07	Փոփոխել հարցերի հերթականությունը: Օգտվողները կարող են փոփոխել հարցերի հերթականությունը հարցման ներսում, ինչը հեշտացնում է հարցումների հոսքի հարմարեցումը՝ հիմնված հետադարձ կապի կամ	Պարտադիր պահանջ		

			առաջնահերթությունների փոփոխության վրա:			
1.2	Կարող է հեշտությամբ տարածել և հավաքել հարցումներ, և ավտոմատ կերպով համախմբել արդյունքները	R-08	Հարցումները պետք է տրամադրվեն և հավաքագրվեն վեբ պորտալի միջոցով՝ որպես հիմնական հաղորդակցության ուղի: Ֆինանսական հաստատությունները հարցաթերթիկները լրացնելու և ներկայացնելու հնարավորություն կունենան անվտանգ առցանց միջավայրում, իսկ հրավերները և հիշեցումները կուղարկվեն միայն էլ. փոստի ծանուցումների միջոցով:	Պարտադիր պահանջ		

		R-09	Հարցումների տարածումից հետո, համակարգը ավտոմատ կերպով հավաքում է պատասխանները, առանց պահանջելու ձեռքով գործողություն: Այն կարող է հետևել, թե ովքեր են արդեն լրացրել հարցումը և հիշեցումներ ուղարկել նրանց, ովքեր չեն լրացրել:	Պարտադիր պահանջ		
		R-10	Համակարգը ավտոմատ կերպով համախմբում է արդյունքները իրական ժամանակում, թույլ տալով օգտվողներին դիտել և վերլուծել տվյալները, հենց որ պատասխանները ստացվեն: Սա օգնում է խնայել ժամանակը և ստանալ ակնթարթային պատկերացումներ:	Պարտադիր պահանջ		

		R-11	Համախմբված տվյալները կարող են օգտագործվել հատուկ հաշվետվություններ և վահանակներ ստեղծելու համար՝ ապահովելով հարցումների արդյունքների հստակ վիզուալ ներկայացում:	Պարտադիր պահանջ		
		R-12	Համակարգը ապահովում է հավաքագրված տվյալների անվտանգ պահպանում՝ օգտագործելով հասանելիության վերահսկողություն, որպեսզի պաշտպանվի հարցումների պատասխանների ամբողջականությունն ու գաղտնիությունը:	Պարտադիր պահանջ		
1.3	Հարցադաշտի հատկություններ	R-13	Հարցի տեքստ: Սա այն հիմնական տեքստն է, որը ցուցադրվում է հարցվողին:	Պարտադիր պահանջ		

		R-14	Լրացուցիչ նկարագրություն կամ հղման տեքստ: Այս դաշտը տրամադրում է լրացուցիչ տեղեկատվություն կամ հրահանգներ՝ ուղղորդելու համար հարցվողին: Այն կարող է պարզաբանել հարցի համատեքստը կամ տրամադրել հատուկ հրահանգներ, օրինակ՝ «Ընտրեք բոլոր ճիշտ պատասխանները» կամ «Տրամադրեք թվային պատասխան»:	Պարտադիր պահանջ		
		R-15	Հարուստ տեքստի խմբագիր: Համակարգը թույլ է տալիս հարցի տեքստի և հրահանգների ձևաչափման տարբերակներ, ինչպիսիք են թվատառ, թեք տառեր, գծում և այլն: Սա հեշտացնում է հարցի կամ հրահանգի կարևոր մասերը	Պարտադիր պահանջ		

			շեշտադրելը՝ ավելի լավ ընկալման համար:			
		R-16	Հղումներ դեպի ռեսուրսներ: Հարցի դաշտը կարող է ներառել հիպերհղումներ դեպի արտաքին ռեսուրսներ կամ փաստաթղթեր, տրամադրելով հարցվողին լրացուցիչ նյութեր կամ համատեքստային տեղեկատվություն, որը վերաբերում է հարցին:	Պարտադիր պահանջ		
1.4	Ստացված պատասխանի տվյալների տեսակները	R-17	Թիվ: Թույլ է տալիս հավաքել պարզ թվային տվյալներ (օրինակ՝ քանակներ, միավորներ):	Պարտադիր պահանջ		
		R-18	Արժույթ: Աջակցում է մուտքագրել ֆինանսական արժեքներ, ձևավորված որպես արժույթ:	Պարտադիր պահանջ		

		R-19	Տոկոսային: Օգտագործվում է տոկոսի արժեքների հավաքագրման համար:	Պարտադիր պահանջ		
		R-20	Թվային՝ ըստ բաժանումների: Թվային տվյալներ, որոնք դասակարգվում են ըստ իրավասության, տարածաշրջանի, կամ ցանկացած հատուկ բաժանման (օրինակ՝ վաճառքների դասակարգում ըստ երկրի կամ եկամուտների ըստ բաժնի):	Պարտադիր պահանջ		
		R-21	Հաշվարկված տվյալներ: Հարաբերություն երկու թվային տվյալների միջև: Ավտոմատ հաշվարկում է և ցույց տալիս երկու թվային արժեքների հարաբերությունը:	Պարտադիր պահանջ		
		R-22	Այլ թվային տվյալների գումար: Ավտոմատ հաշվարկում է	Պարտադիր պահանջ		

			սահմանված թվային արժեքների գումարը:			
		R-23	Բինար: Հավաքում է այո/ոչ կամ ճիշտ/սխալ տիպի պատասխաններ:	Պարտադիր պահանջ		
		R-24	Մեկ տարբերակ: Թույլ է տալիս հարցվողներին ընտրել մեկ տարբերակ ցուցակից (օրինակ՝ ռադիո կոճակներ մեկ տարբերակի համար):	Պարտադիր պահանջ		
		R-25	Մի քանի տարբերակ: Թույլ է տալիս հարցվողներին ընտրել մեկից ավելի տարբերակներ ցուցակից (օրինակ՝ նշման տուփեր բազմակի ընտրությունների համար/ checkboxes for multiple selections/):	Ցանկալի պահանջ		
		R-26	Ամսաթիվ: Հավաքում է կոնկրետ ամսաթվեր ստանդարտ	Պարտադիր պահանջ		

			ձևաչափով (օրինակ՝ օր/ամիս/տարի):			
		R-27	Ազատ տեքստ: Բաց տեքստի դաշտ, որը թույլ է տալիս հարցվողներին մուտքագրել անհամակարգ տեքստային պատասխաններ:	Պարտադիր պահանջ		
		R-28	Երկրի ընտրություն: Ընտրացանկ, որը թույլ է տալիս հարցվողներին ընտրել երկիր նախապես սահմանված ցուցակից:	Պարտադիր պահանջ		
		R-29	Հատուկ ընտրացանկ: Հարմարեցվող ընտրացանկ՝ նախապես սահմանված տարբերակների ընտրության համար, ինչպիսիք են արդյունաբերական ոլորտները, ապրանքների տեսակները կամ հատուկ կատեգորիաները:	Պարտադիր պահանջ		

		R-30	Փաստաթղթերի ներբեռնում: Թույլ է տալիս հարցվողներին ներբեռնել ֆայլեր կամ փաստաթղթեր որպես պատասխան (օրինակ՝ PDF, Word փաստաթղթեր):	Պարտադիր պահանջ		
1.5	Հարցերի պատասխանից կախված՝ հարցաթերթիկի լրացման հարմարավետություններ	R-31	Հարցաթերթիկի լրացման գործընթացում որոշ հարցեր ցուցադրվում են կամ թաքցվում՝ ելնելով հարցվողի նախորդ պատասխաններից: Սա հարցման ընթացքը դարձնում է ավելի հարմարավետ՝ ցուցադրելով միայն համապատասխան հարցերը: Սա ապահովում է, որ հարցվողը տեսնի միայն իր իրավիճակին համապատասխան հարցերը՝ հարմարեցնելով և հեշտացնելով լրացման գործընթացը:	Պարտադիր պահանջ		

		R-32	Հարցը կարող է կախված լինել մեկ այլ հարցի «Այո» պատասխանից: Եթե հարցվողը ընտրում է «Այո», կախված հարցը կցուցադրվի:	Պարտադիր պահանջ		
		R-33	Նույն կերպ, հարցը կարող է ցուցադրվել միայն այն դեպքում, եթե մեկ այլ հարցին պատասխանել են «Ոչ»: Սա թույլ է տալիս հետևողական հարցերի կիրառումը՝ հիմնված բացասական պատասխանների վրա:	Պարտադիր պահանջ		
		R-34	Հարցը կարող է կախված լինել մի քանի հարցերից, և այն կցուցադրվի, եթե որոշակի հարցերի պատասխանները լինեն «Այո» և/կամ «Ոչ»: Սա թույլ է տալիս կառուցել բարդ լոգիկա և հարցումների	Պարտադիր պահանջ		

			անհատականացում՝ հիմնված բազմաթիվ պայմանների վրա:			
		R-35	Հարցը կարող է կախված լինել մեկ այլ հարցից, որը ինքնին կախված է մեկ այլ հարցից, և այսպես շարունակ: Սա հնարավորություն է տալիս ստեղծել բազմաշերտ պայմանական տրամաբանություն, ինչը թույլ է տալիս կառուցել խիստ անհատականացված հարցումների հոսք՝ ելնելով պատասխանների շարքից:	Պարտադիր պահանջ		

		R-36	Անավարտ հարցերի անցում (հաջորդ/նախորդ): Հարցաթերթիկը թույլ է տալիս օգտվողներին արագ անցնել հաջորդ կամ նախորդ անավարտ հարցին: Սա օգնում է ապահովել, որ օգտվողը չբացառի պարտադիր հարցերը և ավելի հարթ դարձնի լրացման փորձը, հատկապես երկար հարցումների դեպքում:	Պարտադիր պահանջ		
		R-37	Մեծածավալ տվյալների մուտքագրում: Օգտվողները կարող են մեծ ծավալի տվյալներ մուտքագրել միանգամից՝ դյուրին դարձնելով տվյալների մուտքագրումը, հատկապես այն դեպքերում, երբ պետք է մուտքագրվել բազմակի կամ կրկնվող տվյալներ:	Պարտադիր պահանջ		

		R-38	Հարցաթերթիկի պահպանում .xlsx կամ .pdf ֆորմատներով: Հարցաթերթիկի լրացումից հետո օգտվողները կարող են այն պահպանել .xlsx (Excel) կամ .pdf ձևաչափերով: Սա թույլ է տալիս հարցվողներին պահել իրենց պատասխանների ձևաչափված տարբերակը, կիսվել արդյունքներով այլ անձանց հետ կամ օգտագործել տվյալները հետագա վերլուծության համար:	Պարտադիր պահանջ		
1.6	Հարցման տվյալների որակի և ամբողջականության ստուգում	R-39	Համակարգը կարող է իրականացնել ավտոմատ ստուգումներ՝ ապահովելու համար, որ բոլոր պարտադիր դաշտերը լրացված են: Սա ապահովում է տվյալների ամբողջականությունը, ստուգելով, որ հարցվողը	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ եթե մեկ հարցում նշվում է մեկնարկի ամսաթիվ, իսկ մյուսում ավարտի ամսաթիվ, համակարգը կարող է վավերացնել, որ ավարտի ամսաթիվը

			մուտքագրել է տվյալներ բոլոր պարտադիր հարցերի կամ բաժինների համար՝ նախքան հարցման ուղարկումը:			ավելի ուշ լինի, քան մեկնարկի ամսաթիվը:
		R-40	Պլատֆորմը թույլ է տալիս սահմանել կանոններ առանձին տվյալների կետի համար: Օրինակ, կարելի է սահմանել ընդունելի սահմաններ թվային դաշտերի համար, սահմանել ամսաթվի դաշտերի ձևաչափերը, կամ սահմանափակել որոշ մուտքեր՝ նախապես սահմանված արժեքներով (օրինակ՝ տոկոսներ 0-100 միջակայքում): Սա ապահովում է, որ յուրաքանչյուր տվյալ	Պարտադիր պահանջ		

			համապատասխանի որոշակի որակական չափանիշներին:			
		R-41	Համակարգը նաև աջակցում է հարմարեցվող տվյալների վավերացման կանոններին, որոնք ներառում են հարաբերություններ երկու կամ ավելի տվյալների կետերի միջև:	Պարտադիր պահանջ		
1.7	Հակավիրուսային ստուգում	R-42	Երբ ֆայլ բեռնվում է, համակարգը ավտոմատ կերպով սկանավորում է ֆայլը հայտնի վիրուսների, վնասակար ծրագրերի և այլ վտանգավոր սպառնալիքների համար՝ օգտագործելով հակավիրուսային ծրագիր:	Պարտադիր պահանջ		
		R-43	Ստուգումը պետք է իրականացվի գործարկման (execute) միջոցով:	Պարտադիր պահանջ		

		R-44	Եթե վնասակար ֆայլ հայտնաբերվի, համակարգը կարող է տեղեկացնել ադմինիստրատորներին կամ օգտվողներին իրական ժամանակում՝ թույլ տալով նրանց անհապաղ միջոցներ ձեռնարկել, օրինակ՝ ֆայլը մերժել կամ օգտվողին նախազգուշացնել:	Պարտադիր պահանջ		
		R-45	Աջակցվող ֆայլի տեսակներ: Հակավիրուսային ստուգումը պետք է ընդգրկի տարբեր ֆայլերի տեսակներ (օրինակ՝ PDF, պատկերներ, Word փաստաթղթեր, աղյուսակներ)՝ ապահովելու համար ամբողջական պաշտպանություն:	Պարտադիր պահանջ		

1.8	Հարցաթերթիկի մերժման հնարավորություն և մերժման պատճառի հաղորդում	R-46	Համակարգը տրամադրում է հնարավորություն վերահսկողին մերժել ներկայացված հարցաթերթիկները, որոնք չեն համապատասխանում պահանջներին կամ պարունակում են սխալներ: Այս հատկությունը ապահովում է, որ միայն ճիշտ, ճշգրիտ և ամբողջական տվյալներն են մշակվում:	Պարտադիր պահանջ		
		R-47	Հարցաթերթիկը մերժելուց հետո համակարգը թույլ է տալիս հաղորդել մերժման կոնկրետ պատճառը հարցվողին: Սա կարող է կատարվել ավտոմատ ծանուցումների կամ հաղորդագրությունների միջոցով, որոնց մեջ նշվում է, թե հարցաթերթիկի որ մասը պետք է ուղղել (օրինակ՝ թերի	Պարտադիր պահանջ		

			տվյալներ, անվավեր մուտքեր կամ անհամապատասխան պատասխաններ):			
1.9	Մերժված հարցումների նորից մուտք գործելու հնարավորություն:	R-48	Համակարգը թույլ է տալիս օգտվողներին նորից մուտք գործել մերժված հարցումը ցանկացած պահին՝ այն ուղղումների համար վերադարձնելուց հետո: Այս հատկությունը հնարավորություն է տալիս օգտվողին շարունակել հարցումը հենց այն կետից, որտեղից այն մերժվել է՝ կատարելով անհրաժեշտ ուղղումները:	Պարտադիր պահանջ		

		R-49	Նախապես մուտքագրված տվյալները մնում են պահպանված, այնպես որ օգտվողները կարիք չեն ունենա կրկին մուտքագրել ամբողջ տեղեկատվությունը: Նրանք կարող են ուղղակի ուղղել այն մասերը, որոնք պատճառ են դարձել մերժման համար, ինչն արագացնում և հեշտացնում է գործընթացը:	Պարտադիր պահանջ		
		R-50	Համակարգը նշում է այն հատվածները, որոնք կարիք ունեն ուղղման՝ հիմնվելով մերժման պատճառի վրա, ուղղորդելով օգտվողին դեպի խնդրահարույց բաժինները: Սա նվազեցնում է շփոթությունը և ապահովում է, որ օգտվողները կենտրոնանան միայն	Ցանկալի պահանջ		

			անհրաժեշտ դաշտերի ուղղման վրա:			
		R-51	Ուղղումներ կատարելուց հետո օգտվողները կարող են նորից ներկայացնել հարցաթերթիկը՝ առանց զրոյից սկսելու:	Պարտադիր պահանջ		
1.10	Բազմակի փուլերով հարցումների իրականացում	R-52	Համակարգը թույլ է տալիս իրականացնել հարցումների մի քանի փուլ, ինչը հնարավորություն է տալիս տարբեր փուլերում կամ ժամանակի ընթացքում հավաքել տվյալներ: Այս հատկությունը աջակցում է կրկնվող տվյալների հավաքագրմանը և հնարավորություն է տալիս կատարելագործել կամ լրացնել նախորդ պատասխանները:	Պարտադիր պահանջ		

		R-53	Հարցվողների նախորդ փուլերի պատասխանները կարող են փոխանցվել հաջորդ հարցումներին, ինչը հեշտացնում է տվյալների հավաքման գործընթացը: Սա նվազեցնում է հարցվողների բեռը, քանի որ նրանք կարիք չեն ունենա նորից մուտքագրել նույն տեղեկությունները, եթե դրանք չեն փոփոխվել:	Ցանկալի պահանջ		
		R-54	Համակարգը հետևում է փոփոխություններին տարբեր հարցումների փուլերում, ինչը հնարավորություն է տալիս համեմատել և վերլուծել, թե ինչպես են պատասխանները փոփոխվում ժամանակի ընթացքում:	Պարտադիր պահանջ		

		R-55	Յուրաքանչյուր հարցման փուլ կարող է հարմարեցվել, թույլ տալով ավելացնել նոր հարցեր, փոփոխել առկա հարցերը կամ կարգավորել ձևաչափը՝ ելնելով նախորդ փուլերից (վերահսկողական ցիկլեր) ստացված պատկերացումներից:	Պարտադիր պահանջ		
		R-56	Բազմացիկլ վերլուծական կարողություններ. Համակարգը պետք է ապահովի բազմափուլ հսկողական վերլուծությունների իրականացում՝ հնարավորություն տալով վերահսկող մարմիններին հայտնաբերել միտումներ, օրինաչափություններ և ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններ: Այն պետք է ներառի վիզուալացման և համեմատական վերլուծության	Պարտադիր պահանջ		

			գործիքներ, որոնք թույլ կտան օգտատերերին հետևել պատասխանի փոփոխություններին, ընդգծել ռիսկի գնահատման տարբերությունները և վաղ փուլում բացահայտել առաջացող ռիսկեր:			
1.11	Կազմակերպությունների ցանկի թարմացման և հարցաթերթիկների կրկին ուղարկման հնարավորություն (կազմակերպության տվյալների փոփոխության դեպքում):	R-57	Համակարգը թույլ է տալիս վերահսկողներին հեշտությամբ թարմացնել կազմակերպությունների ցանկը, երբ փոփոխություններ են կատարվում կազմակերպության տվյալներում (օրինակ՝ անվան, կոնտակտային տվյալների կամ կարգավիճակի փոփոխություն):	Պարտադիր պահանջ		

		R-58	Կարող եք ավելացնել նոր կազմակերպություններ, թարմացնել առկա կազմակերպությունների տվյալները կամ հեռացնել հին կազմակերպությունները՝ պահպանելով ճշգրիտ ցանկ հարցաթերթիկների տարածման համար:	Պարտադիր պահանջ		
		R-59	Կազմակերպությունների ցանկի թարմացումից հետո, համակարգը տրամադրում է հարցաթերթիկները կրկին ուղարկելու հնարավորություն այն կազմակերպություններին, որոնց տվյալները փոխվել են: Համակարգը կարող է նաև ակտիվացնել ծանուցումներ կամ հիշեցումներ նոր թարմացված կամ ավելացված կազմակերպություններին՝	Պարտադիր պահանջ		

			ապահովելով, որ նրանք ավարտեն հարցումը նշված ժամկետներում:			
		R-60	Կազմակերպության տվյալներում կատարված բոլոր փոփոխությունները համաժամացվում (synchronized) են արդեն ուղարկված հարցումների հետ	Պարտադիր պահանջ		
1.12	Ավտոմատացված ծանուցումներ	R-61	• Հրավերներ: Ավտոմատացված էլ. նամակներ կամ ծանուցումներ, որոնք հրավիրում են մասնակցին մասնակցելու հարցման, առաջադրանքի կամ գործընթացի: Դրանք ներառում են անհատականացված հաղորդագրություն՝ հղումով դեպի այն ձևը կամ համակարգը,	Պարտադիր պահանջ		

			որը նրանք պետք է մուտք գործեն:			
		R-62	Հիշեցումներ: Ավտոմատ հիշեցումներ են ուղարկվում, եթե օգտվողը չի ավարտել պահանջվող գործողությունը, օրինակ՝ հարցման լրացումը: Համակարգը կարող է ուղարկել մի քանի հիշեցումներ որոշակի ժամանակահատվածում՝ գործողություն կատարելու համար:	Պարտադիր պահանջ		
		R-63	Ժամկետի երկարաձգումներ: Ծանուցումներ, որոնք տեղեկացնում են մասնակիցներին ժամկետի երկարաձգման մասին, եթե լրացնելու կամ ձևը հանձնելու	Պարտադիր պահանջ		

			համար լրացուցիչ ժամանակ է տրամադրվում:			
		R-64	Գաղտնաբառի փոփոխություն: Ավտոմատացված նամակներ ուղարկվում են, երբ օգտվողը խնդրում է փոխել գաղտնաբառը: Այս նամակներն ընդգրկում են հրահանգներ և հղում՝ գաղտնաբառը անվտանգ վերականգնելու համար:	Պարտադիր պահանջ		
		R-65	Հանձնված: Օգտվողները ստանում են հաստատման ծանուցումներ, երբ առաջադրանքը, հարցումը կամ ձևը հաջողությամբ հանձնվում է (submit):	Պարտադիր պահանջ		

		R-66	Արգելափակված: Ծանուցումներ են ուղարկվում, երբ օգտվողը արգելափակվում է համակարգից՝ բազմակի սխալ մուտքագրումների կամ անվտանգության պատճառներով: Նամակն առաջարկում է հրահանգներ՝ ինչպես վերականգնել մուտքը:	Պարտադիր պահանջ		
1.13	Էլ. նամակների և հարցումների արտաքին տեսքի ձևավորում:	R-67	Լոգոներ և գույներ: Հնարավոր է անհատականացնել էլ. նամակները կազմակերպության լոգոյով, գույներով և վիզուալ ինքնությամբ: Սա հաղորդակցությունը դարձնում է անմիջապես ճանաչելի և ամրապնդում է Կենտրոնական բանկի բրենդի ներկայությունը:	Պարտադիր պահանջ		

		R-68	Էլ. նամակի գլխամաս/ոտնամաս: Հնարավոր է ներառել գլխամաս և ոտնամաս յուրաքանչյուր նամակի մեջ՝ Կենտրոնական բանկի անունով, կոնտակտային տվյալներով և կայքի (այդ թվում՝ գաղտնիության քաղաքականության) հղումներով:	Պարտադիր պահանջ		
		R-69	Տառատեսակներ և ոճեր: Հնարավոր է օգտագործել համապատասխան տառատեսակներ և տեքստի ոճեր՝ ապահովելով բոլոր հաղորդակցությունների համահունչությունը Կենտրոնական բանկի ինքնությանը:	Պարտադիր պահանջ		

1.14	Էլ. նամակի միջոցով հարցումների վիճակագրության տրամադրում:	R-70	Անգործունակ ՖԿ-ներ: Էլ. նամակում նշվում են այն ՖԿ-ները, որոնք դեռ չեն սկսել հարցումը կամ անգործուն են մնացել հրավեր ստանալուց հետո:	Պարտադիր պահանջ		
		R-71	Ակտիվ ՖԿ-ներ: Համակարգը առանձնացնում է նաև այն ՖԿ-ները, որոնք ներկայումս ակտիվորեն աշխատում են հարցման վրա, բայց դեռ չեն ներկայացրել իրենց պատասխանները:	Պարտադիր պահանջ		
		R-72	Հանձնած ՖԿ-ներ: Էլ. նամակը ներառում է այն ՖԿ-ների ցանկը, որոնք հաջողությամբ լրացրել և ներկայացրել են իրենց հարցումները:	Պարտադիր պահանջ		
1.15	Վերահսկողի մուտքի հասանելիություն	R-73	(D) Մոնիտորինգի իրականացում: Վերահսկողները կարող են դիտել մասնակի	Ցանկալի պահանջ		

	ընթացքի մեջ գտնվող հարցաթերթիկներին		լրացված հարցաթերթիկների ընթացքը, տեսնել, թե որ բաժիններն են արդեն լրացված, և որոնք են դեռ չլրացված:			
		R-74	Ուղղորդում ապահովել: Վերահսկողները կարող են դիտարկել մինչ այժմ (ընթացքում գտնվող) մուտքագրված պատասխանները և տրամադրել հետադարձ կապ կամ ուղղորդում:	Պարտադիր պահանջ		
		R-75	Ժամկետների հետևում: Վերահսկողները կարող են հետևել ժամկետներին և ընթացքի կատարելությանը՝ հիշեցնելով տվյալները մուտքագրողներին, եթե հարցաթերթիկի ավարտի վերջնաժամկետը մոտենում է, իսկ այն դեռ չի ավարտվել:	Պարտադիր պահանջ		

1.16	ՓԼ/ԱՖ հարցումների համար MS Excel-ի կամ այլ ստանդարտացված ֆայլերի օգտագործում	R-76	ֆայլերի ընդունում: Բացի վեբ պորտալից՝ որպես տվյալների հավաքագրման հիմնական աղբյուր, համակարգը պետք է կարողանա ընդունել MS Excel ֆայլեր կամ JSON ստանդարտացված ֆայլեր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) ռիսկերն ու դրանց կառավարման որակը գնահատելու նպատակով: Նման բոլոր ֆայլերը պետք է համապատասխանեն նախապես սահմանված ձևանմուշներին՝ ներկայացված տվյալների համահունչությունը, ճշգրտությունը և համադրելիությունը ապահովելու համար:	Պարտադիր պահանջ		Ձևանմուշը պետք է ներառի պահանջվող դաշտեր, օրինակ ինչպիսիք են՝ կանխիկ գործարքների ծավալ, կասկածելի գործարքների քանակ, ոչ ռեզիդենտ և ռեզիդենտ հաճախորդների քանակ և այլ համապատասխան տվյալներ:

		R-77	Տվյալների վավերացում: Վերբեռնումից հետո համակարգը պետք է իրականացնի տվյալների վավերացում՝ ստուգելու, որ բոլոր պարտադիր դաշտերը լրացված են և ,որ տվյալները համապատասխանում են պահանջվող կառուցվածքին (օրինակ՝ արժույթների արժեքները ճիշտ ձևաչափով են, ամսաթվերը համապատասխանում են պահանջվող ձևաչափին):	Պարտադիր պահանջ		
		R-78	Վավերացման կանոնները կարող են ներառել բացակայող տվյալներիկամ սխալ ձևաչափերի ստուգում:	Պարտադիր պահանջ		

		R-79	Մշակում և քարտեզագրում: Վավերացումից հետո յուրաքանչյուր տվյալ (օրինակ՝ գումարներ, անուններ, ռիսկային մակարդակներ) պետք է ճիշտ քարտեզագրվի համակարգի ներքին դաշտերին՝ պահպանման և վերլուծության համար:	Պարտադիր պահանջ		
		R-80	Ավտոմատացում և ինտեգրում: Համակարգը պետք է աջակցի Excel-ի և այլ ստանդարտացված ֆայլերից տվյալների ավտոմատ ներմուծումը, ինչը վերացնում է տվյալների մուտքագրման անհրաժեշտությունը ձեռքով: Ֆայլի վերբեռնումից հետո համակարգը պետք է ավտոմատ կերպով քարտեզագրի և վավերացնի տվյալները՝ ըստ	Պարտադիր պահանջ		

			նախապես սահմանված կանոնների:			
		R-81	Պետք է աջակցի տվյալների վերլուծական գործիքների ինտեգրմանը՝ վերահսկողին թույլ տալով վերլուծել ներկայացված տվյալները ռիսկերի գնահատման և համապատասխանության համար:	Պարտադիր պահանջ		
		R-82	Սխալների մշակում: Եթե ներկայացված Excel կամ JSON ստանդարտացված ֆայլում սխալներ են (օրինակ՝ բացակայող տվյալներ, սխալ ձևաչափեր), համակարգը պետք է օգտվողին տեղյակ պահի	Պարտադիր պահանջ		

			սխալների հաղորդագրություններով, նշելով՝ ինչ պետք է ուղղել:			
		R-83	Պետք է լինի վերանայման գործընթաց, որը թույլ կտա օգտվողներին վերբեռնել ուղղված ֆայլերը:	Պարտադիր պահանջ		
		R-84	Տվյալների թարմացումներ և վարկածների վերահսկում: Համակարգը պետք է ապահովի վարկածների հսկում, թույլ տալով թարմացնել Excel կամ JSON ստանդարտացված ֆայլերի ձևանմուշները, երբ կարգավորումները փոխվում են:	Պարտադիր պահանջ		
1.17	API-ի միջոցով այլ համակարգերի հետ կապ հաստատել	R-85	Համակարգը պետք է աջակցի API-ի միջոցով կապ հաստատել այլ համակարգերի հետ (տվյալներ ստանալու և տալու հնարավորություն):	Պարտադիր պահանջ		

		R-86	Համակարգը պետք է իրականացնի անվտանգ վավերացման մեխանիզմներ API կապեր հաստատելու համար: Համակարգը պետք է ունենա հնարավորություն անվտանգ ֆայլային տվյալների փոխանցման (Secure File Transfer), մասնավորապես՝ SFTP (Secure File Transfer Protocol) օգտագործմամբ:	Պարտադիր պահանջ		
		R-87	Համակարգը պետք է ունենա սխալների մշակման հնարավորություն և կրկնության մեխանիզմներ API հարցումների համար:	Պարտադիր պահանջ		
		R-88	Համակարգը պետք է տվյալները API միջոցով ստանալուց հետո քարտեզագրի իր ներքին տվյալների կառուցվածքին:	Պարտադիր պահանջ		

		R-89	Համակարգը պետք է աջակցի ավտոմատացված, API հարցումների կատարմանը՝ ապահովելով տվյալների օպերատիվ և արդյունավետ փոխանակում	Պարտադիր պահանջ		
		R-90	Համակարգը պետք է պահպանի API հարցումների ամբողջական գրանցում, որը կներառի հարցումների մանրամասները, պատասխանների կարգավիճակը և սխալները	Պարտադիր պահանջ		
1.18	Ավտոմատ կերպով կատարում է ETL տարբեր տվյալների բազաներից և ներմուծում հարցումների արդյունքները ռիսկային մոդելներ	R-91	Ներբեռնում (Extract) Համակարգը պետք է ավտոմատ կերպով դուրս բերի հավաքված հարցման տվյալները նախապես սահմանված կանոնների և ձևաչափերի համաձայն, ապահովելով տվյալների համապարփակությունը, ճշգրտությունը և	Պարտադիր պահանջ		

			պատրաստությունը հետագա մշակման և վերլուծության համար:Փոխակերպում (Transform): Տվյալների ներբեռնումից հետո համակարգը փոխակերպում է տվյալները՝ դարձնելով դրանք հարմար վերլուծության և ռիսկային մոդելների հետ ինտեգրման համար: Սա կարող է ներառել տվյալների մաքրում, նորմալացում և կառուցում, որպեսզի ապահովվի դրանց համահունչությունը և ճշգրտությունը:			
		R-92	Բեռնում (Load): Փոխակերպված տվյալները բեռնվում են ռիսկային մոդելների մեջ, որտեղ դրանք օգտագործվում են ռիսկային գնահատականների,	Պարտադիր պահանջ		

			պրոֆիլների կամ չափանիշների թարմացման համար:			
2.	*Ռիսկերի մոդելավորում*					
2.1	Ռիսկերիի գնահատում (ներհատուկ ռիսկ, հսկողություններ և մնացորդային ռիսկ)	R-93	Ներհատուկ ռիսկի տվյալների հավաքագրում և գնահատում: Համակարգը պետք է տրամադրի ներհատուկ ռիսկի գնահատում, օգտագործելով նախապես սահմանված չափանիշներ (հաճախորդի ռիսկը, աշխարհագրական ռիսկը և ապրանքի/ծառայության ռիսկը և այլ նախանշված ցուցանիշներ) կամ կարգավորելի (customizable) մոդելներ՝ ավտոմատ ռիսկային գնահատման համար: Կազմակերպության ընդհանուր ներհատուկ ռիսկի գնահատականը կազմված է	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ ՓԼ/ԱՖ համատեքստում, ներհատուկ ռիսկի տվյալները կարող են ներառել հաճախորդի իրավասությունը, գործարքների տեսակը և ծավալը: Համակարգը գնահատում է ներհատուկ ռիսկը՝ հիմնվելով այդ ցուցանիշների վրա:

			կազմակերպության ներհատուկ ռիսկի և ոլորտային ներհատուկ ռիսկի մակարդակի գնահատականների համակցությունից:			
		R-94	Կառավարման որակի/Հսկողությունների և ռիսկի նվազեցման միջոցառումների տվյալների հավաքագրում և գնահատում: Կառավարման որակի/Ներքին հսկողության տվյալները (օրինակ՝ ներքին աուդիտ, գործարքների մոնիտորինգի համակարգեր կամ հաճախորդների պատշաճության	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Եթե ֆինանսական հաստատությունը ունի արդյունավետ գործարքների մոնիտորինգի համակարգ և ուժեղ KYC գործընթացներ, համակարգը պետք է տրամադրի բարձր կառավարման

			ստուգման գործընթացներ (KYC)) պետք է գնահատվեն, և համակարգը պետք է տրամադրի կառավարման որակի/հսկողության գնահատում, որը ցույց կտա, թե որքանով է այդ հսկողությունը արդյունավետ ներհատուկ ռիսկը նվազեցնելու համար:			որակի/հսկողությունն երի գնահատում, ինչը կցուցադրի, որ ռիսկերը լավ են վերահսկվում:
		R-95	Մնացորդային ռիսկի հաշվարկ: Համակարգը պետք է կարողանա հաշվարկել մնացորդային ռիսկ՝ վերցնելով ներհատուկ ռիսկի գնահատումը և հաշվի առնելով կառավարման որակի/հսկողությունների և ռիսկի նվազեցման միջոցառումների արդյունավետությունը:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ եթե բարձր ներհատուկ ռիսկ կա՝ հիմնված բարձր ծավալի գործարքների վրա բարձր ռիսկային իրավասությունում, սակայն կառավարման որակ/արդյունավետ հսկողություններ են

		R-96	Համաձայն ԿԲ մեթոդաբանության՝ մնացորդային ռիսկը ձևավորվում է բնածին ռիսկի մակարդակների և վերահսկման/կառավարման որակի գնահատականների համադրությամբ՝ «heatmap» (ջերմային քարտեզ) ձևաչափով: Հետևաբար, համակարգը պետք է աջակցի կարգավորելի ջերմային քարտեզների մոդելներին, որոնք արտացոլում են վերահսկողական մեթոդաբանությունը՝ վերահսկող մարմիններին հնարավորություն տալով վիզուալ ձևով տեսնելու, թե ինչպես են բնածին ռիսկի տարբեր մակարդակներն ու վերահսկողության արդյունավետությունը փոխազդում՝ ձևավորելով մնացորդային ռիսկի վերջնական արդյունքը:	Պարտադիր պահանջ		կիրառված, մնացորդային ռիսկը կարող է զգալիորեն կրճատվել:
2.2	Ռիսկի գնահատման մոդել կշռված միջինների հիման վրա	R-97	Տարբեր ռիսկային գործոնների, ինչպիսիք են հաճախորդի տեսակը, իրավական դաշտը,	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ 50% կշիռ տալ իրավական դաշտի ռիսկին, 30%՝

			գործարքների բնույթը, ապրանքի/ծառայության ռիսկերը, պետք է տրվեն տարբեր կշիռներ:			գործարքների ծավալին, և 20%՝ հաճախորդի տեսակի ռիսկին՝ գնահատելու համար ՓԼ/ԱՖ ռիսկը:
		R-98	Կշռված միջինները պետք է օգնենք հաշվել ընդհանուր ռիսկը՝ հիմնվելով ՓԼ/ԱՖ ռիսկերի ցուցանիշների վրա:	Պարտադիր պահանջ		
2.3	Հատուկ (custom) հիերարխիաներ և խմբավորումներ ռիսկային թեմաներով	R-99	Հատուկ հիերարխիաների սահմանում: Համակարգը պետք է թույլ տա օգտագործողներին ստեղծել հատուկ հիերարխիաներ՝ հիմնված հաճախորդների կամ ծառայությունների ռիսկի մակարդակի վրա:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Օգտագործողները կարող են սահմանել բարձր ռիսկային հաճախորդներ՝ հիմնվելով բարձր ռիսկային իրավական դաշտում գտնվող հաճախորդների կամ որոշակի տնտեսության ճյուղերի (օրինակ՝
			Օգտագործողները պետք է կարողանան դասակարգել բարձր ռիսկային հաճախորդներին (օրինակ՝ քաղաքական ազդեցություն	Պարտադիր պահանջ		

			ունեցող անձ (PEP), հաճախորդներ բարձր ռիսկային իրավական դաշտից) կամ բարձր ռիսկային ծառայություններ/գործարքներ (օրինակ՝ կրիպտոարժույթի գործարքներ):			խաղային բիզնես) վրա:
			Այս դասակարգումները պետք է լինեն կարգավորելի՝ վերահսկողներին հնարավորություն տալով հարմարեցնել հիերարխիաները՝ հիմնվելով նոր սպառնալիքների կամ կարգավորումների փոփոխությունների վրա:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Համակարգը խմբավորում է գործարքները հաճախորդի տեսակի և իրավասության հիման վրա՝ թույլ տալով սեգմենտացված ռիսկի գնահատումներ՝ բարձր ռիսկային հաճախորդների համար, որոնք ներառված են
		R-100	Սեգմենտացված ռիսկի գնահատումներ: Համակարգը պետք է ապահովի սեգմենտացված ռիսկի գնահատումներ՝ յուրաքանչյուր խմբի համար՝ հիմնվելով	Պարտադիր պահանջ		

			կարգավորելիռիսկային կատեգորիաների վրա:			անդրսահմանային գործարքներում:
			Յուրաքանչյուր սեգմենտ (օրինակ՝ բարձր ռիսկային հաճախորդներ, բարձր ռիսկային ծառայություններ/ապրանքներ) պետք է առանձնացված գնահատվի, և ռիսկի գնահատումները պետք է կարգավորվեն՝ հիմնվելով յուրաքանչյուր ռիսկային գործոնի կշռի վրա:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Համակարգը գնահատում է բարձր ռիսկային հաճախորդների ռիսկը՝ հաշվի առնելով գործարքների հաճախականությունը և ծավալները և տրամադրում է ռիսկային միավորներ՝ հիմնված այդ չափանիշների վրա:
			Համակարգը պետք է աջակցի ճկուն գնահատումներին, թույլ տալով վերահսկողներին հարմարեցնել ռիսկային կշիռները նոր	Պարտադիր պահանջ		

			սպառնալիքների կամ կարգավորումների փոփոխությունների դեպքում:			
2.4	Ներհատուկ ռիսկի և կառավարման որակի/հսկողողության գնահատականների արտահանում	R-101	Համակարգը պետք է թույլ տա օգտվողներին արտահանել ներհատուկ ռիսկի և կառավարման որակի/հսկողությունների գնահատականները սահմանված ձևաչափերով (Օրինակ՝ Excel, PDF):	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ արտահանել հարցման արդյունքները, ռիսկային գնահատականները և դասակարգումները յուրաքանչյուր ՖԿ-ի համար
		R-102	Արտահանված ֆայլերը պետք է ներառեն մանրամասն նկարագրություններ, հաշվարկներ և բոլոր համապատասխան մոդելային պարամետրերը:	Պարտադիր պահանջ		
		R-103	Արտահանված ֆայլերը պետք է լինեն հստակ կառուցված և հեշտ	Պարտադիր պահանջ		

			փաստաթղթավորման և վերանայման համար:			
		R-104	Արտահանումների գործընթացը պետք է լոգավորվի և հասանելի լինի ադմինիստրատորին	Պարտադիր պահանջ		
2.5	Տարածաշրջանային ռիսկի մոդելներ՝ հիմնված առանձին իրավասությունների ռիսկերի կամ իրավասությունների ցուցակների վրա, որտեղ իրավասությունները կամ ցուցակները կարող են ունենալ տարբեր կշիռներ:	R-105	Առանձին իրավասությունների ռիսկեր: Յուրաքանչյուր երկիր կամ իրավասություն գնահատվում է առնվազն հետևյալ գործոններով	Պարտադիր պահանջ		Օրինակ, բարձր ռիսկային իրավասությունները (օրինակ՝ երկրներ, որոնք հայտնի են ֆինանսական գաղտնիության և թույլ ՓԼ/ԱՖ կառուցակարգերով) կարող են ավելի բարձր կշիռ ունենալ՝ մեծացնելով այդ իրավասությունների հետ կապված գործարքների
			Կարգավորող և իրավական շրջանակներ:	Պարտադիր պահանջ		
			ՓԼ/ԱՖ դեմ պայքարին միտված հսկողության արդյունավետություն:	Պարտադիր պահանջ		
			Միջազգային պատժամիջոցների ցուցակներում ներառված լինելը (օրինակ՝ FATF-ի բարձր ռիսկային երկրներ):	Պարտադիր պահանջ		

			Քաղաքական կայունություն, կոռուպցիայի մակարդակ, և տնտեսական թափանցիկություն:	Պարտադիր պահանջ		կարևորության մակարդակը ՓԼ/ԱՖ տեսանկյունից:
		R-106	Իրավասությունների ցուցակներ: Իրավասությունները կարող են խմբավորվել ռիսկային կատեգորիաներով (օրինակ՝ բարձր ռիսկային, միջին ռիսկային, ցածր ռիսկային)՝ հատուկ չափանիշների հիման վրա:	Պարտադիր պահանջ		
		R-107	Այս ցուցակները կարող են փոփոխվել ժամանակի ընթացքում՝ հաշվի առնելով երկրի կարգավորող միջավայրի փոփոխությունները կամ միջազգային կարգավիճակի վերանայումները:	Պարտադիր պահանջ		Ավելի ցածր ռիսկային իրավասությունները կարող են ունենալ ավելի ցածր կշիռ:

		R-108	Տարբեր կշռով իրավասություններ: Յուրաքանչյուր իրավասություն կամ ցուցակ կարող է տարբեր կշիռներ ունենալ՝ հիմնված նրա ռիսկային պրոֆիլի վրա:	Պարտադիր պահանջ		
2.6	Հատուկ տարածաշրջաններ (օրինակ՝ նահանգներ կամ մարզեր իրավասության ներսում), որտեղ տարածաշրջանների տարբերակներին կարող են տրվել տարբեր կշիռներ	R-109	Յուրաքանչյուր հատուկ տարածաշրջանին կարող է տրվել հատուկ ռիսկային կշիռ, ինչը նշանակում է, որ որոշ տարածաշրջաններ կարող են դիտարկվել ավելի ռիսկային, քան մյուսները: Սա կարևոր է ռիսկի վրա հիմնված գնահատումների համար, երբ նույն երկրի տարբեր նահանգներ կամ մարզեր կարող են ունենալ տարբեր ռիսկային մակարդակներ՝ ելնելով տեղական օրենքներից,	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Միացյալ Նահանգներում, Նևադան (իր լիբերալ բիզնես օրենքների պատճառով) կարող է ունենալ ավելի բարձր ռիսկային կշիռ՝ համեմատած այլ նահանգների հետ:

			կարգավորող միջավայրից կամ տնտեսական կայունությունից:			
2.7	Հատուկ ցուցակներ (օրինակ՝ արժույթներ), որտեղ ցուցակի տարբերակներին կարող են տրվել տարբեր կշիռներ	R-110	Օգտվողները կարող են ստեղծել և սահմանել ցուցակներ՝ հիմնվելով կազմակերպության կարիքների վրա (օրինակ՝ արժույթներ, ակտիվներ, գործարքների տեսակներ):	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ վերահսկողը կարող է բարձր ռիսկային կշիռ տալ կրիպտոարժույթների ն (օրինակ՝ Bitcoin)՝ համեմատած ավանդական արժույթների (օրինակ՝ USD կամ EUR) հետ՝ հաշվի առնելով դրանց

						անանունության մակարդակը:
		R-111	Այս ցուցակները կարող են ներառել բարձր ռիսկային արժույթներ, զգայուն ապրանքներ կամ խոցելի հաճախորդների խմբեր:	Պարտադիր պահանջ		
		R-112	Յուրաքանչյուր ցուցակի տարր (օրինակ՝ արժույթներ, ինչպիսիք են USD, EUR կամ Bitcoin) կարող է ունենալ հատուկ ռիսկային կշիռ, որը սահմանվում է՝ ելնելով նրա ռիսկային մակարդակից:	Պարտադիր պահանջ		

2.8	Տվյալների կետերի բաժանում ըստ երկրի, տարածաշրջանի կամ հատուկ ցուցակների	R-113	Համակարգը պետք է թույլ տա օգտվողներին բաժանել գործարքների վերաբերյալ տվյալները ըստ երկրի՝ արդյունքները ցուցադրելով ընտրված իրավասության հիման վրա:	Պարտադիր պահանջ		
		R-114	Համակարգը պետք է աջակցի տարածաշրջանային ֆիլտրացիային և վերլուծությանը՝ ապահովելով հատուկ աշխարհագրական տարածքների տվյալների վերլուծություն:	Պարտադիր պահանջ		
2.9	Կատարում է տրված ոլորտների հաստատությունների ռիսկի գնահատումներ (հարաբերական ռիսկ)	R-115	Համակարգը պետք է նախ ստեղծի ռիսկային պրոֆիլներ՝ հաշվի առնելով ՓԼ/ԱՖ խոցելիությունները, օրինակ՝ բանկային, ապահովագրական ոլորտներում: Այս պրոֆիլները կարևոր են, որպեսզի	Պարտադիր պահանջ		

			հասկանանք, թե ինչպես են տարբեր հաստատությունները ենթարկվում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերին:			
		R-116	Համակարգը պետք է դասակարգի հաստատությունները ըստ նրանց ռիսկային մակարդակի՝ համեմատելով իրար հետ: Բարձր ռիսկային գնահատականներ (օրինակ՝ հաշվի առնելով հետևալ գործոնները՝ KYC, անդրսահմանային գործարքներ և այլն) ունեցող հաստատությունները կնշվեն կարմիր դրոշակով՝ հետագա առավել մանրամասն մոնիտորինգ և վերահսկողական	Պարտադիր պահանջ		

			միջոցառումներ իրականացնելու համար:			
		R-117	Համակարգը համեմատության միջոցով պետք է բացահայտի աութլայերները հիմնված ՓԼ/ԱՖ ռիսկային գործոնների վրա՝ բացահայտելով համեմատական առավել բարձր և ցածր ռիսկային հաստատությունները:	Պարտադիր պահանջ		

2.10	ՖԿ մակարդակով ռիսկերի գնահատումներից՝ սեկտորալ և ազգային ռիսկերի գնահատումների անցման հնարավորություն (բացարձակ ռիսկ)	R-118	Համակարգը գնահատում է բացարձակ ՓԼ/ԱՖ ռիսկը, ուսումնասիրելով այն խոցելիությունները, որոնք ներհատուկ են ոլորտին, ինչպիսիք են՝ անդրսահմանային գործարքները, բարձր ռիսկային ոլորտների կամ իրավասությունների հետ կապվածությունը, կամ բարդ սեփականության կառուցվածքները: Այն հաշվի է առնում նաև կարգավորումների բացթողումները, ինչպիսիք են՝ KYC (Ճանաչիր հաճախորդիդ) ընթացակարգերի անբավարար կիրառումը: Ռիսկի գնահատումները հիմնվում են ՓԼ/ԱՖ հատուկ ցուցանիշների վրա, օրինակ՝բարձր ռիսկային հաճախորդների կամ	Պարտադիր պահանջ		

			բիզնեսների տոկոսը տվյալ ոլորտում,անսովոր կամ մեծ գործարքների ծավալը, որոնք կարող են հուշել փողերի լվացման ռիսկի մասին,կասկածելի գործարքների մասին չհայտարարելը կամ հաշվետվությունների տարբերությունները:			
		R-119	Համակարգը պետք է ավտոմատ կերպով վերամշակի ՖԿ ռիսկերի գնահատումներից ստացված տվյալները՝ որպես հիմնական մուտքային տվյալներ ոլորտային և ազգային ռիսկերի գնահատումների համար:	Պարտադիր պահանջ		

		R-120	Վերամշակումը պետք է ապահովի, որ ՖԿ-ի մակարդակում հայտնաբերված ոլորտային միտումները և ռիսկերը ուղղակիորեն փոխանցվեն ավելի բարձր մակարդակի գնահատումներին:	Պարտադիր պահանջ		
		R-121	Այս գնահատումները տրամադրում են տվյալներ, որոնք կարող են մուտքային տվյալներ հանդիսանալ ազգային ռիսկի գնահատմանը (NRA):	Պարտադիր պահանջ		
		R-122	Այս գնահատումները օգնում են ձևավորել քաղաքական որոշումներ, ռեսուրսների բաշխում և կարգավորող ռազմավարություններ, որոնք ուղղված են հայտնաբերված ռիսկերի նվազեցմանը:	Պարտադիր պահանջ		

2.11	Տվյալների կետերի միացման/անջատման հնարավորություն ներհատուկ ռիսկի և ներքին հսկողության գնահատման համար	R-123	Օգտվողները պետք է հնարավորություն ունենան միացնել կամ անջատել որոշակի տվյալների կետերը ներհատուկ ռիսկի և կառավարման որակի/հսկողությունների գնահատման մոդելներում: Համակարգը պետք է թույլ տա օգտվողներին նշել, թե որ տվյալների կետերը պետք է ներառվեն ներհատուկ ռիսկի գնահատման (օրինակ՝ գործարքների ծավալ, իրավասության ռիսկ) մեջ և որոնք՝ ոչ: Նույնը կիրառելի է կառավարման որակի/հսկողությունների գնահատման համար, որտեղ միայն ակտիվ հսկողության չափանիշները պետք է ազդեն վերջնական գնահատման վրա:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Վերահսկողը գնահատում է հաճախորդի ներհատուկ ռիսկը և որոշում է, որ գործարքների ծավալը այլևս կարևոր չէ գնահատման համար՝ համաձայն նոր կանոնակարգերի և անջատում է այդ տվյալների կետը:

		R-124	Անջատված տվյալների կետերը չեն նպաստի ընդհանուր ռիսկի կամ հսկողության գնահատմանը, սակայն պետք է մնան հասանելի ապագայում հնարավոր ակտիվացման համար:	Պարտադիր պահանջ		
		R-125	Միայն լիազորված օգտվողները (օրինակ՝ որոշակի վերահսկողները կամ ադմինիստրատորներ) պետք է ունենան այս տվյալների կետերի միացման/անջատման հասանելիությունը:	Պարտադիր պահանջ		
		R-126	Համակարգում պետք է իրականացվի դերով պայմանավորված մուտքի վերահսկողություն, որպեսզի միայն որոշակի օգտվողներ կարողանան փոփոխել	Պարտադիր պահանջ		

			տվյալների կետերի կարգավիճակը:			
		R-127	Տվյալների կետերի միացման/անջատման կարգավիճակի բոլոր փոփոխությունները պետք է գրանցվեն համակարգում:	Պարտադիր պահանջ		
		R-128	Գրանցումը պետք է ներառի, թե ով է կատարել փոփոխությունը և երբ:	Պարտադիր պահանջ		

		R-129	Տվյալ կետի ակտիվացման կամ ապաակտիվացման դեպքում համակարգը պետք է կարողանա վերահաշվարկել ներհատուկ ռիսկի և վերահսկման/կառավարման որակի գնահատականները՝ ապահովելով, որ թարմացված կարգավորումները արտացոլվեն արդյունքներում, երբ օգտագործողը հրահանգի իրականացնել վերահաշվարկը: Բացի այդ, համակարգը պետք է ապահովի գործառույթ, որը թույլ կտա օգտատերերին կատարել մի քանի կարգաբերման փոփոխություններ մեկ աշխատանքային գործընթացի ընթացքում և հետագայում ըստ պահանջի նախաձեռնել համակցված հաշվարկ, որպեսզի	Պարտադիր պահանջ		

			վերահսկող մարմինները կարողանան գնահատել բոլոր փոփոխությունների կուտակային ազդեցությունը՝ մեկ պատկերում, օգտագործողի հրահանգից հետո:			
		R-130	Համակարգը պետք է ապահովի կարգաբերվող ծանուցումների ստացումը, ներառյալ ծայրահեղ (outlier) արժեքների հայտնաբերման և ցիկլ առ ցիկլ տոկոսային փոփոխությունը սահմանված շեմից գերազանցելու վերաբերյալ ահազանգերը:	Պարտադիր պահանջ		

		R-131	(D) Համակարգը պետք է ապահովի ազդանշաններ կամ հաստատման հաղորդագրություններ այն կարևոր փոփոխությունների համար, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում ռիսկի կամ վերահսկման գնահատման արդյունքների վրա: Ազդանշաններ պետք է ակտիվացվեն հետևյալ գործողությունների ժամանակ՝ հարցման ռեժիմի անջատումը, կազմակերպության հարցման մերժումը կամ երկրի/իրավասու տարածքի ցանկերի թարմացումը: Կարգաբերման փոփոխությունների (օրինակ՝ տվյալ կետերի ակտիվացման/ապաակտիվացման, շեմերի հարմարեցման կամ	Ցանկալի պահանջ		

			կշիռների փոփոխության) դեպքում համակարգը նախնական կարգավորմամբ պետք է չտրամադրի ազդանշաններ, սակայն այդ փոփոխությունները պետք է գրանցվեն աուդիտի մատյանում և արտացոլվեն վերահաշվարկված արդյունքներում: Եթե նման փոփոխությունները լուրջ ազդեցություն են ունենում մնացորդային ռիսկի արդյունքների վրա, վերահսկողները պետք է ունենան հնարավորություն կարգավորելու համակարգը՝ ազդանշանների կամ զգուշացումների ստեղծման համար:			

2.12	Ռիսկի մոդելների փոփոխություններին ավտոմատ կերպով հարմարվող գնահատման ալգորիթմ	R-132	Գնահատման ալգորիթմը պետք է ավտոմատ կերպով երաշխավորի ռիսկի գնահատականների հետահայացություն և կայունություն՝ բոլոր փոփոխությունների դեպքում, որոնք կատարվում են փոփոխականներում, հիերարխիական կառուցվածքներում, կարգավորումներում, կշիռներում, շեմային արժեքներում կամ պատասխանների գնահատականներում:Ռիսկի մոդելի փոփոխությունները պետք է արտացոլվեն իրական ժամանակում՝ առանց ձեռքով վերահաշվարկման անհրաժեշտության:	Պարտադիր պահանջ		

		R-133	Համակարգը պետք է պահպանի ճշգրտությունը և արդյունավետությունը բոլոր վերահաշվարկներում:	Պարտադիր պահանջ		
2.13	Enhancing ML/FT Risk Detection through Machine Learning.	R-134	Համակարգը անհրաժեշտ է ներառի ինտեգրված մեքենայական ուսուցման (ML) և արհեստական ինտելեկտի (AI) հնարավորություններ, որոնք հիմնվելով պատմական տվյալների վրա՝ մշտապես բարելավեն ռիսկերի կանխատեսման ճշգրտությունը: Այն անհրաժեշտ է տրամադրի կանխատեսողական վերլուծություններ՝ գնահատելու ընթացիկ ռիսկերը և կանխատեսելու ապագա ռիսկերը՝ հիմնվելով անցյալի տվյալների և տեսանելի միտումների վրա:	Ցանկալի պահանջ		Օրինակ՝ Համակարգը արձանագրում է միտում, երբ առևտրային բանկը զգալիորեն ավելացնում է իր ներգրավվածությունը բարձր ռիսկ ունեցող ոլորտներում (օրինակ՝ անշարժ գույք, խաղատներ, կրիպտոարժույթների փոխանակում)՝ առանց համապատասխանեց ված հարմարվողականությ

		R-135	Համակարգը անհրաժեշտ է ապահովի կառուցվածքային, հարցումների համար մատչելի տվյալների բազա և բաց API-ներ՝ ապահովելու համար արտաքին AI/ML գործիքների (օրինակ՝ տեղական GPT մոդելների) հետ անվտանգ և արդյունավետ համատեղելիություն, որոնք կարող են ձեռք բերվել առանձին վերահսկողական մարմնի կողմից:	Ցանկալի պահանջ		ան իր ՓԼ/ԱՖ ռիսկերի կառավարման մեխանիզմներում կամ ներքին վերահսկողության համակարգում: Բացի այդ, բանկում կասկածելի գործարքների մասին հաղորդումների թիվը նվազում է, չնայած գործարքային ծավալների և հաճախորդների ավելացմանը: Համադրելով այս տվյալները նմանատիպ բանկերի հետ և հիմնվելով նախորդ

						վերահսկողական գնահատումների վրա՝ համակարգը առաջադրում է նախազգուշացում՝ առաջարկելով բանկը ընդգրկել խորացված վերահսկողության շրջանակում՝ հնարավոր թերությունների հայտնաբերման նպատակով ռիսկային մոտեցման և հաղորդման պարտավորություննե րի կատարման ուղղությամբ:

2.14	Ցանկացած քանակով ֆինանսական ոլորտներ և ցանկացած քանակով կազմակերպություններ տվյալ ոլորտում	R-136	Համակարգը նախագծված է աջակցելու բազմաթիվ ոլորտների՝ ինչպիսիք են բանկային ոլորտը, վարկայինը, ապահովագրությունը և հեշտությամբ կարող է ընդլայնվել՝ ընդգրկելու ցանկացած քանակի ոլորտներ:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ մոդելներ բանկերի, վարկային և ապահովագրական ընկերությունների համար
		R-137	Այն կարող է կառավարել և կազմակերպել ցանկացած քանակի ֆինանսական հաստատություններ յուրաքանչյուր ոլորտի ներսում:	Պարտադիր պահանջ		
2.15	Նոր ռիսկի մոդելներ կառուցում կամ գոյություն ունեցող տարբերակի հարմարեցում	R-138	Համակարգը թույլ է տալիս օգտվողներին ձևավորել նոր ռիսկային մոդելներ՝ հիմնված հատուկ պարամետրերի վրա, ինչպիսիք են աշխարհագրությունը կամ կարգավորող պահանջները:	Պարտադիր պահանջ		

		R-139	Համակարգը կարող է ինտեգրել առկա ռիսկային մոդելները, ապահովելով հարթ անցում կամ թարմացում՝ առանց կորցնելու նախապես մշակված շրջանակները կամ մեթոդաբանությունները:	Պարտադիր պահանջ		
		R-140	Օգտվողները կարող են հարմարեցնել մոդելները՝ հիմնվելով նոր տվյալների վրա կամ փոփոխվող ռիսկերի գնահատման կարիքների վրա, ապահովելով, որ ռիսկերի կառավարման գործընթացները լինեն ժամանակակից և ընդարձակելի:	Պարտադիր պահանջ		
2.16	Սխալ տվյալների (data points) թարմացման հնարավորություն	R-141	Համակարգը պետք է թույլ տա օգտվողներին ճանաչել այն տվյալների կետերը, որոնք կարող են լինել սխալ:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ օգտագործողը հայտնաբերում է սխալ

		R-142	Օգտագործողները պետք է կարողանան ընտրել այդ տվյալների կետերը թարմացնել:	Պարտադիր պահանջ		տեղեկատվության գրառում համակարգում: Նա կարող է հայտ ներկայացնել համապատասխան թույլտվություններ ունեցող անձին թարմացման վերաբերյալ:
		R-143	Միայն լիազորված օգտագործողները (օրինակ՝ ադմինիստրատորներ կամ տվյալների կառավարիչներ) պետք է ունենան տվյալների կետերի թարմացման հնարավորություն:	Պարտադիր պահանջ		

2.17	Դերեր և Թույլտվություններ	R-144	Համակարգը պետք է ունենա դերերի և իրավասությունների կառավարման գործառույթ, որը կթույլատրի ճշգրտորեն սահմանել, կառավարել և վերահսկել օգտվողների հասանելիությունը տարբեր մոդուլների և գործողությունների նկատմամբ՝ RBAC (Role-Based Access Control), SOD (Segregation of Duties) և Least Privilege սկզբունքների համաձայն:	Պարտադիր պահանջ		

		R-145	Համակարգը պետք է ապահովի 4 աչքերի հաստատման գործընթաց բոլոր վերագրանցումների համար՝ կապված ներհատուկ ռիսկի և կառավարման որակի/հսկողությունների փոփոխման հետ:	Պարտադիր պահանջ		
		R-146	Բոլոր վերագրանցումները և գործողությունները պետք է փաստագրվեն հաշվետու լոգերում՝ հստակ մանրամասներով այն մասին, թե ով է նախաձեռնել և հաստատել գործողությունները: Ինչպես նաև՝ սխալները և համակարգային իրադարձությունները՝ հետագա աուդիտի և դեբագի աջակցման համար:	Պարտադիր պահանջ		
3 Տվյալների վերլուծության հնարավորություններ						

3.1	ՖԿ-ի և ոլորտների ամփոփ վիճակագրական տվյալներ	R-147	Համակարգը պետք է ապահովի ոլորտներում ՓԼ/ԱՖ կարևոր ցուցիչների ավտոմատ հաշվարկ և ամփոփում: Հաշվարկվում են նվազագույնը, միջինը, մոդան, առավելագույն արժեքը, ընդհանուր արժեքներ և հարցմանը պատասխանող ՖԿ-ի քանակը, ինչը թույլ է տալիս գնահատել ոլորտի ռիսկերը:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Տրամադրել որոշակի բանկի կասկածելի գործարքների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն և համեմատել դրա արժեքները ոլորտի միջին ցուցանիշների հետ:
		R-148	Համակարգը պետք է ապահովի ամփոփումներ յուրաքանչյուր ՖԿ-ի համար, ինչը թույլ է տալիս հայտնաբերել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության հետ կապված արտառոց գործունեություն: Ամփոփումները պետք է տրամադրվեն յուրաքանչյուր ՖԿ-ի համար՝ գնահատելու նրանց ռիսկային	Պարտադիր պահանջ		

			մակարդակը և կառավարման որակի/հսկողությունների արդյունավետությունը:			
3.2	Նախորդ հաշվետու ժամանակահատվածի նկատմամբ փոփոխություններ, Տվյալների միտումների վերլուծություն	R-149	Համակարգը պետք է հայտնաբերի և գրանցի փոփոխությունները ընթացիկ և նախորդ հաշվետու ցիկլերի միջև: Փոփոխությունները կարող են ներառել.	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Եթե ֆինանսական հաստատության ռիսկային գնահատականը նվազել է նախորդ ցիկլի համեմատ, համակարգը պետք է նշի փոփոխությունը և քանակականացնի տարբերությունը:
			Ցուցանիշների տարբերություններ, այդ թվում և քանակական և որակական (օրինակ՝ գնահատականների աճ կամ նվազում)	Պարտադիր պահանջ		
			Ռիսկային գնահատականների, շեմերի կամ այլ կատարողական ցուցանիշների փոփոխություններ	Պարտադիր պահանջ		

			Մասնավոր հարցերի կամ հարցումների պատասխանների տարբերություններ	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Օգտագործողը կարող է ցանկանալ համեմատել միայն բարձր ռիսկային գնահատականները հաշվետու ցիկլերի միջև:
			ՖԿ-ին ներհատուկ փոփոխություններ, ինչպիսիք են գործարքների ծավալները կամ համապատասխանության մակարդակը	Պարտադիր պահանջ		
		R-150	Օգտագործողները պետք է կարողանան տեսնել այդ փոփոխությունները համեմատական հաշվետվության կամ վահանակի տեսքով:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Բանկը կարող է օգտագործել միտումների վերլուծությունը՝ դիտարկելու վերջին վեց ամիսների ընթացքում բարձր ռիսկային գործարքների աճը՝ ՓԼ/ԱՖ ռիսկերը հայտնաբերելու համար:
		R-151	Համակարգը պետք է աջակցի միտումների վերլուծությանը ցանկացած սահմանված տվյալների չափանիշի (օրինակ՝ ռիսկային միավորներ, գործարքների ծավալներ, համապատասխանության խախտումներ) համար՝ որոշակի	Պարտադիր պահանջ		

			ժամանակահատվածի ընթացքում:			
		R-152	Համակարգը պետք է գեներացնի տվյալ չափանիշի փոփոխության վիզուալ ներկայացում, ներառյալ գծային գրաֆիկներ, սյունակային գծապատկերներ կամ այլ համապատասխան վիզուալիզացիաներ:	Պարտադիր պահանջ		Օրինակ: Ֆինանսական հաստատությունը կարող է դիտարկել խոշոր կանխիկ դեպոզիտների միտումները ամսական/եռամսյակային կամ այլ կտրվածքով կտրվածքով:
		R-153	Չափանիշի ընտրություն: Օգտվողները պետք է կարողանան ընտրել, թե որ չափանիշները վերլուծել, և համակարգը պետք է թույլ տա համեմատել տարբեր չափանիշներ:	Պարտադիր պահանջ		

		R-154	Համակարգը պետք է ապահովի ռիսկի գնահատման մոդելների համար հարմարեցվող չափորոշիչների (մետրիկների) աջակցություն: Վերահսկողներն իրավունք պետք է ունենան ստեղծել իրենց չափորոշիչները զրոյից, փոփոխել կամ ընդլայնել ներբեռնված նախորոշված չափանիշները (օրինակ՝ ռիսկի գնահատականներ, գործարքների ծավալ), ինչպես նաև ներմուծել վաճառողի կամ այլ վերահսկողական մարմինների կողմից մշակված տիպային ձևանմուշներ և համատեղ մոդելներ:Ժամանակահատվածի հարմարեցում:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Համակարգը պետք է ցույց տա, որ բարձր արժեք ունեցող գործարքների գագաթնակետը եղել է տարվա առաջին եռամսյակում:

		R-155	Օգտվողները պետք է կարողանան ընտրել տվյալների վերլուծության համար ժամանակահատվածը՝ ընտրելով , օրինակ, օրական, շաբաթական, ամսական, եռամսյակային կամ տարեկան համեմատություններ:	Պարտադիր պահանջ		
		R-156	Վերլուծության ցուցանիշներ: Համակարգը պետք է հաշվարկի միտումների վերլուծության համար առանցքային ցուցանիշները, ներառյալ՝	Պարտադիր պահանջ		
			Տոկոսային փոփոխություններ ժամանակի ընթացքում	Պարտադիր պահանջ		
			Շարժվող միջիններ՝ կարճաժամկետ տատանումները հարթելու համար	Ցանկալի պահանջ		
			Աճման կամ նվազման արագություն	Պարտադիր պահանջ		

			Տվյալների գագաթների և իջվածքների հայտնաբերում	Ցանկալի պահանջ		
		R-157	Վիզուալ և աղյուսակային հաշվետվություններ: Համակարգը պետք է գեներացնի և՛ վիզուալ հաշվետվություններ (օրինակ՝ գրաֆիկներ, աղյուսակներ), և՛ աղյուսակային հաշվետվություններ, որոնք ցուցադրում են տվյալների արժեքները ժամանակի ընթացքում:	Պարտադիր պահանջ		
		R-158	Օգտվողները պետք է կարողանան արտահանել այս հաշվետվությունները տարբեր ձևաչափերով, ինչպիսիք են Excel, PDF կամ CSV:	Պարտադիր պահանջ		

		R-159	Անոմալիաների հայտնաբերում կամ վաղ ահազանգում: Համակարգը պետք է ներառի անոմալիաների հայտնաբերման գործառույթ, որը կտեղեկացնի օգտվողներին, եթե տվյալ չափանիշի շեղումներ կամ անսպասելի փոփոխություններ են նկատվում:	Պարտադիր պահանջ		
3.3	Շեմերի սահմանում	R-160	Համակարգը պետք է հնարավորություն ունենա շեմերի ընտրության, պահպանման և կիրառման գործում առանցքային ՓԼ/ԱՖ ռիսկային ցուցանիշների համար:	Պարտադիր պահանջ		
		R-161	Օգտվողները պետք է կարողանան սահմանել և վերաօգտագործել հարմարեցված ՓԼ/ԱՖ շեմերը:	Պարտադիր պահանջ		
		R-162	Համակարգը պետք է թույլ տա վերահսկողներին սահմանել և	Պարտադիր պահանջ		

			կարգավորել անհատական մոնիթորինգի շեմային արժեքներ:			
		R-163	Շեմերի խախտման դեպքում համակարգը անհրաժեշտ է ստեղծի ազդանշաններ, որոնք կերևան վերահսկողական վահանակում: Այս ազդանշանները պետք է իրապես տարբեր լինեն մոդելի գնահատման շեմերից և ընդգրկեն հետևյալ պայմանները՝ բացարձակ արժեքների գերազանցումներ, պատմական առավելագույնների անցում, նշանակալի տոկոսային փոփոխություններ կամ օգտատիրոջ կողմից սահմանված համակցված կանոններ: Բոլոր ազդանշանները պարտադիր	Ցանկալի պահանջ		

			պետք է գրանցվեն աուդիտի արձանագրություններում:			
3.4	Վահանակներ ոլորտի և ոլորտի ամփոփ վիճակագրական տվյալների վերաբերյալ	R-164	Ոլորտի ամփոփ(այդ թվում՝ վիճակակագրական) վահանակներ: • Այս վահանակները ապահովում են տվյալ ոլորտի ընդհանուր ռիսկերի գործոնների և միտումների համապարփակ դիտում: Օգտատերերը կարող են հասանելիություն ունենալ հիմնական տվյալներին:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ ֆինանսական ծառայությունների ոլորտում կարգավորող մարմինը կարող է օգտագործել համախմբված վիճակագրությունը՝ բանկերից ստացված

		R-165	Ներառում է կանոնակարգերի համապատասխանության, ի հայտ եկող ռիսկերի կամ բարելավման հնարավորությունների ընդգծում:	Պարտադիր պահանջ		տվյալների հիման վրա գնահատելու ոլորտի ընդհանուր ռիսկերի մակարդակը, ինչպիսիք են՝ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերը կամ վերջիններիս աճը
		R-166	Տրամադրում է ամփոփ վիճակագրական տվյալներ, ինչպիսիք են ոլորտում ռիսկերի մակարդակը:	Պարտադիր պահանջ		
		R-167	Այս տվյալները ներկայացվում են վիզուալ ձևաչափերով (գծապատկերներ, աղյուսակներ կամ գրաֆիկներ)՝ պարզեցնելու համար տվյալների մեկնաբանումը և դյուրին դարձնելու բարդ տվյալների ըմբռնումը:	Պարտադիր պահանջ		
		R-168	Ամփոփ վահանակները թույլ են տալիս օգտվողներին համեմատել կատարողականը տարբեր ՖԿ-ի կամ ոլորտների	Պարտադիր պահանջ		

			միջև, բացահայտելով օրինաչափություններ կամ շեղումներ:			
		R-169	Անհատականացվող դիտումներ Վերահսկողները հաճախ կարող են հարմարեցնել վահանակները՝ կենտրոնանալու համար հատուկ չափանիշների, ժամանակահատվածների կամ հետաքրքրության ոլորտների վրա:	Պարտադիր պահանջ		

		R-170	Բարձր հաճախականությամբ տվյալներ Վահանակները պետք է հնարավորություն տան ցուցադրել մոտ իրական ժամանակի մոնիթորինգի տվյալներ (օրինակ՝ ամսական, շաբաթական կամ օրական ներբեռնումներ) համադրաբար պլանավորված վերահսկողական ցիկլի (չորրորդական) տվյալների հետ: Այս ֆունկցիոնալությունը թույլ կտա վերահսկողներին արագ արձագանքել ոլորտի գործունեության կամ ռիսկի մակարդակի նշանակալի փոփոխություններին՝ պահպանելով կանխատեսված AML/CFT ռիսկերի գնահատման ցիկլի կայունությունն ու ամբողջականությունը:	Պարտադիր պահանջ		

3.5	Տրամադրում է բազմաթիվ ՖԿ-ի գնահատականների, պատասխանների և դասակարգումների հորիզոնական համեմատություն	R-171	Համակարգը ցուցադրում է մի քանի ՖԿ-ի տվյալները կողք կողքի՝ հեշտացնելով նրանց ռիսկային գնահատականների կամ հարցումների պատասխանների համեմատությունը տարբեր կատեգորիաների կամ չափանիշների հիման վրա:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ Բանկային ոլորտ: Կարգավորող մարմինը կարող է համեմատել տարբեր բանկերի ռիսկային գնահատականները կողք կողքի՝ հասկանալու, թե որ հաստատություններն են ամենաարդյունավետը ռիսկի կառավարման հարցում:
		R-172	Համեմատությունը ներառում է գնահատականներ (օրինակ՝ ռիսկային գնահատականներ, համապատասխանության գնահատականներ), պատասխաններ հարցումներից կամ գնահատումներից, և դասակարգումներ, ինչը թույլ է տալիս օգտվողներին տեսնել, թե որ ՖԿ-ն է լավագույնը կամ	Պարտադիր պահանջ		

			վատագույնը յուրաքանչյուր կատեգորիայի մեջ:			
		R-173	Օգտվողները կարող են հարմարեցնել համեմատվող չափանիշները կամ ցուցանիշները՝ համեմատելու համար ՖԿ-ը իրենց գործունեությանը կամ կարգավորող պահանջներին համապատասխան:	Պարտադիր պահանջ		
		R-174	Համակարգը թույլ է տալիս օգտվողներին ֆիլտրել և դասակարգել արդյունքները՝ կենտրոնանալով հատուկ ոլորտների, ժամանակային շրջանակների կամ	Պարտադիր պահանջ		

			պատասխանների տեսակների վրա:			
		R-175	Համեմատությունը հաճախ ներկայացվում է գրաֆիկական ձևաչափով (գրաֆիկներ, աղյուսակներ, գծապատկերներ), ինչը թույլ է տալիս արագորեն հայտնաբերել օրինաչափություններ կամ շեղումներ ՖԿ-ի միջև:	Պարտադիր պահանջ		

7. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

No.	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ

	-	-	-	-	-	-
1	Գործառնական համակարգ. ցանկալի է Windows Server 19 կամ ավելի նոր տարբերակ	R-176	Ցանկալի է, որ համակարգը սահուն աշխատի Windows Server 19-ում կամ ավելի նոր տարբերակում: Համակարգը չպետք է օգտագործի հնացած կամ խոցելի պրոտոկոլներ՝ արձանագրություններ (օրինակ՝ SMBv1, TLS 1.0/1.1):	Պարտադիր պահանջ		
2	Տվյալների բազայի պահանջ. DBMS: ցանկալի է MS SQL SERVER	R-177	Համակարգը պետք է կապված լինի հետևյալ տվյալների բազաներից (DBMS) առնվազն մեկի հետ՝ MS SQL SERVER, Oracle(ցանկալի է, որ աջակցի վերջին երկարաժամկետ սպասարկվող տարբերակին (LTS)՝ խուսափելու հնացած և խոցելի թողարկումներից): Վերջիններս համատեղելի են բոլոր հիմնական վեբ	Պարտադիր պահանջ		

			դիտարկիչների հետ(Տես գլուխ 9-ի 3-րդ կետ):			
3	Ինտեգրված է մշտադիտարկման ճկուն համակարգ	R-178	Մշտադիտարկման ճկուն համակարգ՝ զտման հնարավորությամբ (նաև հատուկ բաղադրիչների մշտադիտարկում, օրինակ՝ աշխատանքային գործընթացի մշտադիտարկում)՝ խափանումների որոնման և ուղղման, խափանումների պատճառները որոշելու և դեպքերի վերաբերյալ հաղորդագրությունները ֆիլտրելու ժամանակի սպառումը նվազագույնի հասցնելու համար:	Պարտադիր պահանջ		

4	Համակարգի վերականգնման գործիքներ	R-179	Անհրաժեշտ մուտքի դեպքում օգտագործողները կարող են վերականգնել համակարգի ցանկացած տեղեկության կորուստ: Համակարգը պետք է ինտեգրվի Veeam ծրագրային ապահովման հետ:	Պարտադիր պահանջ		
5	Համակարգի կառավարման գործիքներ	R-180	Համակարգի կառավարման գործիքները լիովին հասանելի են (օգտատիրոջ գրանցում, օգտատիրոջ իրավունքների շնորհում, օգտատիրոջ փոխարինում, կատալոգների սպասարկում)	Պարտադիր պահանջ		
6	Համակարգի արդյունավետության ապահովման գործիքներ	R-181	Հայտատուն պարտավոր է ապահովել համակարգի աշխատանքի վստահելիությունը երաշխավորող գործիքներ, այդ թվում՝ մոնիթորինգի և ազդանշանների ստեղծման հնարավորություններ (օրինակ՝ հիշողության օգտագործում,	Պարտադիր պահանջ		

			պահեստավորման տարողություն, համակարգային սխալներ և աշխատանքի անխափանություն), որպեսզի լուծումը գործի հուսալի և համաձայնեցված կատարողական չափանիշների:			
7	Համակցման հնարավորություններ	R-182	Համակցման հնարավորությունները ներառում են Client/Server, N-tier, middleware architecture և service-oriented architecture (SOA) տարբերակներից ցանկացածի կիրառություն:	Պարտադիր պահանջ		

8. ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ, ԻՆՏԵԳՐՄԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

No.	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջներ ի տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-
1	Ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս առանձնացնելու օգտատերերի հասանելիության իրավունքները/դերերը	R-183	ա) Օգտատերերի հասանելիության դերերը/իրավունքները մուտքագրվում են համակարգ՝ օգտատերերի և դերերի կառավարման նպատակով:	Պարտադիր պահանջ		Օրինակ՝ նոր աշխատակիցը AD-ից ստանում է մուտքի հասանելիություն ընդհանուր և իր պարտականություննե րի շրջանակներին համապատասխան ֆունկցիոնալ գործընթացներին:
		R-184	բ) Նշված տեղեկատվությունը հնարավոր է համակարգ մուտքագրել ինչպես ձեռքով, այնպես էլ այլ համակարգերից՝ ավտոմատացված հարցումների միջոցով (AD, SSO և այլն):	Պարտադիր պահանջ		

		R-185	գ) Օգտատերերի հաջող գրանցումը ենթադրում է բոլոր հնարավոր իրավասությունների/դերերի վերաբերյալ կարգավորումներ, ամրացում կառուցվածքի այս կամ այն ճյուղին, ինչպես նաև համակարգում կատարված գործողությունների և փոփոխությունների ժանանակ կատարողի նույնականացում (principle of non-repudiation)	Պարտադիր պահանջ		
2	Օգտատերերի բոլոր գործողությունները համակարգում լոգավորվում են		Գործընթացում օգտատերերի գործողությունների լոգավորման հնարավորություն: Մասնավորապես՝	Պարտադիր պահանջ		
		R-186	1. Համակարգը պետք է պահպանի օգտագործողների մուտքերի և գրանցման բոլոր գործողությունների լոգերը՝ ապահովելով անվտանգության	Պարտադիր պահանջ		

			մոնիտորինգ և անոմալիաների հայտնաբերում:			
		R-187	2. Համակարգը պետք է կիրառի Գաղտնաբառերի անվտանգության քաղաքականություն (Password Policy)՝ ապահովելու ուժեղ և հաճախակի փոխվող գաղտնաբառեր:	Պարտադիր պահանջ		
3	Համակարգում վարվում է բոլոր ֆայլային արտահանումների աուդիտային մատյան	R-188	ա) Աուդիտային մատյանը պարունակում է	Պարտադիր պահանջ		Եթե օգտատերը ֆայլ է ներբեռնում համակարգից, ֆայլին կցվում է օգտատիրոջ եզակի ստորագրությունը կամ անուն ազգանունը:
		R-189	արտահանումներ, այդ թվում՝ արտահանումը կատարած օգտատերը, արտահանման ժամը և ամսաթիվը,	Պարտադիր պահանջ		
		R-199	բ) Համակարգից արտահանված ֆայլը պետք է բավականաչափ տեղեկատվություն պարունակի այն արտահանած օգտատիրոջը նույնականացնելու համար,	Պարտադիր պահանջ		

			այդպիսի տեղեկատվության ցանկացած փոփոխության դեպքում ֆայլը պետք է դառնա անգործածելի/փչացած:			
4	Համակարգը տալիս է իրադարձությունների մատյանների վարման ֆունկցիոնալ հնարավորություն	R-200	ա) Համակարգում սահմանված իրադարձությունների (այդ թվում՝ աշխատանքի ընթացքում ի հայտ եկած սխալների և սահմանափակումների) վարման և մշտադիտարկման ֆունկցիոնալ հնարավորություն:	Պարտադիր պահանջ		
		R-201	բ) Սխալների խմբավորում և տարբեր ադմինիստրատորների խմբերի հասցեագրում:	Պարտադիր պահանջ		

5	Համակարգում առկա է համակարգի կառավարման և մշտադիտարկման պատուհան	R-202	Համակարգը պետք է ապահովի իրական ժամանակի տեսանելիություն աշխատանքի և մատչելիության մասին՝ ներառյալ հետևյալ մետրիկաները՝ հիշողության օգտագործում, պրոցեսորի բեռնվածություն, պահեստավորման տարողություն, API-ի առողջական վիճակ և աշխատանքի անխափանություն: Այս մետրիկաները պետք է հասանելի լինեն ադմինիստրատիվ վահանակի միջոցով և մատուցվեն ստանդարտ ինտերֆեյսներով (օրինակ՝ լոգեր, API-ներ)՝ ինտեգրման համար ԿԲ-ի	Պարտադիր պահանջ		Արտադրողականության և սխալների գրաֆիկական արտապատկերում ժամանակի իրական ռեժիմում:

			մոնիթորինգի և SIEM գործիքների հետ:			
6	Համակարգը պետք է ունենա արտաքին համակարգերի հետ ինտեգրման հետևյալ տեխնոլոգիաները/պրո¬տոկոլները	R-203	Համակարգը պետք է ապահովի տվյալների փոխանցման և ինտեգրման բազմազան մեխանիզմներ, ինչը կարևոր է տարբեր համակարգերի միջև հուսալի, անվտանգ և արդյունավետ փոխգործակցության համար: Ստորև ներկայացված են հիմնական տեխնոլոգիական պահանջները՝ տվյալների փոխանակման համար.	Պարտադիր պահանջ		

		R-204	ա) API պրոտոկոլներ (REST, SOAP, RPC)	Պարտադիր պահանջ		
		R-205	բ) SFTP, HTTPS	Պարտադիր պահանջ		
		R-206	գ) Ցանկացած տեխնոլոգիայի տվյալների բազայի ուղիղ հասանելիություն,	Պարտադիր պահանջ		
		R-207	դ) (D) MQ տեխնոլոգիաներ:	Ցանկալի պահանջ		
7	Համակարգը պետք է աջակցի տվյալների փոխանցման հետևյալ ձևաչափերը	R-208	XLSX կամ JSON.	Պարտադիր պահանջ		

9. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՄԻՋԵՐԵՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

No.	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-

1	Առնվազն 10 օգտատերերի արագ և առանց խափանումների սպասարկման ապահովում (առավելագույն քանակը՝ 50).	R-209	Միաժամանակյա աշխատող օգտատերերի աշխատանքի անխափան ապահովում և համակարգին հասանելիություն:	Պարտադիր պահանջ		
2	Համակարգն ունի մեծ ծավալի ֆայլերի հետ գործ ունենալու մասշտաբայնություն՝ առանց արտադրողականության հետ կապված որևէ խնդրի	R-210	Համակարգը ունակ է գործ ունենալու տվյալների հարաճուն քանակության հետ՝ առանց ազդեցություն թողնելու համակարգի արագության կամ հուսալիության վրա: Համակարգը պետք է ապահովի դիտարկման մեխանիզմներ (monitoring mechanisms), օգտագործի caching և սեղմման մեթոդներ, որպեսզի մեծ ֆայլերի հետ գործելը չազդի համակարգի արագության վրա:	Պարտադիր պահանջ		

3	Համակարգը չունի կախվածություն դիտարկչից և կարող է օգտատերերին հասանելի լինել տարբեր սարքերից և հարթակներից	R-211	Բազմաթիվ դիտարկիչների հետ համատեղելիություն. Համակարգը համատեղելի է բոլոր հիմնական վեբ դիտարկիչների հետ, ինչպիսիք են՝ Google Chrome, Mozilla Firefox, Microsoft Edge, Apple Safari և այլն:	Պարտադիր պահանջ		

4	Համակարգը կարող է ապահովել մեծ թվով ոլորտների և ՖԿ-ի գնահատումը առնվազն եռամսյակային պարբերականությամբ	R-212	Համակարգը պետք է աջակցի AML/CFT ռիսկերի գնահատման եռամսյակային պաշտոնական վերահսկողական ցիկլին, որը հանդիսանում է հիմք վերահսկողական պլանավորման և առաջնահերթությունների սահմանման համար՝ ընդգրկելով 17 բանկ, 42 վարկային կազմակերպություն, 16 վճարային և հաշվարկային կազմակերպություն, 22 ներդրումային ընկերություն և 1 ավանդատու: Միևնույն ժամանակ՝ համակարգը պետք է ապահովի ավելի բարձր հաճախականությամբ բնածին ռիսկի գնահատումներ մոնիթորինգի նպատակով (օրինակ՝ ամսական, շաբաթական կամ օրական)՝ գնահատման ցիկլերի միջև հաստատությունների կամ ոլորտի մակարդակում նկատվող նշանակալի փոփոխությունները հստակ արձանագրելու համար: Այս	Պարտադիր պահանջ		

			երկակի մոտեցումն թույլ է տալիս վերահսկողներին պահպանել համաչափ և ամբողջական վերահսկողական ցիկլ՝ ներգրավման պլանավորման համար, և միաժամանակ օգտվել դինամիկ մոնիթորինգի գործիքներից՝ նորանոր ռիսկերը արագ հայտնաբերելու և ժամանակին միջամտություններ իրականացնելու նպատակով:			
5	Օգտատերերը հեշտությամբ են	R-213	Օգտագործողի միջերեսի հիմնական պահանջներ	Պարտադիր պահանջ		

	օգտագործում համակարգը	R-214	Հեշտ և ինտուիտիվ նավիգացիա – Համակարգի կառուցվածքը պետք է թույլ տա օգտատերերին արագ գտնել իրենց անհրաժեշտ ֆունկցիոնալությունը՝ առանց երկար որոնման:	Պարտադիր պահանջ		
		R-215	Գործողությունների հստակ ուղեցույց (User Journey Clarity) – UI/UX դիզայնը պետք է ապահովի, որ օգտատերերը հասկանան իրենց հաջորդ քայլերը և կարողանան հեշտությամբ կատարել անհրաժեշտ գործողությունները:	Պարտադիր պահանջ		
		R-216	Հասանելիություն (Accessibility) – Համակարգը պետք է լինի հարմար տարբեր օգտատերերի համար (Ցանկալի է բավարի Web Content Accessibility Guidelines (WCAG) 2.1-ի պահանջներին):	Պարտադիր պահանջ		

10. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

N	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-
1	Համակարգն ապահովում է օգտատիրոջ և սերվերի միջև տեղեկատվության փոխանակման անվտանգությունը	R-217	Համակարգը պետք է ապահովի օգտատիրոջ և սերվերի միջև տվյալների անվտանգ փոխանցում, կանխելով տվյալների արտահոսքը, չարտոնված մուտքը և կիբեր սպառնալիքները	Պարտադիր պահանջ		
2	Անվտանգության միջազգային ստանդարտներին համապատասխանություն	R-218	Համակարգը նախընտրելի է համապատասխանի միջազգային անվտանգության չափանիշներին, ինչպիսիք են՝ ISO 27001 – Տեղեկատվության անվտանգության	Պարտադիր պահանջ		

			կառավարման համակարգ: Մասնավորապես՝ Համակարգը պետք է համապատասխանի առնվազն ISO 27001:2022 ստանդարտի հետևյալ control-ներին՝			
		R-219	8.25 - Secure development life cycle	Պարտադիր պահանջ		
		R-220	8.26 - Application security requierments	Պարտադիր պահանջ		
		R-221	8.27 - Secure system architecture and engineering principles	Պարտադիր պահանջ		
		R-222	8.28 - Secure coding	Պարտադիր պահանջ		
		R-223	8.29 - Security testing in development and acceptance	Պարտադիր պահանջ		
		R-224	8.30 - Outsourced development	Պարտադիր պահանջ		

3	Համակարգը տալիս է կցված ֆայլերին վերաբերող չափի, ձևաչափի այլ չափորոշիչների սահմանափակման հնարավորություն	R-225	Համակարգը պետք է ապահովի կցված ֆայլերի (attachments) սահմանափակման գործառույթ, ինչը թույլ կտա վերահսկել ֆայլերի չափերը, ձևաչափերը և այլ չափորոշիչները՝ համապատասխան տեղեկատվական անվտանգության և տվյալների կառավարման պահանջներին:	Պարտադիր պահանջ		
4	Համակարգի՝ վթարից վերականգնման պլան (Disaster Recovery Plan)	R-226	Համակարգը պետք է ապահովի ավտոմատ կրկնօրինակում, տվյալների վերականգնում, վթարային իրավիճակներում անխափան աշխատանք և արագ վերագործարկման մեխանիզմներ (Failover &	Պարտադիր պահանջ		

			Failback), ինչպես նաև համապատասխանի RTO (Recovery Time Objective) և RPO (Recovery Point Objective) սահմանված չափանիշներին:			
5	Համակարգն ունի ֆայլերը վերծանելու, ծածկագրելու և ապածածկագրելու (encrypt, decrypt) ֆունկցիոնալ հնարավորություն	R-227	Ֆայլերի գաղտնագրման և բանալիների օգնությամբ ֆայլերի վերծանման, ծածկագրման և ապածածկագրման ֆունկցիոնալ հնարավորություն: Անհրաժեշտ է կիրառել ժամանակակից գաղտնագրման ալգորիթմներ (AES), և բանալիների կառավարումն իրականացնել Key Management System-ի (KMS) միջոցով:Համակարգը	Պարտադիր պահանջ		

			պետք է ապահովի ծածկագրման և ապածածկագրման գործընթացների ավտոմատ իրականացում:			
		R-228	Համակարգը ապահովում է, որ բոլոր զգայուն տվյալները, ինչպես փոխանցման ընթացքում, այնպես էլ հանգստի վիճակում, գաղտնագրված լինեն առնվազն SHA 256 (Secure Hash Algorithm 256-bit) ալգորիթմով:	Պարտադիր պահանջ		
6	Լրացուցիչ անվտանգության միջոցներ (դերեր և իրավասություններ)	R-229	Համակարգը կիրառում է բազմագործոնային վավերացում (MFA): Սա պահանջում է օգտվողներից տրամադրել երկու կամ	Պարտադիր պահանջ		

			ավելի վավերացման միջոցներ մուտք գործելու համար (օրինակ՝ գաղտնաբառ + մեկանգամյա կոդ (OTP) էլ. նամակի կամ SMS-ի միջոցով):			
		R-230	Համակարգը նաև պետք է ինտեգրվի այնպիսի MFA լուծումների հետ, որոնք ապահովում են օգտվողի նույնականացումը բջջային հավելվածի միջոցով, մասնավորապես՝ Push notification մեխանիզմի կիրառմամբ, OTP ծածկագրերի միջոցով: Վերոնշյալ տեսակի ծրագրային ապահովումներից են Openspan, Thales կամ	Պարտադիր պահանջ		

			համարժեք այլ լուծումներ, որոնք համապատասխանում են ոլորտային անվտանգության չափանիշներին:			
		R-231	Համակարգը կիրառում է դերահիմնավորված մուտքի կառավարում, որպեսզի սահմանափակվի մուտքը տվյալներին և համակարգի գործառույթներին՝ հիմնվելով օգտվողի դերերի վրա: Սա նվազեցնում է չարտոնված տվյալների հասանելիության և չարաշահման վտանգը:	Պարտադիր պահանջ		

		R-232	Տրամադրում է օգտվողների գործունեության համապարփակ լոգագրում և մոնիտորինգ: Հետևում է մուտքագրման փորձերին, տվյալների փոփոխություններին և այլ կարևոր գործողություններին՝ կասկածելի վարքագծերի և հնարավոր անվտանգային խախտումների հայտնաբերման համար:	Պարտադիր պահանջ		
		R-233	Համակարգը պետք է ինտեգրվի Trellix SIEM (Security Information and Event Management) համակարգի հետ՝ ապահովելով բոլոր համապատասխան իրադարձությունների,	Պարտադիր պահանջ		

			գործողությունների և անվտանգության հետ կապված տեղեկամատյանների ավտոմատացված և անխափան փոխանցում դեպի SIEM:			
7	Անընդհատության ապահովում	R-234	Կրկնօրինակություն (Redundancy): Համակարգը պետք է աջակցի կրկնօրինակման բաղադրիչներին (օրինակ՝ սերվերներ, տվյալների բազաներ, պահեստավորումներ), որոնք վերացնում են խափանման մեկ կետը: Հայտատուն պատասխանատու է ապահովելու, որ հավելվածային շերտը	Պարտադիր պահանջ		

			լիովին համատեղելի լինի ԿԲ բարձր մատչելիության ենթակառուցվածքի հետ, տրամադրի անհրաժեշտ կարգաբերման ուղեցույցներ և փորձարկումների միջոցով հաստատի, որ բաղադրիչի անհաջողության դեպքում կրկնօրինակ բաղադրիչները ավտոմատ կերպով կվերցնեն գործառույթները՝ անխափան ծառայության ապահովման նպատակով:			

		R-235	Մոնիտորինգ և ահազանգեր: Համակարգը պետք է ունենա ներքին կիրառական մակարդակի մոնիթորինգի և ազդանշանների ավտոմատացված մեխանիզմներ՝ ներառյալ ծառայության կարգավիճակի, սխալների լոգերի, API-ի առողջության, աշխատանքի կատարման և տվյալների մշակման մոնիթորինգ, որոնք թույլ կտան ադմինիստրատորներին կանխարգելել և արագ արձագանքել խնդիրներին՝ մինչև դրանք ծառայության ընդհատում առաջացնեն: Մատակարարը պարտավոր	Պարտադիր պահանջ		

			է երաշխավորել, որ համակարգը լիովին համատեղելի է ԿԲ գործող մոնիթորինգի և SIEM համակարգերի հետ՝ տրամադրելով անհրաժեշտ լոգեր, մետրիկներ և API-ներ ինտեգրման համար:			

11. ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՊԱՀԱՆՋՆԵՐ

N	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-

1	Մուտք գործելու անհաջող փորձեր	R-236	Համակարգը սահմանափակում է կիրարկում օգտատիրոջ կողմից անվավեր մուտքի հաջորդական փորձերի որոշակի քանակի նկատմամբ:	Պարտադիր պահանջ		
		R-237	Մուտքի անհաջող փորձերի առավելագույն թվի գերազանցման պարագայում համակարգն ինքնաշխատ հետաձգում է մուտքի հաջորդ հուշումը, համաձայն համակարգի կարգաբերումների, կամ կողպում է հաշիվը, մինչև ադմինիստրատորն այն կարգելաբացի: Անհաջող փորձի առավելագույն թվի գերազանցման դեպքում	Պարտադիր պահանջ		

			անհրաժեշտ է նաև ներդրված լինի ծանուցման մեխանիզմ:			
2	Աշխատաշրջանների (սեանսների) դադարեցում	R-238	Համակարգն օգտատերերի միացման սեանսը ինքնաշխատ կերպով դադարեցնում է անգործության որոշակի ժամանակահատվածից հետո:	Պարտադիր պահանջ		
3	Ինքնաշխատ նշագրումներ	R-239	Համակարգը, օգտագործելով անվանումների ստանդարտ պայմանաթղթեր, նշագրում է ելքային տվյալները՝ նույնացնելու համար տարածման, մշակման կամ	Պարտադիր պահանջ		

			բաշխման հատուկ իրահանգները:			
4	Աուդիտի ենթակա իրադարձություններ		Համակարգը գեներացնում է աուդիտային գրառումներ հետևյալ իրադարձությունների համար.	Պարտադիր պահանջ		
		R-240	Հաշիվների ստեղծում, ակտիվացում, փոփոխում, վերանայում, անջատում և հեռացում:	Պարտադիր պահանջ		
		R-241	Պաշտպանված օբյեկտների ստեղծում, փոփոխում և դրանց նկատմամբ հասանելիություն	Պարտադիր պահանջ		
		R-242	Մուտքի և ելքի իրադարձություններ	Պարտադիր պահանջ		
		R-243	Մուտքի և հասանելիության անհաջող փորձեր	Պարտադիր պահանջ		

5	Աուդիտային գրառումների բովանդակություն	R-244	Համակարգն ապահովում է աուդիտային գրառումներ, որոնք բավարար տեղեկություններ են տալիս տեղի ունեցած իրադարձությունների, իրադարձությունների աղբյուրների, ինչպես նաև իրադարձությունների արդյունքների մասին: Աուդիտային գրառումների բովանդակությունը ներառում է.	Պարտադիր պահանջ		
		R-245	իրադարձության ամսաթիվը և ժամը,	Պարտադիր պահանջ		
		R-246	համակարգի բաղադրիչը,	Պարտադիր պահանջ		
		R-247	իրադարձության տեսակը,	Պարտադիր պահանջ		

		R-248	օգտատիրոջ/սուբյեկտի ինքնությունը,	Պարտադիր պահանջ		
		R-249	իրադարձության արդյունքը/ելքը (հաջողում կամ ձախողում):	Պարտադիր պահանջ		
		R-250	համակարգը հնարավորություն է տալիս, ըստ տեսակի, գտնվելու վայրի կամ սուբյեկտի, բացահայտված աուդիտորական իրադարձությունների մասին լրացուցիչ, ավելի մանրամասն տեղեկատվություն ներառելու աուդիտային գրառումներում:	Պարտադիր պահանջ		
		R-251	Համակարգը հնարավորություն է տալիս ողջ համակարգի մասշտաբով կենտրոնացված կառավարելու առանձին բաղադրիչների կողմից գեներացված	Ցանկալի պահանջ		

			աուդիտային գրառումների բովանդակությունը:			
6	Արձագանք աուդիտի գործընթացի խափանումներին	R-252	Աուդիտի գործընթացի խափանումների դեպքում համակարգը ահազանգում է կազմակերպության համապատասխան պաշտոնատար անձանց:	Պարտադիր պահանջ		
		R-253	Աուդիտի գործընթացի խափանումներ են, օրինակ, ծրագրային/սարքավորումային սխալները, աուդիտորական գրանցումների մեխանիզմի խափանումները և աուդիտի պահեստային կարողությունների լրացումը կամ գերազանցումը:	Պարտադիր պահանջ		

		R-254	Համակարգը նախազգուշացում է տալիս, երբ աուդիտի գրառումների պահպանման հատկացված ծավալը հասնում է որոշակի սահմանված չափի:	Պարտադիր պահանջ		
7	Աուդիտի ծավալի կրճատում և հաշվետվությունների գեներացում	R-255	Համակարգն ապահովում է աուդիտի ծավալի կրճատման և հաշվետվություններ գեներացնելու հնարավորություն:	Պարտադիր պահանջ		
		R-256	Համակարգը հնարավորություն է տալիս ինքնաշխատ մշակելու հետաքրքրություն ներկայացնող իրադարձությունների աուդիտորական գրառումներ՝ ելնելով իրադարձությունների չափորոշիչների ընտրովիությունից:	Պարտադիր պահանջ		

8	Աուդիտային տեղեկությունների պաշտպանություն	R-257	Համակարգն ապահովում է աուդիտային տեղեկությունների և աուդիտի գործիքների պաշտպանությունը չարտոնված մուտքից, փոփոխումից և ջնջումից:	Պարտադիր պահանջ		
9	Հերքման բացակայություն	R-258	Համակարգը հնարավորություն է տալիս որոշելու՝ արդյոք տվյալ անհատը կատարել է որոշակի գործողություն:	Պարտադիր պահանջ		
10	Նվազագույն ֆունկցիոնալություն	R-259	Համակարգը պետք է ապահովի միայն էական կարողությունները կարգաբերելու հնարավորությունները և հատուկ արգելում և/կամ սահմանափակում է բոլոր ոչ անհրաժեշտ գործառույթների, սարքամուտքերի,	Պարտադիր պահանջ		

			պրոտոկոլների և/կամ ծառայությունների օգտագործումը:			
11	Փոխանցման ամբողջականություն	R-260	Համակարգը պաշտպանում է փոխանցվող տեղեկությունների ամբողջականությունը: համակարգը փոխանցման ընթացքում տեղեկատվության փոփոխությունները ճանաչելու համար գործադրում է ծածկագրային մեխանիզմներ, եթե տեղեկատվությունը պաշտպանված չէ այլընտրանքային ֆիզիկական միջոցներով:	Պարտադիր պահանջ		

12	Փոխանցման գաղտնիություն	R-261	Համակարգը պաշտպանում է փոխանցվող տեղեկությունների գաղտնիությունը: Փոխանցման ընթացքում տեղեկատվության չարտոնված բացահայտումը կանխելու նպատակով համակարգը գործադրում է ծածկագրային մեխանիզմներ, եթե տեղեկատվությունը պաշտպանված չէ այլընտրանքային ֆիզիկական միջոցներով:	Պարտադիր պահանջ		

13	Տվյալների գաղտնիություն և պաշտպանություն	R-262	Մատակարարը պետք է ապահովի Պայմանագրի շրջանակներում տրամադրված կամ մուտք գործած բոլոր տեղեկությունների խիստ գաղտնիությունը, ամբողջականությունը և անվտանգությունը, ներառյալ, բայց ոչ միայն՝ կարգավորող հաշվետվությունները, վերահսկողական հարցումները, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) ու պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատումները, ինչպես նաև այլ զգայուն կամ հեղինակային տվյալները:	Պարտադիր պահանջ		

		R-263	Մատակարարին խստիվ արգելվում է որևէ իրական վերահսկողական տվյալների բացահայտումը, մշակումը, փոխանցումը, պատճենումը կամ որևէ այլ կերպ օգտագործումը՝ թեստավորման կամ համակարգի զարգացման նպատակներով:	Պարտադիր պահանջ		
		R-264	Համակարգի թեստավորման նպատակով պետք է օգտագործվեն բացառապես անանուն և արհեստական («կեղծ») տվյալներ, որոնք ստեղծվել կամ հաստատվել են Պատվիրատուի կողմից:	Պարտադիր պահանջ		

		R-265	ԿԲ AML/CFT ռիսկերի գնահատման մեթոդաբանությունն, վերահսկողական մոդելներն, գնահատման համակարգերը և դրանց հետ կապված բոլոր մտավոր սեփականության իրավունքները համարվում են խստորեն գաղտնի և ենթակա են հատուկ պահպանման՝ պահպանելու ԿԲ շահերը և տեղեկատվության անբեկանելիությունը:	Պարտադիր պահանջ		
		R-266	Եթե անհրաժեշտ է տեղում թեստավորում, ապա Մատակարարի լիազորված ներկայացուցիչը պետք է ֆիզիկապես ներկա լինի Պատվիրատուի տարածքում և գտնվի լիազորված աշխատակիցների	Պարտադիր պահանջ		

			անմիջական վերահսկողության ներքո:			
		R-267	Տվյալների ցանկացած չթույլատրված մուտք, բացահայտում, մշակում կամ չարաշահում կհանդիսանա պայմանագրի էական խախտում, որը կհանգեցնի պայմանագրի անմիջական լուծարմանը և պատասխանատվության՝ համաձայն գործող օրենսդրության:	Պարտադիր պահանջ		
		R-268	Մատակարարը պարտավոր է ստորագրել տվյալների գաղտնիության և չբացահայտման համաձայնագիր (NDA)՝ համակարգի համար	Պարտադիր պահանջ		

			նախատեսված միջավայր մուտք գործելուց առաջ:			
14	Անվտանգության թեսթավորում և ռիսկերի գնահատում	R-269	Մատակարարը պետք է տարեկան իրականացնի թափանցելիության թեստավորում (penetration testing) և խոցելիությունների գնահատում՝ ապահովելու համար, որ ՓԼ/ԱՖ համակարգը մնում է անվտանգ: Մատակարարը պարտավորվում է պահանջի դեպքում տրամադրել մանրամասն անվտանգության թեստավորման հաշվետվություններ: Ցանկալի է, որ համակարգը պաշտպանված լինի OWASP 10 և SANS/CWE 25 խոցելիություններից:	Պարտադիր պահանջ		

15	Տվյալների հեռացում	R-270	Պայմանագրի լուծարման կամ օրենսդրությամբ սահմանված տվյալների պահպանման քաղաքականության համաձայն, բոլոր պահված տվյալները պետք է անվտանգ ջնջվեն՝ օգտագործելով ոլորտում ընդունված տվյալների մաքրման տեխնոլոգիաներ: Պետք է կիրառվի տվյալների վերականգնման անհնարինություն ապահովող մեթոդներ (DoD 5220.22-M, NIST 800-88):	Պարտադիր պահանջ		
16	Տեղեկատվության ճշգրտություն, ամբողջականություն, վավերություն և իսկություն	R-271	Համակարգը ստուգում է տեղեկատվության ճշգրտությունը, ամբողջականությունը, վավերությունը և իսկությունը:	Պարտադիր պահանջ		

17	Համակարգի բաղադրիչների գույքացանկ	R-272	Գույքագրում և Տեղեկատվություն Սեփականության Մասին: Մասնակիցը պետք է մշակի և տրամադրի համակարգի բոլոր բաղադրիչների ընթացիկ գույքացանկը, ներառյալ դրանց սեփականության կարգավիճակի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը:	Պարտադիր պահանջ		
		R-273	Բաց Ելքային Կոդով Ծրագրերի Օգտագործում: Ըստ քաղաքականության, բաց ելքային կոդով ծրագրերի (open-source software) օգտագործումը խորհուրդ չի տրվում, եթե դրանք չեն համապատասխանում	Պարտադիր պահանջ		

			անվտանգության և աջակցման պահանջներին:			
		R-274	Երրորդ Կողմի Ծրագրային Ապահովման Աջակցություն: Համակարգի բաղադրիչների մաս կազմող երրորդ կողմի ծրագրային ապահովումը (third-party software) պետք է լինի արդի, և դրանց աջակցման (support & maintenance) ժամկետը չպետք է լրացած լինի: Հնացած կամ անպաշտպան ծրագրային ապահովման օգտագործումը անթույլատրելի է:	Պարտադիր պահանջ		

18	Համակարգի վերականգնում և վերակազմավորում	R-275	Հայտատուն տրամադրում է մեխանիզմներ՝ փաստաթղթավորված ընթացակարգերով, որոնք թույլ կտան համակարգը խափանումից կամ անսարքությունից հետո վերականգնել և վերակազմավորել հայտնի անվտանգ վիճակի: Հայտատուն համակարգի ամբողջական վերականգնումը և վերակազմավորումը ներառում է որպես արտակարգ իրավիճակների պլանի փորձարկման մաս:	Պարտադիր պահանջ		

19	Համակարգի սպասարկման քաղաքականություն և ընթացակարգեր	R-276	Հայտատուն մշակում և տրամադրում է. (i) համակարգի սպասարկման քաղաքականության ֆորմալ, փաստաթղթային հենք, որով սահմանվում են նպատակը, շրջանակները, դերերը, և (ii) համակարգի սպասարկման քաղաքականության և դրա հետ կապված համակարգերի սպասարկման հսկողության իրականացումն ապահովող ֆորմալ, փաստաթղթավորված ընթացակարգեր:	Պարտադիր պահանջ		
20	Ժամանակին սպասարկում	R-277	Հայտատուն սպասարկումն ու աջակցությունն ապահովում է համաձայնեցված ժամանակահատվածի համար:	Պարտադիր պահանջ		

21	Համակարգի փաստաթղթեր	R-278	Հայտատուն լիազորված անձնակազմին համապատասխան փաստաթղթեր է տրամադրում համակարգի վերաբերյալ: Փաստաթղթերը ներառում են ադմինիստրատորի և օգտագործողի ուղեցույցներ, որոնք տեղեկատվություն են պարունակում՝ (i) համակարգի կարգաբերման, տեղակայման և շահագործման, և (ii) համակարգի անվտանգության առանձնահատկություններից արդյունավետորեն օգտվելու վերաբերյալ:	Պարտադիր պահանջ		

22	Կոնֆիգուրացիայի և Փոփոխությունների կառավարում	R-279	Մատակարարը պետք է ներկայացնի, որ առաջարկվող պատրաստի համակարգը գտնվում է կոնֆիգուրացիայի և փոփոխությունների կառավարման պաշտոնական գործընթացի ներքո, ներառյալ անվտանգ թարմացումների իրականացումը, փոփոխությունների փաստագրված մատյանները և հիմնական փոփոխությունների կամ ուղղումների վերաբերյալ Պատվիրատուին ծանուցելու մեխանիզմը:	Պարտադիր պահանջ		
23	Երրորդ կողմի լիցենզիա	R-280	Եթե առաջարկվող լուծման իրականացման համար անհրաժեշտ է երրորդ կողմի լիցենզիայի ձեռքբերում կամ օգտագործում, Կենտրոնական	Պարտադիր պահանջ		

			բանկը որևէ պարտավորություն չունի ընդունելու այդ մասով հայտատուի առաջարկը կամ կրելու դրա հետ կապված իրավական, ֆինանսական կամ տեխնիկական պարտավորություններ:			

12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

N	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-
1	Համակարգում օգտագործվող ծրագրավորման կոդերը վերջին հնարավոր տարբերակներն են:	R-281	Թարմ ծրագրային ապահովում (Latest Software Versions) Համակարգի ծրագրային կոդերը, տվյալների բազաները և ծրագրավորման ֆրեյմվորքները պետք է լինեն	Պարտադիր պահանջ		

			վերջին հասանելի կայուն տարբերակները:			
		R-282	Պետք է ապահովվի, որ համակարգի բոլոր բաղադրիչները ներկայումս աջակցվում են արտադրողների կողմից:	Պարտադիր պահանջ		
		R-283	Չպետք է օգտագործվեն դադարեցված կամ հնացած տեխնոլոգիաներ	Պարտադիր պահանջ		
		R-284	Արգելվում է օգտագործել ծրագրային ապահովում, որի արտադրողը կամ մշակող խումբը պաշտոնապես հայտարարել է դրա աջակցման դադարեցման մասին (EOL - End of Life, EOS - End of Support):	Պարտադիր պահանջ		

		R-285	Անվտանգության թարմացումներ չստացող ծրագրերը պետք է փոխարինվեն կամ թարմացվեն համապատասխան այլընտրանքներով:	Պարտադիր պահանջ		
		R-286	Համատեղելիություն և աջակցում Մասնակիցը պարտավոր է ապահովել, որ առաջարկվող լուծումը գործի որպես ինտեգրված համակարգ, որտեղ բոլոր ծրագրային բաղադրիչները լիովին համատեղելի և փոխգործունակ են Համակարգի ընդհանուր ճարտարապետության և գործառնական միջավայրի շրջանակներում:	Պարտադիր պահանջ		

		R-287	Երրորդ կողմի ծրագրերը պետք է ունենան երկարաժամկետ աջակցության երաշխիքներ (Long-Term Support - LTS):	Պարտադիր պահանջ		
2	Մատակարարը պետք է ներկայացնի համակարգի ներդրման պլան:		Ներդրման պլանն առնվազն ներառում է հետևյալը.			
		R-288	ա) Համակարգի բաղադրիչների միացման և տեղադրության սխեման,	Պարտադիր պահանջ		
		R-289	բ) Ցանցային միացումների նկարագրությունը,	Պարտադիր պահանջ		
		R-290	գ) Տվյալների հոսքերի նկարագրությունը, տես Գծապատկեր 1-ը	Պարտադիր պահանջ		
		R-291	դ) Կոնֆիգուրացիոն ֆայլերը և դրանց նկարագրությունը,	Պարտադիր պահանջ		

		R-292	ե) Համակարգի սպասարկման և գործունակության ապահովման համար երրորդ անձանց/մատակարարների կողմից մատակարարվող ռեսուրսների բաղադրիչների նկարագրությունը, ցանկը և անհրաժեշտ ծավալները:	Պարտադիր պահանջ		
3	Մատակարարը պատվիրատուի մասնագետների մասնակցությամբ ձևավորում է «Փորձարկման» (Testing Environment) և «Արտադրական» միջավայրեր (Production Environment):	R-293		Պարտադիր պահանջ		

13. ՈՒՍՈՒՑՈՒՄ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

N	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-
1	Փաստաթղթավորում (Բոլոր վերաբերելի գործառնություններն ու տեղեկատու ձեռնարկները և մյուս փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ապահովեն ծրագրերի յուրաքանչյուր տարրն իր ողջ ներուժով շահագործելու նկարագրությունները, պետք է տրամադրվեն օգտատերերին:)	R-294	Օգտագործողի ձեռնարկ: Պետք է տրամադրվի մանրամասն օգտագործողի ձեռնարկ, որը կբացատրի համակարգի հիմնական ֆունկցիոնալությունը: Այն պետք է ներառի քայլ առ քայլ հրահանգներ, համակարգի նավիգացիայի ուղեցույցներ և խնդիրների լուծման խորհուրդներ:	Պարտադիր պահանջ		
		R-295	Ռիսկային մոդելների ուղեցույց: Պետք է տրամադրվի հատուկ ռիսկային մոդելների ուղեցույց, որը կներկայացնի,	Պարտադիր պահանջ		

			թե ինչպես է համակարգը հաշվարկում ռիսկերը, ինչպես կազմել ռիսկային պարամետրերը և ինչպես մեկնաբանել ռիսկային գնահատականները:			
		R-296	Ուսումնական ծրագիր: Համակարգի հետ պետք է տրամադրվի ուսումնական ծրագիր, որը կներկայացնի դասընթացների թեմաները և նյութերը՝ ներառելով թե՛ հիմնական օգտագործողի ուսուցում, և թե՛ առաջադեմ ռիսկային մոդելների տեխնիկաներ:	Պարտադիր պահանջ		
		R-297	Առաջին մակարդակի աջակցման ուղեցույց: Պետք է տրամադրվի առաջին մակարդակի աջակցման ուղեցույց, որը կներկայացնի	Պարտադիր պահանջ		

			ընդհանուր խնդիրների լուծման քայլերն ու գործընթացները, ներառյալ՝			
		R-298	Համակարգային սխալների լուծման հիմունքներ	Պարտադիր պահանջ		
		R-299	Հաճախ տրվող հարցեր (FAQ) և օգտվողների ամենատարածված խնդիրների պատասխանները	Պարտադիր պահանջ		
		R-300	Հրահանգներ՝ խնդիրը բարձրացնել ավելի բարձր մակարդակի աջակցման համար	Պարտադիր պահանջ		
		R-301	Տեխնիկական շահագործման ուղեցույց: Համակարգի օպերատորների և ադմինիստրատորների համար, գումարած՝ ժամանակացույցի	Պարտադիր պահանջ		

			պարբերաբար սպասարկում, տվյալների արխիվացում, մեխանիզմների վերականգնում, պահուստային կրկնօրինակում, խնդիրների վերացում և այլն:			
		R-302	API սահմանումներ: Պետք է հասանելի լինի API սահմանումների ամբողջական փաթեթը, որը կօգնի ծրագրավորողներին ինտեգրել ծրագրային լուծումը/հարթակը այլ համակարգերի հետ: Սա պետք է ներառի՝	Պարտադիր պահանջ		
		R-303	API վերջնակետերի ամբողջական ցանկ	Պարտադիր պահանջ		
		R-304	Հավաստագրման պրոտոկոլները՝ արձանագրությունները	Պարտադիր պահանջ		

		R-305	Տվյալների ձևաչափի սահմանումները մուտք/ելքի համար	Պարտադիր պահանջ		
		R-306	Հարցումների և պատասխանների օրինակներ	Պարտադիր պահանջ		
		R-307	Rate limit և սխալների մշակման քաղաքականություն	Պարտադիր պահանջ		
		R-308	Տեխնիկական սահմանափակումներ	Պարտադիր պահանջ		
2	Համակարգի ադմինիստրատորի ուղեցույց	R-309	Ծրագրի (կամ համակարգի) նշանակությունը և կիրառման շրջանակը,	Պարտադիր պահանջ		
		R-310	ծրագրի կազմը, դրա շահագործման հիմնական սկզբունքները,	Պարտադիր պահանջ		
		R-311	մատակարարման փաթեթը (եթե նշված չէ առանձին փաստաթղթում),	Պարտադիր պահանջ		
		R-312	ծրագրի կամ դրա բաղադրիչների	Պարտադիր պահանջ		

			համակարգային պահանջները,			
		R-313	բաղադրիչների տեղակայման նախընտրելի հաջորդականությունը,	Պարտադիր պահանջ		
		R-314	ծրագրի կամ դրա յուրաքանչյուր բաղադրիչի տեղակայման գործընթացը,	Պարտադիր պահանջ		
		R-315	ծրագրի պարտադիր նախնական կարգաբերումների հերթականությունը,	Պարտադիր պահանջ		
		R-316	բաղադրիչի տեղադրված պատճենների միմյանց ինտեգրման ուղիները,	Պարտադիր պահանջ		
		R-317	ծրագրի ինտեգրումը, օրինակ՝ ծրագրային ապահովմանը, տվյալների բազայի սերվերին,	Պարտադիր պահանջ		
		R-318	ծրագրի շահագործման ճշգրտության վերահսկման	Պարտադիր պահանջ		

			եղանակներն ու պարբերականությունը,			
		R-319	գործող ծրագրի պատճենների ընթացիկ պահպանման կարգը,	Պարտադիր պահանջ		
		R-320	բոլոր հնարավոր օժանդակ խնդիրների լուծման կարգը,	Պարտադիր պահանջ		
		R-321	արտակարգ իրավիճակները և դրանց հաղթահարման եղանակները,	Պարտադիր պահանջ		
		R-322	ադմինիստրատիվ վահանակի օգտատիրոջ ինտերֆեյս	Պարտադիր պահանջ		
		R-323	հրամանի տողի հարմարանքները և դրանց գործարկման շարակարգը,	Պարտադիր պահանջ		
		R-324	կոնֆիգուրացիոն ֆայլերը և դրանք գրելու կանոնները,	Պարտադիր պահանջ		
		R-325	control script գրելու լեզուն:	Պարտադիր պահանջ		

3	Օգտատերերի/տեխնիկական թիմի ուսուցում,	R-326	Մատակարարը պարտավորվում է իրականացնել առաջին դասընթացները նախքան համակարգի ներդրումը՝ նախապատրաստելով անձնակազմին համակարգի սահուն շահագործմանը: Մասնավորապես՝ տեխնիկական թիմին առնվազն համակարգի գործարկման, APIs, կրկնօրինակման և պահպանման շրջանակներում, իսկ ՓԼ/ԱՖ թիմին՝ առնվազն ռիսկերի մոդելների, կանխարգելիչ համակարգի, վահանակների և հաշվետվողականության վերաբերյալ: Ցանկալի է նաև իրականացնել դասընթացներ	Պարտադիր պահանջ		

			բիզնես վերլուծաբանի և մենեջմենթի համար:			
4	Դասընթացները պետք է իրականացվեն տարեկան կտրվածքով՝ Ծառայություններ մատուցողի կողմից՝ ԿԲ պահանջով:	R-327	Մատակարարը (Ծառայություններ մատուցողը) պարտավորվում է իրականացնել տարեկան վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված են համակարգի արդյունավետ կիրառմանը, անվտանգության ապահովմանը և նոր	Պարտադիր պահանջ		

			գործառույթների յուրացմանը՝ Պատվիրատուի պահանջով:			

14. ՓՈՐՁԱՐԿՈՒՄ/ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

N	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-
1	Տեղադրման վավերացում (Deployment validation)		Մատակարարը պետք է՝			
		R-328	Տրամադրի բոլոր համապատասխան փաստաթղթերը (Մանրամասների համար տես ՈՒՍՈՒՑՈՒՄ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ), ներառյալ՝ տեղադրման ստուգման ցուցակը, կոնֆիգուրացիայի և ինտեգրման ապահովման փաստաթղթերը:	Պարտադիր պահանջ		

		R-329	Մատակարարել, կարգավորել և ապահովել անհրաժեշտ բոլոր տեխնիկական աջակցությունը Հաճախորդին՝ լուծման հասանելի ֆունկցիոնալությունների ինտեգրման գործընթացում՝ ապահովելով դրանց լիարժեք համապատասխանությունն ու համատեղելիությունը Հաճախորդի համակարգերի հետ:	Պարտադիր պահանջ		
		R-330	Աջակցել Հաճախորդին ներքին և արտաքին համակարգերին միացման գործընթացում՝ տրամադրելով խորհրդատվություն, տեխնիկական աջակցություն և մասնագիտական ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության:	Պարտադիր պահանջ		
			Գնորդը պետք է՝	Պարտադիր պահանջ		

		R-331	Ապահովել անհրաժեշտ միջավայրը, ներառյալ՝ ցանցային հասանելիությունը, անվտանգության թույլատրությունները, թեստային միջավայրերը և համակարգի կարգավորման ու ինտեգրման համար պահանջվող այլ նախապայմանները:	Պարտադիր պահանջ		
		R-332	Մատակարարի կողմից տրամադրված փաստաթղթերի հիման վրա իրականացնի համակարգի կոնֆիգուրացիան՝ վերահսկողական գործառույթների տրամաբանությանը և ռիսկերի մեթոդաբանությանը համապատասխան:	Պարտադիր պահանջ		
		R-333	Իրականացնել ինտեգրման աշխատանքները, այս ընթացքում մատակարարը պետք է լիարժեք աջակցություն և օժանդակություն ցուցաբերի Հաճախորդի թիմին՝ առանց ինտեգրմանն առնչվող աջակցության համար որևէ լրացուցիչ վճար գանձելու:	Պարտադիր պահանջ		

		R-334	Հաստատի, որ ցանցային և ինտեգրման կետերը գործում են ըստ նախատեսվածի:	Պարտադիր պահանջ		
		R-335	Վերանայի և հաստատի տրամադրված փաստաթղթերը:	Պարտադիր պահանջ		
		R-336	Պաշտոնապես հաստատի պատրաստակամությունը ընդունման թեստավորման անցնելու համար՝ միայն տեղադրման հաջող վավերացումից հետո:	Պարտադիր պահանջ		
			Տեղադրման վավերացումը համարվում է հաջողված, եթե՝			
		R-337	Համակարգի բոլոր բաղադրիչները աշխատում են և հասանելի են:	Պարտադիր պահանջ		
		R-338	Տեղեկատվական անվտանգությունն ու ինտեգրացիան հաստատված են:	Պարտադիր պահանջ		
		R-339	Կոնֆիգուրացիան համահունչ է վերահսկողական պահանջներին:	Պարտադիր պահանջ		
		R-340	Չկան մնացած տեխնիկական խնդիրներ:	Պարտադիր պահանջ		

		R-341	Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված և հաստատված են Գնորդի կողմից:	Պարտադիր պահանջ		
2	Ընդունման թեստավորում (QA+UAT) համաձայն ISO/IEC 12207, ISO/IEC 90003	R-342	Մատակարարը ներկայացնում է թեստավորման պլան, ներառյալ թեստավորման ուղեցույցը և ընդունման չափանիշները, որը հնարավորություն է տալիս գնահատել՝ արդյոք տեղադրված համակարգը համապատասխանում է Գնորդի բիզնես, ֆունկցիոնալ, արտադրողականության, անվտանգության և օգտագործելիության պահանջներին՝ հիմնվելով իրական վերահսկողական սցենարների և թեստային դեպքերի վրա:	Պարտադիր պահանջ		
			Մատակարարի պարտականություններ			
		R-343	Աջակցել Գնորդին թեստավորման ընթացքում՝	Պարտադիր պահանջ		
		R-344	Օգնելով թերությունների գրանցման և դասակարգման գործընթացում	Պարտադիր պահանջ		

		R-345	Ապահովելով ժամանակին անսարքությունների վերացում և սխալների/թերությունների շտկում	Պարտադիր պահանջ		
		R-346	Հետևել բոլոր խնդիրներին թերությունների/սխալների գրանցամատյանում՝ ներառյալ կարգավիճակ, լրջություն (severity), լուծման ամսաթիվ և վերաթեստավորման արդյունք:	Պարտադիր պահանջ		
		R-347	Թեստավորման ավարտին տրամադրել ամփոփ հաշվետվություն՝ թեստավորման ծածկույթի և հայտնաբերված խնդիրների վերաբերյալ	Պարտադիր պահանջ		
			Գնորդի պարտականություններ			
		R-348	Տրամադրել ամբողջությամբ գործունակ թեստային միջավայր՝ համահունչ արտադրական կոնֆիգուրացիային:	Պարտադիր պահանջ		
		R-349	Իրականացնել վերահսկողական իրական դեպքերն արտացոլող թեստային սցենարներ (օր.՝ ռիսկի գնահատման ճշտում):	Պարտադիր պահանջ		

		R-350	Վերանայել ստացված արդյունքները՝ վահանակներ (dashboards), ազդանշաններ/կարմիր դրոշակներ և հաշվետվություններ՝ ճշտության և համապատասխանության տեսանկյունից:	Պարտադիր պահանջ		
		R-351	Գրանցել բոլոր արդյունքներն ու սխալները/թերությունները՝ համաձայն նախապես համաձայնեցված դասակարգման մեթոդաբանության (օր.՝ Կրիտիկական, Բարձր, Միջին, Ցածր):	Պարտադիր պահանջ		
		R-352	Վավերացնել ոչ ֆունկցիոնալ հիմնական ասպեկտները՝ ներառյալ համակարգի արտադրողականություն, իրավասու մուտք, օգտագործելիություն:	Պարտադիր պահանջ		
		R-353	Հաստատել, թե արդյոք յուրաքանչյուր պահանջ բավարարված է՝ ելնելով նախապես սահմանված ընդունման չափանիշներից (օր.՝ ակնկալվող միավորներ, աշխատանքային հոսքերի ճշգրտություն, հաշվետվությունների համապատասխանություն):	Պարտադիր պահանջ		

			Թեստավորումը համարվում է «ընդունված», եթե՝			
		R-354	Բոլոր բիզնես սցենարները լիարժեք աշխատում են՝ առանց սխալների/թերությունների:	Պարտադիր պահանջ		
		R-355	Բաց սխալներ/թերություններ չեն մնացել:	Պարտադիր պահանջ		
		R-356	Հաստատվել են արժեքային հատկանիշները՝ ֆունկցիոնալություն, արտադրողականություն, օգտագործելիություն, անվտանգություն և ինտեգրում:	Պարտադիր պահանջ		
		R-357	Թեստավորման փաստաթղթերը, սխալների/թերությունների վերաբերյալ մատյանները և շտկման հաշվետվությունները վերանայված և հաստատված են Գնորդի կողմից:	Պարտադիր պահանջ		
3	Թերությունների/սխալների շտկում	R-358	Յուրաքանչյուր խնդիր, որը գրանցվում է ընդունման թեստավորման (QA+UAT) ընթացքում, պետք է դասակարգվի ըստ լրջության մակարդակի.	Պարտադիր պահանջ		

		R-359	Կրիտիկական (Critical) – Խոչընդոտում է AML/CFT համակարգի էական ֆունկցիոնալությունը (օր.՝ ռիսկի սխալ գնահատում, տվյալների ներմուծման ձախողում)	Պարտադիր պահանջ		
		R-360	Բարձր (High) – Ազդում է հիմնական աշխատանքային հոսքերի վրա (օր.՝ ազդանշանի/կարմիր դրոշի սխալ էսկալացում, վահանակի անաշխատունակություն)	Պարտադիր պահանջ		
		R-361	Միջին / Ցածր (Medium/Low) – Չխոչընդոտող (non-blocking) միջերեսի սխալներ կամ առաջարկներ	Պարտադիր պահանջ		
			Թերությունների/սխալների շտկում: Մատակարարը պարտավոր է՝			
		R-362	Կիրառել տեխնիկական շտկումներ	Պարտադիր պահանջ		
		R-363	Օպտիմալացնել կոնֆիգուրացիաներն ու պարամետրերը	Պարտադիր պահանջ		

		R-364	Թարմացնել API-ները կամ ինտեգրացիաները՝ անհրաժեշտության դեպքում	Պարտադիր պահանջ		
			Վերաթեստավորում և փակման գործընթաց			
		R-365	Շտկումները տեղակայելուց հետո Գնորդը կրկին իրականացնում է ձախողված սցենար(ներ)ի թեստավորում՝ խնդրի լուծումը հաստատելու նպատակով:	Պարտադիր պահանջ		
		R-366	Փակումը թույլատրվում է միայն Գնորդի կողմից հաստատման և փաստաթղթավորված վերաթեստավորման հաջող արդյունքի պարագայում:	Պարտադիր պահանջ		
			Թերությունների/սխալների շտկման փուլը համարվում է հաջողությամբ ավարտված (ընդունված), եթե՝			
		R-367	Բոլոր թերությունները/սխալները փակված են և հաստատված Գնորդի կողմից:	Պարտադիր պահանջ		

		R-368	Վերաթեստավորման ընթացքում նոր թերություններ չեն ի հայտ եկել:	Պարտադիր պահանջ		
		R-369	Բոլոր հարցերը փաստաթղթավորված են:	Պարտադիր պահանջ		
		R-370	Թարմացված թերությունների մատյանը հաստատված է Գնորդի կողմից:	Պարտադիր պահանջ		
4	Փորձնական գործարկում (Pilot operation)	R-371	Փորձնական շահագործման փուլը պետք է կենտրոնանա վերահսկողական գործընթացների աշխատանքային հոսքերի վավերացման վրա՝ օգտագործելով իրական տվյալներ: Որպես կանոն, ընդգրկվում են հետևյալ հիմնական բաղադրիչները՝	Պարտադիր պահանջ		
		R-372	Ռիսկի գնահատման տրամաբանություն և ազդանշանային շեմեր	Պարտադիր պահանջ		
		R-373	• Կարմիր դրոշակների գեներացում և վահանակներ	Պարտադիր պահանջ		
		R-374	• Վիզուալիզացիա/Հաշվետվությունների ձևավորում	Պարտադիր պահանջ		

		R-375	Փորձնական շահագործումը նպատակ չունի համակարգի բոլոր ֆունկցիոնալ հնարավորությունների ամբողջական թեստավորում կատարելու, այլ՝ ապահովելու, որ վերահսկողական հիմնական տրամաբանությունը գործում է ճշգրտորեն, և օգտվողները կարող են կատարել իրենց կարևոր գործառույթները:	Պարտադիր պահանջ		
			Փորձնական շահագործումը համարվում է հաջողված («ընդունված»), եթե՝			
		R-376	Վերահսկողները կարողանում են ամբողջությամբ իրականացնել աշխատանքային հոսքերը՝ առանց էական խոչընդոտիի կամ ձախողման:	Պարտադիր պահանջ		
		R-377	Փորձարկման ընթացքում չեն արձանագրվում ռիսկի գնահատման տրամաբանության կրիտիկական սխալներ կամ համակարգային խափանումներ:	Պարտադիր պահանջ		

		R-378	Օգտվողները հաստատում են հիմնական արժեքային չափորոշիչների (օրինակ՝ ֆունկցիոնալություն, օգտագործելիություն, ռիսկի գնահատում, նավիգացիա) բավարար լինելը:	Պարտադիր պահանջ		
5	Շահագործման պատրաստակամության հաստատումը (Go-Live Readiness Sign-Off)	R-379	Նախքան շահագործման պատրաստակամության հաստատումը, պետք է ամբողջությամբ ավարտվեն և հաստատվեն հետևյալ փուլերը՝	Պարտադիր պահանջ		
		R-380	Տեղադրման վավերացում (Deployment Validation)	Պարտադիր պահանջ		
		R-381	Բոլոր մոդուլները տեղադրված են, կոնֆիգուրացված և հասանելի	Պարտադիր պահանջ		
		R-382	Օգտագործողի ընդունման թեստավորում (QA+UAT)	Պարտադիր պահանջ		
		R-383	Բոլոր ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները վավերացված են	Պարտադիր պահանջ		
		R-384	Թերությունների շտկում (Defect Resolution)	Պարտադիր պահանջ		

		R-385	Բոլոր խնդիրները պաշտոնապես փակված են	Պարտադիր պահանջ		
		R-386	Փորձնական շահագործում (Pilot run)	Պարտադիր պահանջ		
		R-387	Կրիտիկական/հիմնական աշխատանքային հոսքերը ցուցադրված են իրական օգտատերերի կողմից	Պարտադիր պահանջ		
		R-388	ԿԲ AML մեթոդաբանության հաջողված իրականացում	Պարտադիր պահանջ		
		R-390	Հայաստանի կենտրոնական բանկի (ԿԲ) սահմանած AML/CFT ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը լիովին ներդրված, փորձարկված և վավերացված է Համակարգի մեջ:	Պարտադիր պահանջ		
		R-391	Վերապատրաստման ավարտ (Training Completion) (տե՛ս Գլուխ 13 մանրամասների համար)	Պարտադիր պահանջ		
		R-392	Վերջնական օգտվողների վերապատրաստում՝ վերահսկողների,	Պարտադիր պահանջ		

			վերլուծաբանների և ադմինիստրատորների համար			
		R-393	Փաստաթղթերի տրամադրում (Documentation Delivered)	Պարտադիր պահանջ		
		R-394	Համակարգի և տեխնիկական ճարտարապետության փաստաթղթավորում, կարգաբերման ամփոփագրեր, API փաստաթղթեր, ոչ ֆունկցիոնալ բնութագրեր, օգտվողի ձեռնարկներ, ստանդարտ գործողության ընթացակարգեր (SOP-ներ):	Պարտադիր պահանջ		
			Հաջողության պայման (Pass Condition):			
		R-395	Գնորդը ստորագրում է շահագործման պատրաստակամության հաստատման ակտը՝ հաստատելով, որ լուծումը բավարարում է բոլոր գործառնական չափանիշներին և պատրաստ է շահագործման:	Պարտադիր պահանջ		
			Ձախողման պայման (Fail Condition):			

		R-396	Չշտկված թերությունները, բաց փաստաթղթերը կամ թեստավորման բացթողումները խոչընդոտում են համակարգի գործարկմանը:	Պարտադիր պահանջ		

15.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

N	Պահանջներ	ID	Նկարագրություն	Պահանջների տեսակ	Իրականացման մոտեցում	Օրինակ
	-	-	-	-	-	-
1	Մատակարարը պետք է ապահովի համակարգի սպասարկումը 1+5 տարիների ընթացքում:.	R-397	Երաշխիքային սպասարկում 1 տարվա ընթացքում	Պարտադիր պահանջ		
		R-398	Տեխնիկական սպասարկում և աջակցություն 5 տարիների ընթացքում	Պարտադիր պահանջ		
		R-399	Համակարգի թարմացումներ և օպտիմալացում	Պարտադիր պահանջ		
		R-400	Անվտանգության Աջակցություն	Պարտադիր պահանջ		
		R-401	Օգտատերերի աջակցություն և դասընթացներ	Պարտադիր պահանջ		

		R-402	Պարբերական հաշվետվություն և SLA (Service Level Agreement) պահպանություն: SLA-ն պետք է ներառի արձագանքման կոնկրետ ժամանակներ (օրինակ՝ սխալների ուղղման հաստատված ժամկետներ երաշխիքային ժամանակահատվածում):	Պարտադիր պահանջ		
2	Երաշխիքային և օպերատիվ աջակցություն.	R-403	Մատակարարը սահմանված երաշխիքային ժամանակահատվածում մատակարարվող բոլոր լուծումային բաղադրիչների համար տրամադրելու է երաշխիք:	Պարտադիր պահանջ		

		R-404	Մատակարարը պարտավորվում է երաշխիքային ժամկետի ընթացքում գործել որպես Հաճախորդի ներկայացուցիչ՝ համակարգի իր կողմից մատակարարված և երաշխավորված ցանկացած բաղադրիչի վերանորոգման կամ ուղղման հարցում: Երաշխիքով պատված համակարգի բոլոր բաղադրիչները՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով ծրագրային մոդուլներով, կարգաբերման պարամետրերով, տվյալների բազաներով, API-ներով, օգտագործողի միջերեսներով, ինտեգրացիոն միացուցիչներով և հաշվետվությունների կամ վերլուծական գործառույթներով, պետք է վերականգնվեն կամ ուղղվեն առանց Հաճախորդի համար որևէ լրացուցիչ վճարի: . Ծրագրային ապահովման երաշխիքային ժամկետը ուժի մեջ է ընդունման	Պարտադիր պահանջ		

			փորձարկումների ավարտից հետո արձանագրված պաշտոնական ընդունման ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում:			

		R-405	Երաշխիքային ժամկետի ընթացքում, անհրաժեշտության դեպքում, Մատակարարը պարտավորվում է ապահովել տեղում օպերացիոն աջակցություն՝ տրամադրելով նվազագույնը մեկ մասնագետ իր թիմից, ով մասնակցել է ծրագրային ապահովման տեղադրման գործընթացին: Նշված մասնագետի հիմնական պարտականությունն է ախտորոշել և վերացնել համակարգում առաջացած խնդիրները՝ ապահովելով դրա բնականոն աշխատանքի վերականգնում: Բացի այդ, մասնագետը, ըստ անհրաժեշտության, կտրամադրի աջակցություն Հաճախորդի օպերացիոն թիմին:	Պարտադիր պահանջ		

3	Տեխնիկական աջակցությունը պետք է հասանելի լինի երեք մակարդակով:	R-406	Առաջին մակարդակ (Ներքին աջակցություն, որը տրամադրվում է Հաճախորդի կողմից). Մատակարարը պարտավոր է տրամադրել բավարար ուսուցում, ինչպես նաև անհրաժեշտ ամբողջական փաստաթղթավորում, որպեսզի Հաճախորդի SS անձնակազմը կարողանա ապահովել համակարգի շահագործման առաջին մակարդակի աջակցությունը: Հաճախորդի SS անձնակազմը պետք է կարողանա լուծել վերահսկողների կողմից բարձրացված հիմնական օպերացիոն խնդիրները:	Պարտադիր պահանջ		
		R-407	Երկրորդ մակարդակ (Հեռավար աջակցություն, որը տրամադրվում է Մատակարարի կողմից). Մատակարարը պարտավոր է տրամադրել անհրաժեշտ աջակցություն և սպասարկում հեռավար հաղորդակցման միջոցներով, ներառյալ՝ անվտանգ	Պարտադիր պահանջ		

			հեռավար մուտք, էլ. փոստ, հեռախոս և հեռավար աշխատասեղանի ծրագրեր:			

		R-408	Մատակարարը պարտավոր է տրամադրել երկրորդ մակարդակի տեխնիկական աջակցություն, որը հասանելի կլինի առնվազն հինգ (5) տարի՝ երաշխիքային ժամանակահատվածի ավարտից անմիջապես հետո: Տեխնիկական աջակցության ընթացքում Մատակարարը պետք է ցուցաբերի առավելագույն ջանքեր՝ աջակցելու Հաճախորդին ծրագրային ապահովման կայունացման գործում (խոտանի շտկումներ, խնդիրների ախտորոշում), խնդիրների նույնականացման և լուծման գործընթացում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ապահովի համապատասխան գիտելիքներ, հմտություններ և փորձագիտական աջակցություն տեխնիկական աջակցության ոլորտում: Տեխնիկական աջակցության ընթացքում Մատակարարը	Պարտադիր պահանջ		

			համաձայնում է տրամադրել նաև երրորդ մակարդակի տեխնիկական աջակցություն՝ Հաճախորդի պահանջով:			

		R-409	Երրորդ մակարդակ (Տեղում աջակցություն, որը տրամադրվում է Մատակարարի կողմից). Մատակարարը պարտավոր է ապահովել իր հասանելիությունը Հայաստանի տարածքում ողջամիտ ժամկետներում և տրամադրել արագ ու որակյալ փորձագիտական աջակցություն: Նման աջակցության համար անհրաժեշտ ժամանակն ու ծախսերը պետք է ներառված լինեն գնառաջարկում:	Պարտադիր պահանջ		
		R-410	Հաճախորդը պարտավոր է ստանալ խորհրդատվություն Մատակարարից՝ կապված մշակման միջավայրի նոր հնարավորությունների, օժանդակ ռեսուրսների և տեխնոլոգիական պահանջների հետ, որպեսզի ապահովվի Հաճախորդի մոտ համապատասխան և ամբողջական գործիքների ու կարողությունների առկայությունը՝	Պարտադիր պահանջ		

			համակարգի հուսալի և անընդհատ շահագործումն ապահովելու համար:			

		R-411	Մատակարարը պարտավոր է տրամադրել սպասարկման (maintenance) ծառայություններ՝ համակարգի անընդհատ և հուսալի շահագործումը երաշխավորելու համար: Սպասարկումը պետք է ներառի ուղղիչ, կանխարգելիչ և ադապտիվ աջակցություն, որը հիմնականում կիրականացվի ապահով հեռավար մուտքի միջոցով: Մատակարարը պարտավոր է տրամադրել ծրագրային ապահովման թարմացումներ (updates and patches), որոնք վերաբերում են գործառութային հնարավորություններին, արդյունավետությանը և անվտանգությանը՝ առանց լրացուցիչ վճարի: Մատակարարը պարտավոր է երաշխավորել խնդիրների ժամանակին արձագանքման և լուծման ապահովումը՝ համաձայնեցված սպասարկման մակարդակների (SLA) շրջանակներում:	Պարտադիր պահանջ		

			Բացի այդ, Մատակարարը պարտավոր է ապահովել թարմացված փաստաթղթավորում և գիտելիքների փոխանցում Հաճախորդի SS անձնակազմին՝ սպասարկման գործողությունների շրջանակում:			

4	Փաստաթղթերի թարմացում	R-412	Ամբողջ մանրամասն տեխնիկական բնութագրերը, ներառյալ՝ բոլոր թարմացումները, լրացումները և այլ փոփոխություններ, Գնորդին տրամադրվելու են նախքան թեստային կամ արտադրական միջավայրում որևէ այդպիսի թարմացում, լրացում կամ այլ փոփոխություն իրականացնելը:	Պարտադիր պահանջ		
		R-413	Ընդունված բոլոր միջազգային և արդյունաբերական ստանդարտները և ընդունված կամ կիրառվող տեղական ստանդարտները պետք է հստակորեն վկայաբերվեն և ուղեկցվեն համանման ստանդարտների մանրամասն բնութագրերի բովանդակ լրակազմով:	Պարտադիր պահանջ		
		R-414	Վաճառողին խրախուսվում է, հնարավորության սահմաններում, տրամադրել նաև մանրամասն և թարմացված փաստաթղթավորում՝ հայերեն լեզվով:	Ցանկալի պահանջ		

		R-415	Մատակարարի տեղական տեխնիկական աջակցության գործակալը, եթե այդպիսին կիրառելի է, պետք է տեղեկացված և քաջածանոթ լինի Գնորդի տնօրինության տակ եղած տեխնիկական փաստաթղթերին և սարքերի ու համակարգի ծրագրային ապահովման միջավայրին:	Ցանկալի պահանջ		

16. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հայտատուն պետք է ապահովի համակարգի ամբողջական ներկայացումը Պատվիրատուին

17. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Նախատեսվող ժամկետները կրում են ուղղորդիչ բնույթ, սակայն իրականացման վերջնական ժամկետը ընդհանուր առմամբ չի կարող գերազանցել 11 ամիսը: Մասնակիցները իրենց հայտերում պարտավոր են ներկայացնել պայմանագրի կատարման իրական ժամանակացույցը՝ ներառյալ բոլոր հիմնական փուլերը և դրանց ավարտման նպատակային ժամկետները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
Համակարգի մատակարարում և տեղադրում	

- Բոլոր մոդուլները տեղադրված են, կոնֆիգուրացված և ինտեգրված	Մինչև 6 ամիս
Վերապատրաստման դասընթաց - Վերջնական օգտվողների վերապատրաստում՝ վերահսկողների, վերլուծաբանների և ադմինիստրատորների համար	
Օգտագործողի ընդունման թեստավորում (QA+UAT) - Բոլոր ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները վավերացված են	Մինչև 3 ամիս
Փորձնական շահագործում (Pilot operation) - Կրիտիկական/հիմնական աշխատանքային հոսքերը ցուցադրված են իրական օգտատերերի կողմից	Մինչև 1 ամիս
Համակարգի վերջնական հանձնում- ընդունում	Մինչև 1 ամիս
Տեխնիկական աջակցություն և սպասարկում	Համաձայն հայտով ներկայացված ժամանակացույցի

Մատակարարը պետք է տրամադրի Նախագծի ճանապարհային քարտեզը և Նախագծի իրականացման ժամանակացույցը: Մատակարարը, անհրաժեշտության դեպքում, պետք է ֆիզիկապես ներկա գտնվի Համակարգի ներդրման, հանձման-ընդունման, թեստավորման, ուսուցման փուլերում:

18. ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մասնակցության իրավունքից բացի, Մասնակիցը պետք է բավարարի հետևյալ որակավորման նվազագույն չափանիշներին.

1.1. Առնվազն 3 տարվա փորձ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման ավտոմատացման և առաջադեմ վերահսկողական տեխնոլոգիական (SupTech) լուծումների ներդրման բիզնեսում՝ որպես գրանցված ընկերություն/սուբյեկտ: Նմանատիպ համակարգերի ներդրման հաջող փորձ այլ կարգավորող մարմիններում՝ պահանջվող չափանիշներին (օրինակ՝ FATF 40 առաջարկություններին) համապատասխան:

Որպես ապացույց ներկայացվում է կազմակերպության պորտֆոլիոն, հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով ներդրված համակարգերի մասին տեղեկատվություն՝ ներառելով պատվիրատուի գործունեության ոլորտը, իրականացման ժամկետները և ծավալը:

Բացի այդ, մասնակիցը պետք է ներկայացնի, որ առաջարկվող լուծումը հանդիսանում է շուկայում առկա պատրաստի ծրագրային արտադրանք (Commercial Off-The-Shelf – COTS): Ապացույցները պետք է ներառեն արտադրանքի փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ լուծումը ստանդարտ, լիովին մշակված COTS համակարգ է, ինչպես նաև նմանատիպ վերահսկողական կամ կարգավորող մարմիններում արդեն իրականացված COTS ներդրումների նկարագրություններ:

Եթե պարտադիր ֆունկցիոնալ որոշ պահանջներ ներառված չեն COTS լուծման մեջ, ապա դրանք կարող են մշակվել (Custom development), սակայն այդ դեպքում պահանջների ծավալը չպետք է գերազանցի ընդհանուր ֆունկցիոնալ պահանջների 10 տոկոսը: Նշված շեմը գերազանցող ցանկացած առաջարկ Պատվիրատուի հայեցողությամբ կարող է համարվել պահանջներին չհամապատասխանող:

Մասնակիցը ներկայացնում է նախկին պատվիրատուների կողմից տրամադրված երաշխավորության նամակ այն մասին, որ համակարգը հաջողությամբ ներդրված է, գործում է և համապատասխանում է պահանջվող չափանիշներին:

1.2. Մասնակիցը պետք է հատկացնի համապատասխան անձնակազմ՝ պահանջվող առաջադրանքները կատարելու և Պայմանագրի նպատակներին ժամանակային և որակային առումներով հասնելու համար: Նախագծի իրականացման համար ներգրավված անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում , աշխատանքային փորձ (առնվազն 5 տարի), նմանատիպ նախագծեր իրականացնելու հմտություններ և ապահովի աշխատանքների իրականացման բարձր որակ: Մասնակիցը պետք է տրամադրի փորձագետների թիմ, որը տիրապետում է AML/CFT համապատասխանության, կարգավորող հաշվետվությունների, ծրագրային ինտեգրման, կիբերանվտանգության և համակարգի աջակցության ոլորտներին:

Որպես ապացույց՝ ներկայացվում է հիմնական փորձագետների ինքնակենսագրականները (այդ թվում՝ որակավորումները հավաստող փաստաթղթերը), որտեղ հստակ պետք է նշվի համապատասխան աշխատանքային փորձը՝ համապատասխան տարիներով: Թիմի անդամները պետք է առնվազն տիրապետեն անգլերենին (ցանկալի է նաև ռուսերեն):

2. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

2.1. Գնային առաջարկը

2.1.1. Գնային առաջարկը պետք է ներառի համակարգի մատակարարման և ներդրման ընդհանուր գինը, ներառյալ՝ ներդրման, տեղակայման, գործարկման, ուսուցման գները, ինչպես նաև երաշխիքային ժամկետից հետո ակնկալվող ծախսերը 5 տարիների կտրվածքով, ներառյալ՝ սպասարկման, ուղեկցման գները (համաձայն Հավելված 3-ի, որը հավասար է Հավելված 3. 1-ի և Հավելված 3. 2-ի հանրագումարին):

2.1.2. Մասնակիցը Հավելված 3. 1-ով ներկայացնում է համակարգի մատակարարման և ներդրման մանրամասն բացվածք, որում պետք է մանրամասն ներկայացնել առաջարկվող յուրաքանչյուր բաղադրիչի միավորի և ընդամենը գները, ինչպես նաև վճարման պայմանները, ժամանակացույցը և կարգը:

2.1.3. Մասնակիցը առանձին բացվածքով Հավելված 3. 2-ով ներկայացնում է համակարգի ներդրումից հետո ակնկալվող ծախսերը (ներառյալ դրանց հետերաշխիքային սպասարկման, ուղեկցման և այլ անհրաժեշտ ծախսերը) 5 տարիների կտրվածքով՝ հաշվի առնելով առնվազն մեկ տարի երաշխիքային սպասարկման պայմանը, ինչպես նաև վճարման պայմանները, ժամանակացույցը և կարգը:

2.1.4. Մասնակիցը կարող է առանձին ներկայացնել նաև լրացուցիչ առաջարկներ, եթե այդպիսիք կան, օր.՝ անհրաժեշտության դեպքում անձնակազմի գործուղման և այլ անհրաժեշտ ծախսերը:

2.1.5. Գնային առաջարկը պետք է ներառի միայն Պարտադիր պահանջների գները: Նշված ընդհանուր գումարը կօգտագործվի ֆինանսական գնահատման և համեմատության համար:

2.1.6. «Ցանկալի» պահանջների գները պետք է ներկայացվեն առանձին բաժնում կամ աղյուսակում, հստակ տարանջատված ձևով (չեն գնահատվում): «Ցանկալի» պահանջների գները չպետք է ներառվեն Պարտադիր պահանջների գնային ընդհանուր գնի մեջ: Հետագայում այս գները կարող են դիտարկվել պայմանագրի շրջանակում՝ կախված բյուջեից և անհրաժեշտությունից:

2.1.7. Եթե որևէ «Պարտադիր» կամ «Ցանկալի» պահանջ ներառված չէ մասնակցի կողմից առաջարկվող COTS լուծման (կամ Ստանդարտ ծառայությունների) շրջանակում, սակայն կարող է մշակվել, կարգաբերվել կամ տրամադրվել (Ընդլայնված ծառայություններ) լրացուցիչ վճարի դիմաց, մասնակիցը պարտավոր է այդ մասին հստակ նշել և համապատասխան գինը ներկայացնել «Ցանկալի» պահանջների կամ «Պարտադիր» պահանջների գնառաջարկում բաժնում և Պարտադիր բաժնում: Մասնակիցը պետք է նաև նշի նման մշակման համար անհրաժեշտ լրացուցիչ ժամանակահատվածը:

2.1.8. Մասնակիցը չի կարող ներառել կամ միավորել «Ցանկալի» պահանջների կամ դրանց մշակման ծախսերը «Պարտադիր» պահանջների գնառաջարկի մեջ:

2.1.9. «Ցանկալի» պահանջների և մշակման գները պետք է ուժի մեջ լինեն առաջարկի գործողության ժամկետի ընթացքում և կարող են ձեռք բերվել հետագայում՝ նշված գներով: Պայմանագիր կնքելու դեպքում առաջարկված «Ցանկալի» պահանջների և մշակման գները ֆիքսված են և վավեր ևս լրացուցիչ 12–24 ամիս, կախված պայմանագրով համաձայնեցված պայմաններից:

2.2. **Տեխնիկական առաջարկը**

2.2.1. Մասնակիցը հայտով տրամադրում է առաջարկվող Համակարգի մանրամասն նկարագիրը, մասնավորապես՝

2.2.1.1. Տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին բավարարող Տեխնիկական առաջարկ, ներառյալ անվտանգության համապատասխանություն միջազգային ստանդարտներին, օգտագործելիության առանձնահատկություններ, ինչպիսիք են օգտագործման պարզությունը, կառավարման և

զարգացման/կատարելագործման պարզությունը, համատեղելիությունը գոյություն ունեցող ենթակառուցվածքների հետ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն,

2.2.1.2. Համակարգի երաշխիքային և հետագա տեխնիկական աջակցության և սպասարկման պայմանները,

2.2.1.3. Մասնակցի կողմից իրագործման ճանապարհային քարտեզը, մանրամասն ժամանակացույցը,

2.2.1.4. Ուսուցման մեթոդաբանությունը, ժամանակացույցը և անհրաժեշտ այլ պայմանները:

2.2.1.5. Այլ անհրաժեշտ տեղեկատվություն, որը մասնակիցը կգտնի նպատակահարմար՝ իր կողմից ներկայացված առաջարկը լավագույնս ներկայացնելու/բնութագրելու համար:

2.2.1.6. ծրագրային ապահովումների համար պետք է ներկայացվի Արտադրող ընկերության կամ նրա պաշտոնական ներկայացուցչության կողմից տրված ՀՀ տարածքում տվյալ մատակարարման իրավունքի վերաբերյալ հեղինակայնացման հավաստագիր (MAF - Manufacturers Autorisation Form):

2.2.1.7. Տեղեկատվություն ՀՀ-ում արտադրողի կողմից հավաստագրված սպասարկման մասնագիտացված կենտրոնի առկայության կամ արտադրողի կողմից սպասարկումը միասնական կենտրոնի կողմից իրականացնելու մասին: Սպասարկման մասնագիտացված կենտրոնների տվյալները պետք է նշված լինեն արտադրողի վեբ-կայքում կամ հաստատվի համապատասխան սերտիֆիկատներով:

2.2.1.8. Տեղեկատվություն երաշխիքի ժամկետի և աշխատունակության վերականգնման ժամկետի վերաբերյալ,

2.2.1.9. Կազմակերպության գրանցման վկայականը,

2.2.1.10. Մասնագիտական փորձառության վերաբերյալ համապատասխան տեղեկանք համաձայն սույն հրավերին կից Հավելված 5-ի,

2.2.1.11. Անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին տեղեկանք համաձայն սույն հրավերին կից Հավելված 6-ի,

2.2.1.12. Տեղեկատվական և կիբեռանվտանգության միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանության սերտիֆիկատներ (ISO: 27001),

19. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Պահանջների դասակարգում և գնագոյացման կանոններ**
   Եթե սույն Տեխնիկական առաջադրանքում (ToR) հստակ այլ բան նշված չէ, ապա բոլոր պահանջները համարվում են Պարտադիր:

   Պահանջները դասակարգվում են հետևյալ կերպ.

- **Պարտադիր պահանջներ** - Պարտադիր պահանջները ներկայացնում են Ծրագրի նվազագույն ֆունկցիոնալ, տեխնիկական, անվտանգության և կարգավորող շրջանակը.
  - ✓ Մասնակիցը պարտավոր է համապատասխանել բոլոր Պարտադիր պահանջներին, և այդ պահանջների կատարման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը պետք է ներառված լինեն Իրականացման գնի մեջ:
  - ✓ Չնայած վերոգրյալին, այն դեպքում, երբ մասնակիցը առաջարկում է շուկայում առկա պատրաստի ծրագրային լուծում (Commercial Off-The-Shelf – COTS), Պատվիրատուն կարող է իր հայեցողությամբ ընդունել Պարտադիր պահանջներից սահմանափակ շեղումներ, պայմանով, որ բավարարված լինեն հետևյալ պայմանները.

    - լուծումը կարող է չհամապատասխանել Պարտադիր պահանջների առավելագույնը տասը տոկոսին (10%),
    - բացակայող ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է լինեն ոչ էական և չազդեն՝
      - o կարգավորող կամ վերահսկողական համապատասխանության վրա,
      - o տվյալների ամբողջականության կամ անվտանգության վրա, կամ
      - o ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների ռիսկերի գնահատման և մոնիթորինգի հիմնական հնարավորությունների վրա,
    - բացակայող ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է հնարավոր լինի ապահովել լրացուցիչ մշակման միջոցով՝ առանց համակարգի ճարտարապետական վերափոխման, և
    - նման լրացուցիչ մշակումը պետք է՝
      - o համարվի իրականացման մաս,
      - o ամբողջությամբ ներառված լինի Իրականացման գնի մեջ, և
      - o իրականացվի առաջարկված իրականացման ժամանակացույցի շրջանակում:

Մասնակիցը պարտավոր է իր Տեխնիկական առաջարկում հստակ նշել բոլոր նման շեղումները:

- **Ցանկալի պահանջներ**
  - ✓ «Ցանկալի» նշմամբ հստակ սահմանված պահանջները պարտադիր չեն և չեն ազդում մասնակցության իրավասության կամ համապատասխանության վրա,
  - ✓ Եթե որևէ Ցանկալի պահանջ՝
    - արդեն իսկ առկա է առաջարկվող լուծման մեջ, այն կարող է ներառվել առանց լրացուցիչ վճարի, կամ
    - պահանջում է լրացուցիչ լիցենզիաներ, մոդուլներ, մշակման աշխատանքներ կամ երրորդ կողմի բաղադրիչներ, ապա մասնակիցը պարտավոր է՝
      - հստակ նկարագրել նման ընդլայնումների շրջանակը, և
      - համապատասխան ծախսերը ներկայացնել բացառապես առաջարկի «Ցանկալի» գների ցանկում:
  - ✓ Ցանկալի պահանջների հետ կապված ծախսերը չպետք է ներառվեն Իրականացման գնի մեջ և ենթակա են առանձին գնահատման:.
  - ✓ Պատվիրատուն իրավունք ունի՝
    - ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունել կամ մերժել ցանկացած «Ցանկալի» բաղադրիչ, և
    - Ցանկալի պահանջների վերաբերյալ կնքել առանձին պայմանագիր կամ ընդհանրապես չկնքել այն՝ առանց հիմնական պայմանագրի շնորհման վրա որևէ ազդեցության:

2. Ծրագրային ապահովումների բոլոր բաղադրիչները պետք է ապահովված լինեն բաժանորդագրությամբ՝ տեղադրման օրվանից առնվազն 5 տարի ժամկետով:

3. Արտադրողի կայքում չպետք է լինի տեղեկատվություն արտադրողի կողմից առաջարկվող ծրագրային ապահովումների երաշխիքային սպասարկման (end of support) և շահագործման վերջնաժամկետի ավարտի վերաբերյալ (end of life),
4. Տեխնիկական աջակցում՝ 24x7 ռեժիմում հայտ գրանցելու հնարավորությամբ (անհրաժեշտության դեպքում նաև արտադրողի համակարգում), պատահար (սերվիս-դեպք) գրանցելու հնարավորությամբ և առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով:
5. Համակարգի ներդրման ամսաթիվը համարվում է վերջնական հանձման-ընդունման ակտի ստորագրման ամսաթիվը: Նույն ամսաթիվը պետք է դիտարկվի երաշխիքային սպասարկման ժամկետի մեկնարկի համար:
6. Երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտը հանդիսանում է տեխնիկական աջակցության և սպասարկման ծառայությունների սկիզբ:
7. Պատվիրատուն գնային համեմատության նպատակով կարող է հաշվի առնել նաև կամընտիր կետերը (եթե պահանջվում է սույն տեխնիկական առաջադրանքով): Պատվիրատուն կարող է որոշել օգտվել կամընտիր կետերից պայմանագրի ընթացքում ըստ անհրաժեշտության՝ նույն արժեքով:

20. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:


2. Համակարգի ներդրումը համարվում է ավարտված և Պատվիրատուի կողմից ընդունված ավարտական հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրվելուց հետո:

3. Համակարգի ներդրման աշխատանքների ընդունումն իրականացվում է նախապես փոխադարձ համաձայնեցված և հաստատված ժամանակացույցով, հետևյալ կարգով.

   3.1. Պատվիրատուն համակարգը (կամ առանձին ենթահամակարգերը) ներդնելուց հետո նախապես փոխադարձ համաձայնեցված և հաստատված ժամանակացույցով սահմանված ժամանակահատվածում ուսումնասիրում է իրականացված աշխատանքների որակն ու համապատասխանությունը Պայմանագրում նշված պահանջներին և, թերությունների բացակայության դեպքում, ստորագրում է հանձնման-ընդունման համապատասխան ակտ/երը:
4. Վճարման կարգը սահմանվում է պայմանագրով: Համակարգի ներդրումից հետո ակնկալվող տեխնիկական սպասարկման և ուղեկցման Ծառայությունների մատուցումը, հանձնում-ընդունումը, վճարման կարգը սահմանվում են Պայմանագրով:
5. Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Կատարողից Ծառայության մատուցման յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքների (չմատուցված Ծառայության) գնի 0,1 տոկոսի չափով՝ կիրառելով միայն օրենքով նախատեսված տարեկան առավելագույն չափի սահմանափակումները:
6. Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ պարտավորությունների կատարման յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով՝ կիրառելով միայն օրենքով նախատեսված տարեկան առավելագույն չափի սահմանափակումները:
7. Կատարողի կողմից Պատվիրատուին վճարման ենթակա տույժերը Պատվիրատուն իրավունք ունի անակցեպտ գանձելու պայմանագրին համապատասխան Կատարողին վճարման ենթակա գումարներից:

Գծապատկեր 1

Տվյալների հոսքի դիագրամ



№	ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	
1.	Իր կողմից հաստատված՝ դիմում-հայտարարություն ըստ սույն հրավերին կից Հավելված 2-ի	☐
2.	Հայտի ապահովումը հավաստող փաստաթուղթ,	☐
3.	Գնային առաջարկ՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 3-ի,**	☐
4.	Գնային առաջարկի բացվածք՝ սույն Հրավերի **Հավելված 3.1-ի և 3.2-ի,**	☐
5.	տեխնիկական առաջարկ, ներառյալ առաջարկվող լուծման մանրամասն նկարագրությունը՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 4-ի**,	☐
6.	ընկերության պորտֆելը՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 5-ի,**	☐
7.	կազմակերպական կառուցվածքը՝ համաձայն սույն Հրավերի **Հավելված 6-ի**,	☐
8.	սույն Հրավերի Տեխնիկական առաջադրանքով սահմանված ցանկացած այլ օժանդակ փաստաթուղթ և տեղեկատվություն, ներառյալ այն փաստաթղթերը, որոնք հաստատում են մասնակցի կարողությունները, փորձառությունը կամ այլ որակավորումները, որոնք հիմնավորում են նրա առաջարկը,	☐
9.	պայմանագրի նախագիծ՝ ներառյալ հիմնական պայմանները, դրույթները, պատասխանատվությունները և այլ համապատասխան դրույթներ (առկայության դեպքում):	☐

Հավելված 2

CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Բաց մրցույթի մասնակցության

___[Մասնակցի անվանումը, կամ համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում՝ յուրաքանչյուր անդամի իրավաբանական անվանումը]____*ցանկություն է հայտնում մասնակցելու ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված CBA-2026-001 ծածկագրով բաց մրցույթի _____չափաբաժնին (-ներին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հայտարարում ենք և հավաստում, որ

1. ուսումնասիրել ենք հրավերի փաստաթղթերը և չունենք վերապահումներ,
2. բավարարում ենք հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և համաձայն հրավերի 2.1 կետի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝
   ա) դատական կարգով սնանկ ճանաչված չենք և չենք գտնվում լուծարման գործընթացում,
   բ) նախորդող հինգ տարիների ընթացքում դատապարտված չենք եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
   գ) ընթացակարգին մասնակցելու շրջանակում թույլ չենք տվել և (կամ) թույլ չենք տալու հակամրցակցային համաձայնություն, անբարեխիղճ մրցակցություն և գերիշխող դիրքի չարաշահում,
   դ) բացակայում է հրավերով սահմանված մեզ փոխկապակցված անձանց և (կամ) մեր կողմից հիմնադրված, կամ ավելի քան հիսուն տոկոս մեզ պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
   Ընդ որում, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացվում է համաձայն հավելված 2.1-ի:
   ե) ներառված չենք Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
   զ) ներառված չենք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտը ներկայացնելու դեպքում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը պետք է ներկայացնել կոնսորցիումի բոլոր անդամների համար:

3. Մեր հայտն ուժի մեջ է մտնում հայտարարության մեջ նշված հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրվանից, և վավեր է մինչև հրավերի 9.4 կետում նշված իրադարձությունը,
4. Եթե մենք ճանաչվենք ընտրված մասնակից, պարտավորվում ենք հրավերին համապատասխան տրամադրել պայմանագրի ապահովում և մատակարարումն իրականացնել Տեխնիկական մասնագրում նշված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:
5. Մենք, որպես մասնակից, այս մրցութային գործընթացին համաձայն հրավերի 3.3 կետի չենք ներկայացնում մեկից ավելի հայտ,
6. Մենք հասկանում ենք, որ սույն հայտն ընտրվելու դեպքում պարտավորեցնող պայմանագիր է մեր միջև՝ մինչև պաշտոնական պայմանագրի պատրաստումն ու կնքումը:

1) Մասնակցի անվանում՝	*[նշել մասնակցի իրավաբանական անվանումը], կամ [համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում՝ նշել յուրաքանչյուր անդամի իրավաբանական անվանումը]*
2) Իրավաբանական հասցե՝	[նշել մասնակցի իրավաբանական հասցեն գրանցման երկրում], կամ [համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում՝ նշել յուրաքանչյուր անդամի իրավաբանական հասցեն գրանցման երկրում]
3) Գործունեության հասցե (եթե տարբեր է)՝	[նշել մասնակցի գործունեության հասցեն գրանցման երկրում], կամ [համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում՝ նշել յուրաքանչյուր անդամի գործունեության հասցեն գրանցման երկրում]
4) Հարկ վճարողի հարկային համար՝	[նշել մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը], կամ [համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում՝ նշել յուրաքանչյուր անդամի հարկ վճարողի հաշվառման համարը]
5) Հեռախոսի համարներ՝	
6) Էլ. փոստի հասցե՝	
7) Կայք՝	
8) Մասնակցի լիազոր ներկայացուցչի՝ Անուն ազգանուն, պաշտոն՝ Կոնտակտային տվյալներ՝	
Կցվում են հետևյալ բնօրինակ փաստաթղթերի պատճենները ☐ Կազմակերպության գրանցման փաստաթղթերը ☐ ՀԳ-ի դեպքում՝ ՀՁ համաձայնագիրը:	

Մասնակցի ղեկավարի անուն ազգանունը՝	

Մասնակցի ղեկավարի պաշտոնը՝	
Վերը նշված անձի ստորագրությունը	
Ստորագրման ամսաթիվը՝	

Հավելված 2.1

CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Կազմակերպության տվյալները		
1.	Անվանում	
2.	Գրանցման/իրավաբանական հասցե	
3.	Գործունեության հասցե (եթե տարբեր է)	
4.	Հեռախոսահամար	
5.	Էլեկտրոնային փոստի հասցե	
6.	Կայք	
7.	Հայտարարագիրը ներկայացնող անձի Անուն, Ազգանուն, Պաշտոն Հեռ., Էլ-փոստ	
8.	Գործադիր մարմնի ղեկավարի/-ների (ով մասնակցի հիմնադիր (կանոնադրություն) փաստաթղթերի համաձայն ունի ստորագրման իրավունք) Անուն, Ազգանուն, Պաշտոն Հեռ., Էլ-փոստ	
9.	Արդյո՞ք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ կազմակերպությունը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում	Այո □ Ոչ □
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿԱԶՄԸ		
10.	Համատեղ հիմնադրված	Այո □ Ոչ □
	Եթե այո, ներկայացնել մանրամասներ՝ նշելով 20% կամ ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի վերաբերյալ տեղեկություններ.	
	Անուն, Ազգանուն/ Անվանում / **Քաղաքացիություն /գրանցման երկիր** / **Ծննդյան ամսաթիվ/ պետական գրանցման ամսաթիվ** / **Անձնագրի սերիա, համար/ պետական գրանցման համար** / **Բաժնետոմսերի քանակ**	
	Մասնավոր	Այո □ Ոչ □
	Եթե Այո, լրացնել 20% կամ ավելի բաժնեմաս ունեցող բաժնետերերի վերաբերյալ տեղեկություններ.	

	Անուն, Ազգանուն/ Անվանում	Քաղաքացիություն/գ րանցման երկիր	Ծննդյան ամսաթիվ/ պետական գրանցման ամսաթիվ	Անձնագրի սերիա, համար/ պետական գրանցման համար	Բաժնետոմսե րի քանակ

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Լրացնել կազմակերպության գործադիր մարմնի անդամների վերաբերյալ տեղեկություններ.

Անուն, Ազգանուն	Քաղաքացիություն	Ծննդյան ամսաթիվ	Անձնագրի սերիա համար	Պաշտոն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ[†]

12. Արդյո՞ք կազմակերպության սեփականատերերի կամ գործադիր մարմնի կազմում առկա են քաղաքական ազդեցություն ունեցող անձինք: Այո □ Ոչ □

Եթե Այո, տրամադրել հավելյալ տեղեկատվություն.

Անուն, Ազգանուն	Քաղաքացիություն	Ծննդյան ամսաթիվ	Անձնագրի սերիա, համար	Պաշտոն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[‡]

13. Արդյո՞ք կազմակերպության սեփականատերերի կամ գործադիր մարմնի կազմում առկա են ՀՀ ԿԲ աշխատակիցների հետ փոխկապակցված անձինք: Այո □ Ոչ □

Եթե Այո, տրամադրել հավելյալ տեղեկատվությունը.

Անուն, Ազգանուն	Քաղաքացիություն	Ծննդյան ամսաթիվ	Անձնագրի սերիա, համար	Պաշտոն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14. 1. Ես՝ ———————— ———————— ———————————— ս, հանդիսանալով ————————————————

[†] Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումը նախատեսված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին: ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի 25-րդ կետով:

[‡] Փոխկապակցված անձիք են համարվում ընտանիքի անդամները, կամ նրանց հետ սերտորեն փոխկապակցված անձիք: Ընտանիքի անդամ են համարվում նրա հետ արյունակցական կապ ունեցող անձիք, ամուսինը կամ քաղաքացիական ամուսնության կարգով համատեղ բնակվող անձը: Սերտորեն փոխկապակցված անձիք են համարվում անձի հետ սոցիալական կամ մասնագիտական կապեր ունեցող անձիք (օր. ընկեր, կոլեգա և այլն):

	(անուն, հայրանուն, ազգանուն) (անվանումը) կազմակերպության ——————— հայտարարում եմ, որ նշված իրավաբանական (կարգավիճակը) անձի իրական շահառու է հանդիսանում՝ [redacted] (անուն, ազգանուն) ա) ———————————————— գ) ———————————————— (ծննդյան ամսաթիվ) (քաղաքացիություն) բ) ———————————————— (անձնագրի սերիան/համարը)
	2. Սույն հայտարարության 1-ին կետում նշված անձը իրական շահառու է հանդիսանում հետևյալ հիմք(եր)ից որևէ մեկով՝ ☐ իրականում գործում է իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ ☐ փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ ԿԲ-ի հետ գործարար հարաբերության նկատմամբ, կամ ☐ քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից: ☐ Արդյոք առկա է իրական շահառուի և ՀՀ ԿԲ որևէ աշխատողի հետ փոխկապակցվածություն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ		
1.	Արդյո՞ք կազմակերպությունն ունի համապատասխանության ծառայություն:	Այո □ Ոչ □
	Եթե այո, նշեք կոնտակտային տվյալները՝ Անուն, ազգանուն Պաշտոն Հեռ. Էլ-փոստ	
2.	Արդյո՞ք կազմակերպությունն ունի ընթացակարգեր ուղղված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի միջազգային պատժամիջոցների ցանկերով սահմանված պահանջների պահպանմանը:	Այո □ Ոչ □
3.	ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի ո՞ր միջազգային ցանկերն են օգտագործվում կազմակերպության կողմից:	
4.	Ի՞նչ եղանակով են իրականացվում համադրումները սույն հարցաշարի 3-րդ կետում նշված ցանկերի հետ:	Ավտոմատ □ Ոչ ավտոմատ □
5.	Արդյո՞ք կազմակերպությունը, այդ թվում՝ մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, դուստր ընկերություններ ծավալում են	

	գործունեություն ՓԼ/ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային համարվող երկրներում[§]:	
6.	Արդյո՞ք կազմակերպությունն ունեցել է գործարար հարաբերություն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի միջազգային պատժամիջոցների ցանկերում ներառված ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:	Այո □ Ոչ □
	Եթե այո, խնդրում ենք ներկայացնել մանրամասն տեղեկություններ գործարար հարաբերության բնույթի, այդ թվում՝ ստացված շահույթի, գործարքների տեսակների վերաբերյալ:	

Հավաստում եմ, որ սույն հայտարարագրում լրացված տեղեկությունները ճիշտ են և համապատասխանում են իրականությանը:

Անուն ազգանունը՝	
Ստորագրություն	
Ստորագրման ամսաթիվը՝	

§ Որպես բարձր ռիսկային անհրաժեշտ է դիտարկել ՖԱԹՖ կողմից հրապարակվող բարձր ռիսկային երկրների ցանկը:

Հավելված 3

CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

[Նշում. կապույտ գույնով շեղ տառերով ներկայացված ամբողջ տեքստը նախատեսված է սույն ձևաթղթի լրացման համար և պետք է հեռացվի վերջնական տարբերակից:]

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով CBA-2026-001 ծածկագրով բաց մրցույթի հրավերը՝ _____[Մասնակցի անվանումը]_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոնշյալ ընդհանուր գներով.

[Ֆինանսական առաջարկը պետք է ներառի ծրագրի իրականացման ընդհանուր արժեքը, ինչպես նաև իրականացումից հետո հինգ տարվա ընթացքում սպասվող ծախսերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ծրագրային ապահովման և ծրագրային լիցենզիաների արժեքը, շարունակական տեխնիկական աջակցության և սպասարկման ծախսերը, ինչպես նաև Տեխնիկական առաջադրանքով պահանջվող ցանկացած այլ անհրաժեշտ ծախս, որոնք ձևավորվում են Հավելվածներ 3.1 և 3.2-ի համակցված ընդհանուր գումարների հիման վրա:
ՀՀ ռեզիդենտ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ՀՀ դրամով համաձայն Հրավերի 4.2 կետի: Գնային առաջարկը ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակցի կողմից կարող է ներկայացվել ԱՄՆ դոլարով կամ եվրոյով: Այս դեպքում գնահատման և համեմատության նպատակով արտարժույթով գնային առաջարկը փոխարկվում է ՀՀ դրամի՝ ՀՀ Կենտրոնական բանկի «www.cba.am» պաշտոնական կայքում հայտերի բացման օրվա դրությամբ հրապարակված փոխարժեքով: Ընդ որում, ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակցի հետ պայմանագիր կարող է կնքվել ԱՄՆ դոլարով կամ եվրոյով: ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում առաջանում է շահութահարկ, որի դրույքաչափը կազմում է պայմանագրի գնի քսան (20) տոկոսը և ենթակա է վճարման Պատվիրատուի կողմից: Շահութահարկի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ Պատվիրատուի և Մասնակցի երկրների միջև կրկնակի հարկումը բացառելու համապատասխան համաձայնագրի առկայության դեպքում, որի վերաբերյալ ընտրված մասնակիցը պայմանագրի ստորագրման օրվանից տասն (10) օրվա ընթացքում ներկայացնում է իր երկրի հարկային մարմնի կողմից տրված ռեզիդենտության վկայական:Եթե տվյալ մատակարարի համար առաջանում է շահութահարկի վճարման պարտավորություն, ապա գնային առաջարկների համեմատությունն իրականացվում է՝ այդ հարկը ներառած ընդհանուր արժեքով:]

Չափա-բաժինի համարը	**Գնման առարկան**	**Արժեք ՀՀ դրամ, EUR կամ USD** */ տառերով և թվերով/*	**ԱԱՀ ՀՀ դրամ, EUR կամ USD (եթե կիրառելի է)** */տառերով և թվերով/*	**Ընդհանուր գինը ՀՀ դրամ, EUR կամ USD** */տառերով և թվերով/*
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1		{ թվերով }	{ թվերով }	{ թվերով }
		{ տառերով }	{ տառերով }	{ տառերով }

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը ստորագրությունը

Կ.Տ

«ՑԱՆԿԱԼԻ» ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

[Այստեղ պետք է ներկայացվեն «Ցանկալի» նշմամբ պահանջների գները]

Nr.	Գնման առարկան	Արժեք ՀՀ դրամ, EUR կամ USD */գրառերով և թվերով/*	ԱԱՀ ՀՀ դրամ, EUR կամ USD (եթե կիրառելի է) */գրառերով և թվերով/*	Ընդհանուր գինը ՀՀ դրամ, EUR կամ USD */գրառերով և թվերով/*
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1.				
2.				
3.				
...				

«Ցանկալի» պահանջների գնառաջարկը կարող է դիտարկվել հետագա պայմանագրի շրջանակում՝ կախված բյուջեից և անհրաժեշտությունից:

Հավելված 3.1

CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

Նշում. կապույտ գույնով շեղ տառերով ներկայացված ամբողջ տեքստը նախատեսված է սույն ձևաթղթի լրացման համար և պետք է հեռացվի վերջնական տարբերակից:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԲԱՑՎԱԾՔ

(Համակարգի ներդրման ծախսերի աղյուսակ ներառյալ 1 տարվա երաշխիքային սպասարկումը)

Մասնակիցը ներկայացնում է համակարգի մատակարարման և ներդրման մանրամասն բացվածք, որում պետք է մանրամասն ներկայացնել առաջարկվող յուրաքանչյուր բաղադրիչի միավորի և ընդամենը գները, ինչպես նաև վճարման պայմանները, ժամանակացույցը և կարգը:

Հ/հ	Անվանում	Հակիրճ նկարագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին ներառյալ ԱԱՀ (եթե կիրառելի է) /ՀՀ դրամ, EUR կամ USD/	Ընդամենը գին ներառյալ ԱԱՀ (եթե կիրառելի է) /ՀՀ դրամ, EUR կամ USD/
1	*2*		*3*	*4*	*5*	*6=4x5*
1.						
2.						
...						

Երաշխիքային սպասարկման մանրամասն պայմանները՝_____

Վճարման կարգը՝ _____

Վճարման պայմանները՝ _____

[Կանխավճարի պահանջ առաջարկելու դեպքում կարող է վճարվել իրականացման ընդհանուր արժեքի մինչև 25%-ի չափով կանխավճար:]

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

Հավելված 3.2
CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

Նշում. կապույտ գույնով շեղ տառերով ներկայացված ամբողջ տեքստը նախատեսված է սույն ձևաթղթի լրացման համար և պետք է հեռացվի վերջնական տարբերակից:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԲԱՑՎԱԾՔ

Համակարգի ներդրումից հետո ակնկալվող ծախսերը (ներառյալ դրանց հետերաշխիքային սպասարկման, ուղեկցման և այլ անհրաժեշտ ծախսերը) 5 տարիների կտրվածքով՝ հաշվի առնելով առնվազն մեկ տարի երաշխիքային սպասարկման պայմանը, ինչպես նաև վճարման պայմանները, ժամանակացույցը և կարգը:

Հ/հ	Անվանում	Տարեկան գինը սպասարկման ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար					Ընդհանուր գինը
		Տարի 1	Տարի 2	Տարի 3	Տարի 4	Տարի 5	*ՀՀ դրամ,EUR կամ USD*
1	.....						
2	.....						
3	.....						
4	.....						
Տարեկան ենթագումարներ							
ԱԱՀ /ՀՀ դրամ, EUR կամ USD/ - եթե կիրառելի է							
Ակնկալվող ծախսերի կումուլյատիվ ընդհանուր գներ							

Վճարման պայմանները, ժամանակացույցը և կարգը՝ _____

Հետերաշխիքային սպասարկման մանրամասն պայմանները՝_____

_____ _____
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ.Տ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

Հավելված 4

CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ

_____[Մասնակցի անվանումը]_____-ն CBA-2026-001 ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող համակարգի և համակարգի տեխնիկական սպասարկման և աջակցման ծառայությունների ամբողջական նկարագիրը համաձայն սույն հրավերի Հավելված 1-ի ներկայացված պահանջներին համապատասխան.

[Մասնակիցը տեխնիկական առաջարկում պետք է մանրամասն նկարագրի Տեխնիկական առաջադրանքով պահանջված ողջ տեղեկատվությունը:]

Ի լրումն Հավելված 4-ի,մասնակիցը պետք է ներկայացնի վերջնական լրացված XLS ֆայլը:

CBA-2026-001_Պահանջներ.xlsx

Հավելված 5
CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի «Մասնագիտական փորձառության» վերաբերյալ

[Առնվազն 3 տարվա փորձ ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման ավտոմատացման և առաջադեմ վերահսկողական տեխնոլոգիական (SupTech) լուծումների ներդրման բիզնեսում՝ որպես գրանցված ընկերություն/սուբյեկտ: Նմանատիպ համակարգերի ներդրման հաջող փորձ այլ կարգավորող մարմիններում՝ պահանջվող չափանիշներին (օրինակ՝ FATF 40 առաջարկություններին) համապատասխան]

№	Գործընկեր կազմակերպության անվանումը	Աշխատանքի տեսակը (էսքիզային նախագծի մշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, կամ երկուսը միասին)	Պայմանգրի իրականացման ժամկնակա-հատվածը	Պայմանագրի արժեքը /ՀՀ դրամ/	Գործընկեր կազմակերպության կոնտակտային
1.					Անուն Ազգանուն՝ Պաշտոն՝ Հեռախոսահամար Էլ. փոստ՝
2.					Անուն Ազգանուն՝ Պաշտոն՝ Հեռախոսահամար Էլ. փոստ՝
3.					Անուն Ազգանուն՝ Պաշտոն՝ Հեռախոսահամար Էլ. փոստ՝

** Որպես ապացույց ներկայացվում է կազմակերպության պորտֆոլիոն, հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով ներդրված համակարգերի մասին տեղեկատվություն՝ ներառելով պատվիրատուի գործունեության ոլորտը, իրականացման ժամկետները և ծավալը: Մասնակիցը ներկայացնում է նախկին պատվիրատուների կողմից տրամադրված երաշխավորության նամակ այն մասին, որ համակարգը հաջողությամբ ներդրված է, գործում է և համապատասխանում է պահանջվող չափանիշներին:*

Հավելված 6

CBA-2026-001 ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի «Աշխատանքային ռեսուրսների» վերաբերյալ

[Մասնակիցը պետք է հատկացնի համապատասխան անձնակազմ՝ պահանջվող առաջադրանքները կատարելու և Պայմանագրի նպատակներին ժամանակային և որակային առումներով հասնելու համար: Նախագծի իրականացման համար ներգրավված անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում , աշխատանքային փորձ (առնվազն 5 տարի), նմանատիպ նախագծեր իրականացնելու հմտություններ և ապահովի աշխատանքների իրականացման բարձր որակ: Մասնակիցը պետք է տրամադրի փորձագետների թիմ, որը տիրապետում է AML/CFT համապատասխանության, կարգավորող հաշվետվությունների, ծրագրային ինտեգրման, կիբերանվտանգության և համակարգի աջակցության ոլորտներին:]

N	Անուն	Դեր/ Պաշտոն	Հիմնական գործառույթներ	Կրթություն կամ համապատասխան ոլորտի որակավորում	Ընդհանուր տարիների փորձ	Որից մասնակցի կազմակեր-պությունում
1.						
2.						
3.						

** Որպես ապացույց՝ ներկայացվում է հիմնական փորձագետների ինքնակենսագրականները (այդ թվում՝ որակավորումները հավաստող փաստաթղթերը), որտեղ հստակ պետք է նշվի համապատասխան աշխատանքային փորձը՝ համապատասխան տարիներով: Թիմի անդամները պետք է առնվազն տիրապետեն անգլերենին (ցանկալի է նաև ռուսերեն):*

Թեկնածուի տվյալներ

Պաշտոն		**Թեկնածու** **□ Հիմնական □ Փոխարինող**	
Անձնակազմի վերաբերյալ տեղեկություններ	**Անուն**		**Ծննդյան ամսաթիվ**
	Կրթություն, մասնագիտական որակավորումներ, վերապատրաստում/սերտիֆիկացում, ներառյալ՝ հաստատությունները, մասնագիտացման ոլորտները և այլն*:		
	Դիպլոմներ/ Վկայականներ և այլն	**Շնորհման տարին**	**Համալսարան/այլ**
Ներկայիս աշխատանքը	**Գործատուի անվանումը**		
	Գործատուի հասցեն		
	Հեռախոս, էլ. փոստ		
	Ներկայիս գործատուի մոտ աշխատանքային տարիները		

* Պետք է ներկայացնել դիպլոմների, հավաստագրերի պատճենները

Ներկայացնել մասնագիտական փորձը՝ հակադարձ ժամանակագրական հաջորդականությամբ:

Սկիզբ	Ավարտ	Ընկերություն / Նախագիծ / Պաշտոն / Համապատասխան տեխնիկական և կառավարման փորձ